

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ  
ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Э. Б. А Г А Я Н

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ  
И ЭТИМОЛОГИЧЕСКИЕ  
ИССЛЕДОВАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱ

ՀՐ. ԱՏԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ


Է. Բ. Ա. ՂԱՅԱՆ

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ

ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

A 54028





Ա Ռ Ա Զ Ա Ֆ Ա Ն

Բառաֆննությունը հայ (ինչպես և հին գրավոր հուշարձաններ ունեցող ամեն մի ժողովրդի) բանասիրության և լեզվաբանության միջակա գիտական բնագավառ է, կամ, ինչպես այժմ ընդունված է ասել՝ միջգիտակարգ: Մեր մատենագրությունն սկիզբ է առնում հինգերորդ դարից, բայց մեզ չի հասել այդ դարի ոչ մի ձեռագիր հուշարձան. մեր ամենահին ձեռագիրը 9-րդ դարից այն կողմ չի հասնում: Դարերի ընթացքում ընդօրինակվելով ու վերաբնդօրինակվելով բազմաթիվ արտագրություններով, հին գրական հուշարձանները հասել են մեզ առավել կամ պակաս աղավաղումներով, սխալագրություններով, համառոտումներով, իսկ երբեմն էլ՝ արտագրողների կողմից կատարված հավելումներով: Հասկանալի է, որ մեր բանասերները, հրատարակելով այս կամ այն հեղինակի գործը, տարբեր ձեռագրերի համեմատությամբ, ինչպես և ձեռագրագիտական ու լեզվաբանական բազմակողմանի ֆննությամբ ձգտում են վերացնել այդ աղավաղումները, և, ըստ հնարավորին, վերականգնել հրատարակվող գործի հեղինակային բնագրին հարազատ տեքստը: Եվ սակայն, հակառակ բոլոր ջանքերին, հրատարակվող մատենագրական հուշարձանների մեջ մնում են առեղծվածային բառեր ու բառաձևեր, աղավաղված գրչություններ, որոնք և հատուկ ֆրննությունների առարկա են դառնում: Հենց դրանով է զբաղվում հայկական բառաֆննությունը: Լեզվաբանական ու ձեռագրագիտական-բանասիրական հատուկ ուսումնասիրությամբ



պարգել մեր հին մատենագրության այս կամ այն հուշարձանի մեջ հանդիպող անհասկանալի, բացառիկ գործածությունն ունեցող բառերի ու բառակապակցությունների իսկությունը կամ ոչ իսկությունը, զանազան աղբյուրների զուգադրությամբ նշգրտել աղավաղված բառերի ու բառակապակցությունների ձևը կամ բացահայտել բուն իմաստը, մի խոսքով՝ որոշել մեր հին մատենագրության մեջ հանդիպող այն բառերի ու բառակապակցությունների իսկությունը, իրական ձևն ու իմաստը, որոնք այս կամ այն պատճառով անստույգ կարող են համարվել, — ահա այս է հայկական բառաֆենոլոգիան հիմնական խնդիրը: Մեր դասական բանասիրության ներկայացուցիչները (Հ. Անառյան, Ստ. Մալխասյանց, Հ. Մանանդյան, Ն. Բյուզանդացի, Գ. Տեր-Մկրտչյան, Հ. Ակիմյան, Հ. Վարդանյան և շատ ուրիշներ) հսկայական գործ են կատարել այս ուղղությամբ և բազմաթիվ նշգրտումներ կատարել մեր հին մատենագրության հուշարձանների տեքստերում: Շարունակելով դասական բանասիրության ավանդույթները, մեր բանասիրության արդի սերունդի ներկայացուցիչները, հատկապես վերջին տարիներում, նույնպես սկսել են այս բնագավառով զբաղվել և, ուրախալի է նշել, որ ֆաշալերիչ արդյունքների են հասել:

Առանձնապես պետք է նշել այն փաստը, որ մեր հին ձեռագիր հուշարձանների գիտական հրատարակությունները վերջին մի քանի տասնամյակներում մեծ նշանակություն են ունեցել այդ տեսակետից, ըստ որում ամեն մի հին ձեռագրի հրատարակության պատրաստելն անխուսափելիորեն ենթադրում է բառաֆենոլոգիական վիթխարի աշխատանք (տարբերակների ընտրություն, նշգրտումներ, տարբերակների համեմատական ֆենոլոգիան և այլն, և այլն), այնպես որ, կարելի է ասել, թե ամեն ոք, որ հրատարակության է պատրաստում որևէ հին ձեռագիր հուշարձան, արդեն իսկ ըզբաղվում է բառաֆենոլոգիայով: Զբաղվելով գրաբարի ուսումնասիրությամբ, մասնավորապես գրաբարի գիտական ֆենոլոգիան ստեղծելու աշխատանքին լծվելով, մենք

նույնպես հարկադրված ենք եղել անդրադառնալ բառաբան-  
նության բնագավառին և հրատարակել բառաբանական դիտո-  
ղություններ մեր բանասիրական հանդեսներում. այդ բա-  
ռաբանական հետազոտություններն այս գրքի մեջ ներառելով՝  
հանձնում ենք մասնագետների ուշադրությանը:

\* \*

Ստուգաբանությունը լեզվի ուսումնասիրության մի բա-  
ժինն է, որ զբաղվում է լեզվական միավորների ծագման,  
նրանց նախնական ձևի և իմաստի, լեզվական դերի ու գոր-  
ծառության և դրանց հետագա զարգացման ու փոփոխու-  
թյունների լուսաբանությամբ: Դա նշանակում է, թե ստու-  
գաբանությունը, իբրև գիտական հետազոտությունների բը-  
նագավառ, գործ ունի բառարմատների, ածանցների ու ֆե-  
րականական ձևորդների հետ և ձգտում է պարզել դրանց ծա-  
գումն ու զարգացման ընթացքը՝ պատմական մոտեցումով:  
Պատմական հայեցակետը գիտական ստուգաբանության  
հիմքն է կազմում: Չի կարող լինել ստուգաբանություն, ա-  
ռանց ստուգաբանվող միավորների պատմական ֆենոթյան:  
Լեզվական ամեն մի միավոր լեզվի զարգացման ընթացքում  
կրում է իմաստի, ձևի և գործառության փոփոխություններ,  
որոնց հետևանքով փոխվում են բառի կազմը, բաղադրիչ-  
ների փոխհարաբերությունը, իմաստը և այլն: Իսկ դա նշա-  
նակում է, թե յուրաքանչյուր լեզվական միավորի ստուգա-  
բանություն պահանջում է ամենից առաջ այդ միավորի պատ-  
մական ֆենոթյուն, նրա նախնական իմաստի, ձևի, լեզվա-  
կան գործառության պարզում: Այսպես, օրինակ, *հատակ*  
բառը մեր արդի լեզվում պարզ բառ է և բառակազմական բա-  
ղադրիչների բաժանվել չի կարող, թեև նրա *-ակ* մասը կարող  
ենք նույնացնել այնպիսի բառերի *-ակ* ածանցի հետ, ինչպի-  
սիք են *հարթակ*, *լժակ* և այլն, իսկ *հատ-* (գրաբարյան *յատ-*)  
մասը նույնացնել *հատել* արմատի հետ: Այս նույնացումը  
սակայն մեզ չէր բացատրի *հատակ* բառի կազմությունը,  
որովհետև մենք ուղղակի կապ չենք կարող գտնել *հատել*

«կարել» և *հատակ* «գետին» իմաստների միջև: Այլ է պատկերը, երբ մենք դիմում ենք գրաբարին և նրա միջոցով էլ՝ ավելի վաղ շրջանի լեզվական իրողություններին: Այդ դեպքում պարզվում է, ամենից առաջ, որ գրաբարյան *յատանել* բառի *յատ* արմատի նախնական իմաստն է եղել «հարվածելով կտրել, կտրելու համար հարվածել»․ այնուհետև հնարավոր է դառնում ընդհանուր լեզվաբանական տվյալներից ելնելով պարզել, որ շատ լեզուներում *հատակ*, *գետին* նշանակող բառերը ծագել են «խփել, հարվածել» իմաստով բառերից՝ իբրև «հարվածելով հարթեցնել՝ տափակացնել, ամրացնել» (հմմտ. լատիներեն *pavimentum* «գետին, հատակ», որ կազմվել է «խփել, հարվածել» նախնական արմատից, հայերեն *տափ*, որի բնիմաստն է «խփել, հարվածել» և այլն), և այս բոլորից եզրակացնել, որ մեր հատակ բառն էլ, իրոք, կազմվել է *յատանել* բառի *յատ* արմատից՝ *-ակ* ածանցով և նախապես նըշանակել է հարվածելով՝ խփելով հարթացրած ու ամրացրած տեղ: Այս մեկ բառի պատմությունը քելադրում է, իր հերթին, նույն արմատի հետ կապված տարբեր լեզվաբանական միավորների պատմությունը: Նախ՝ գրաբարյան *յատ* արմատի մյուս ձևն է *հատ*․ այս արմատից ունենք մի կողմից *դ-ատ*, որ կազմվել է *դ* նախդիրով և նախահունչ *հ*-ի անկումով. նույն. առանց *հ*-ի ձևն ունենք բարդությունների մեջ, որից ստացվել է *-ատ* ածանցը, այսինքն՝ անկախ բառարմատը՝ գործածվելով բաղադրությունների վերջին եզրում և զրկվելով *հ*-ից, վերածվել է ածանցի: Վերջապես, նույն *յատ/հատ* արմատի զուգահեռն են կազմում *ա*-ի փոխարեն *աւ* երկբարբառն ունեցող *յատ/հատ* արմատները (հմմտ. հատոց/հոտոց—յատոց/յոտոց և հատոց/յատոց)․ այս զուգահեռ ձևերը՝ նախահունչ *հ*-ով և *յ*-ով, հնարավոր է դառնում բացատրել *դ-ատ* բառով, որի մեջ *հ*-ն ընկել է *դ*-ից հետո. կարելի է ընդունել, որ նույնպիսի նախդրավոր կազմություն ունի նաև *յատ* տարբերակը՝ կազմված *ի* նախդիրով, որը թույլ արտասանվող *հ*-ից առաջ վերածվել է *յ*-ի (ինչ որ շատ սովորական է մեր հին ձեռագրերում), իսկ այս *յ*-ից հետո էլ *հ*-ն ընկել է (*\*յհատ*—

տել>յատել), ինչպես որ զ-ից հետո է ընկել: Այսպիսով, մեկ բառի պատմական ֆնեոլոգիան երևան է բերում իմաստային (խփել → կտրել → առանձնացնել → հատակ) բազմաթիվ անցումներ, ձևական փոփոխություններ (հատ>յատ, առ) և գործառական փոխանցումներ (հատ արմատ, -ատ ածանց): Լեզվական միավորների այսպիսի պատմական ֆնեոլոգիամբ տվյալ միավորի (կամ միավորների) նախնական իմաստը, ձևը և գործառությունը բացահայտելով միայն կարելի է ըզբաղվել դրանց ստուգաբանությամբ: Սակայն պատմական ֆնեոլոգիան ղեկս բավական չէ ստուգաբանության համար: Ամեն մի ստուգաբանություն հենվում է մի կողմից պատմական իմաստաբանության, մյուս կողմից՝ պատմական հրնշյունաբանության վրա: Պատմական իմաստաբանությունը, լայն առումով, գիտություն է լեզվաբանական միավորների պատմականորեն կրած փոփոխությունների, դրանց ընդհանուր օրինաչափությունների մասին, այդ փոփոխությունները պայմանավորող օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների մասին: Իբրև այդպիսին, պատմական իմաստաբանությունը, կարելի է ասել, համապարփակ գիտություն է: Լեզվի բառերը մարդկանց գիտակցության մեջ ձևավորվող հասկացությունների ու դրանց նյութական ձևի միասնությունն են. իրենց իմաստներով բառերն արտացոլում են մարդու նաևաչողական գործունեությամբ օբյեկտիվ ու սուբյեկտիվ իրողությունների (երևույթների, առարկաների, հարաբերությունների և այլնի) մասին հասկացությունները, ինչպես և սուբյեկտիվ վերաբերմունքը դրանց նկատմամբ: Ինքնին հասկանալի է, որ մարդկային նաևաչողության նախնական աստիճաններից մինչև արդի մակարդակի զարգացումը փոխվել են մարդու պատկերացումները իրեն շրջապատող իրերի ու երևույթների և իր հետ կապված, իրեն վերաբերող գործողությունների, իր մեջ տեղի ունեցող գործընթացների մասին, մի խոսքով՝ այն ամենի մասին, ինչը կարող է դառնալ մարդկային նաևաչողության առարկա: Ճանաչողության մեջ տեղի ունեցող փոփո-



խորքումն են առաջ են բերում հասկացությունների փոփոխություններ, որոնք իրենց արտացոլումն են գտնում բառիմաստի պատմական զարգացման ու փոփոխությունների մեջ: Սակայն բառիմաստի փոփոխությունները պայմանավորվում են ոչ միայն նաևաշողության զարգացմամբ. իրական կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, մշակույթի զարգացումը, կենցաղի ու սովորությունների, գաղափարախոսության, ֆաղափական կյանքի փոփոխությունները. սուրյեկտիվ պատկերացումները, մարդու հոգեկան գործունեության հետ կապված զանազան հանգամանքները, տնտեսական ու ֆաղափական հարաբերություններն ու դրանց պատմական փոփոխությունները և այլն, և այլն,—բառիմաստի փոփոխություններ առաջացնող գործոններ են, և գիտական ստուգաբանությունը պետք է հաշվի առնի այդ բոլոր հանգամանքներն ու դրանց առաջ բերած իմաստափոխությունները: Իսկ սրա համար անհրաժեշտ է շատ հանախս մրտովին փոխադրվել նախապատմական դարաշրջանները. բառիմաստի մասին դատողություններ անել հնադարյան մարդու պատկերացումների համաձայն, նյութական կուլտուրայի պատմության տվյալների հաշվառումով, ներլեզվական ու արտալեզվական իրողությունների ընձեռած տվյալների գիտական ֆնեություններով: Այսօրվա մարդու համար դրժվար թե հասկանալի լինի *կոր*, *կրունկ*, *կարթ*, *կեռ*, *կուռ*, *կոնակ*, *կորի*, *կուր* «նավակ, տաշտ», և *կրյա* բառերի կապը. սակայն, երբ լեզուների պատմության տվյալներն ուսումնասիրելով տեսնում ենք, որ հնադարյան մարդիկ մարմնի մասերի, կենդանիների ու առարկաների անվանումները տվել են արտաֆին ձևի աչքի զարեող որևէ հատկանիշով, ապա հասկանալի է դառնում, թե ինչպես *կոր* «ձուռ, կյուր» բառից կարող էր ստացվել *կրունկ*, *այա-նուլ* «ուռչել» արմատից՝ *այա* «թուշ (այսինքն՝ «ուռած, ուռուցիկ») և այլն, և այլն: Պատմական բառագիտությանը և, մասնավորապես՝ իմաստաբանությանն անտեղյակ մարդու համար անըմբռնելի և նույնիսկ ծիծաղելի կարող է թվալ, եթե լսի, որ ռուսերեն *король* «բա-

գավոր», зрелый «հասուն», գերմաներեն Kerl «տղամարդ, կտրին». հայերեն *ծեր* և, վերջապես, ռուսերեն кролик «նագար» միևնույն հնդեվրոպական արմատից և միևնույն բնիմաստից են ծագում: Սակայն երբ իմանում ենք, որ այդ բոլոր բառերը ծագում են հնդեվրոպական նախնական ընդհանուր ց'եր «ծերություն, ծերանալ» արմատից, և այդ արմատի պատմականորեն կրած իմաստային փոփոխություններն ենք երևան հանում, միանգամայն իրական ու համոզիչ են դառնում այդ՝ առաջին հայացքից անհավատալի թվացող զուգադրությունները: Այսպես, ծերանալ, ծերություն իմաստներն ինքնին նշանակում են նաև հասունանալ. մարդկանց վերաբերմամբ հասունանալ, հասակ առնելը՝ հասուն դառնալն է, ուստի և՛ հասուն մարդը, տղամարդը՝ ի հակադրություն պատանու, երիտասարդի. պտուղների վերաբերությամբ ծերանալը մի կողմից հասնելով լիակելը, փրտելն է (հմմտ. հունարեն *γεργέρειαι* «կաթուկ, շատ հասնելով ինքն իրեն ընկած պտուղ»), մյուս կողմից՝ հասնելը, հասունանալը (հմմտ. հունարեն *γέρωνος* «ծերանալ, հասնել»): Հասուն տղամարդ իմաստից զարգանում է ինքնին ուժեղ, ուժերը տեղը, կտրին իմաստը, որ արդեն երևան է բերում հին բարձր գերմաներեն karol «տղամարդ, կտրին» բառը: Այս բառից է կառույս (Karolos) հատուկ անունը, որը կառույս Մեծի սլավոնական արշավանքներից հետո սլավոնական լեզուներում վերածվեց հասարակ անվան՝ кароль «քաղավոր» նշանակությամբ (ինչպես Caesar հատուկ անունից՝ կայսր, царь), և վերջապես, սրանից էլ կազմվեց кролик «նագար» բառը՝ հետևյալ նանապարհով: Լատիներենում նագարը կոչվում էր cuniculus. այս բառը փոխառությամբ անցնելով գերմաներենին՝ դարձավ Küniglin «նագար», որը ժողովրդական ստուգաբանությամբ կապվեց նրմանահունչ Kōnig «քաղավոր» բառի հետ և ձևափոխությամբ դարձավ Kōnighase «քաղավոր-ա-նապաստակ», այսինքն՝ նագար. վերջապես, սրա պատեննումով էլ կազմվեց ռուսերեն

кролик (<корол-ик) «նագար», բարբ: Իմաստային այս բազմաթիվ փոփոխությունները միանգամայն օրինաչափորեն կապվում են մարդու հոգեկան գործունեության հետ՝ որպես զանազան զուգորդությունների արդյունք, սակայն մի ֆանիսն էլ սուկ պատահական զուգադիպությունների հետևանք են: Բացահայտորեն պատահական է այն, որ սլավոնների դեմ պատերազմող քազավորը կրել է Կառլոս անունը, որը սլավոնների մոտ դարձել է հասարակ անուն՝ корол «քազավոր», պատահական է այն, որ լատիներենից փոխառված cuniculus բարբ առաջին մասով նմանվել է գերմաներենի Kōnig «քազավոր» բառին, որ և ժողովրդական ստուգաբանությամբ cuniculus-ը Kōnig-ի հետ կապելու հիմք է հանդիսացել ու ձևափոխությամբ հանգեցրել նախ Kōniglin «քազավորիկ», ապա՝ «գերմանական ձևի ու կազմության» վերածելով՝ դարձրել Kōnighase, որից էլ պատեննվել է ռուսերեն кролик «նագար»-ը (ստուգաբանորեն՝ քազավորիկ): Այս բոլորը ցույց են տալիս, որ պատմական իմաստաբանությամբ զբաղվողը պետք է հաշվի առնի ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական, հանախ էլ բոլորովին պատահական բազմապիսի հանգամանքներ և այդ ամենի օգնությամբ ձգտի լուսաբանելու իմաստի զանազան անցումների պատմական ընթացքը: Եվ ֆանի որ գիտական ստուգաբանության հիմքն է կազմում պատմական իմաստաբանությունը, ապա պարզ է, որ ստուգաբանը յուրաքանչյուր ստուգաբանության դեպքում պետք է ելնի պատմական իմաստաբանության տվյալներից:

Եթե բովանդակության պլանում ստուգաբանը հենվում է պատմական իմաստաբանության վրա, ապա արտահայտության պլանի իրողությունների լուսաբանության ժամանակ նրա առաջնորդն է պատմական հնչյունաբանությունը: Յուրաքանչյուր լեզվի պատմական զարգացման ընթացքում նրա հնչյունական համակարգը ևս փոփոխությունների է ենթարկվում. տեղի են ունենում հնչյունների զանազան անցումներ, հնչյունական մանրահամակարգերի անհետացում կամ առա-

շացում: Հնչյունների պատմական փոփոխությունները ներկայացնում են օրինաչափ համապատասխանություններ հնի, նախնականի և նորի միջև: Որևէ նախնական հնչյունի հետագա համապատասխանությունները լեզվաբանության մեջ հնչյունական օրենք անվանումն են ստացել: Յուրաքանչյուր հնչյունի ամեն մի համապատասխանություն ժամանակային կամ տարածական հայեցակետով՝ մեկ հնչյունական օրենք է: Այսպես, օրինակ, հայերենի *հայ* բառն արդի գրական հայերենում ունի *հայ* ձևը, այսինքն՝ տվյալ բառում գրաբարյան *հ*-ն մնացել է *հ*, *ա*-ն՝ *ա*, և *յ*-ն *յ*. արանցից յուրաքանչյուրը մեկ հնչյունական օրենք է հին հայերեն—աշխարհաբար պատմական զարգացման գործընթացում (ժամանակային հայեցակետ): Նույն *հայ* բառը Ագուլիսի բարբառում դարձել է *հօյ*, այսինքն՝ այստեղ էլ ունենք  $h > h$ ,  $a > o$ ,  $y > g$  համապատասխանությունները, այլ կերպ՝ հնչյունական օրենքները, և քանի որ Ագուլիսի բարբառը, ինչպես և բոլոր մյուս հայերեն բարբառները ծագել են հին հայերենից, ապա այստեղ էլ ունենք ժամանակային հայեցակետի համապատասխանություններ: Այլ է պատկերը, երբ համեմատության մեջ ենք դնում Ագուլիսի բարբառի *հօյ* և Վանի բարբառի *խայ* ձևերը. այստեղ մենք ունենք  $h \rightarrow \chi$ ,  $o \rightarrow a$ ,  $y \rightarrow g$  համապատասխանությունները, որոնցից յուրաքանչյուրը նույնպես մեկ հնչյունական օրենք է, բայց ոչ թե ժամանակային, այլ տարածական հայեցակետով. բանն այն է, որ եթե հին հայերեն—արդի հայերեն, հին հայերեն—Ագուլիսի բարբառ զուգադրությունների մեջ ունենք նախնականի, հնագույնի և նրանից առաջացածի, նորի համապատասխանություն, ապա Ագուլիսի բարբառ—Վանի բարբառ զուգադրության մեջ համապատասխանություն կա տարածականորեն հակադրվող տարբերակների (զուգահեռաբար առաջացած և համագոյակցող բարբառների) միջև: Այս օրինակով մենք ցանկացանք պարզել ժամանակային և տարածական հայեցակետերի տարբերությունը, որ կարելի է ձևակերպել այսպես. միևնույն լեզվի տարբեր փուլերի՝ նախորդող և



հաջորդող փուլերի, իրողությունների զուգադրությունը ժամանակային, իսկ նույն լեզվի տարածական. համաժամանակյա տարբերակների իրողությունների զուգադրությունը տարածական հայեցակետն է ներկայացնում: Այս առումով էլ, ահա, տվյալ լեզվի որևէ հնչյունի թե՛ ժամանակային և թե՛ տարածական ամեն մի համապատասխանություն մեկ հնչյունական օրենք է: Սակայն, քանի որ տվյալ լեզվի ժամանակագրորեն համագոյակից տարբերակները ծագում են մեկ ընդհանուր, ավելի նախնական և բոլորի համար հիմք հանդիսացած համակարգից, ապա ինքնին հասկանալի է, որ ինչպես ժամանակային, այնպես էլ տարածական հրնչյունական համապատասխանությունները պատմականորեն ստեղծված համապատասխանություններ են և, հետևաբար, հնչյունափոխական պատմական օրինաչափություններ: Յուրաքանչյուր ստուգաբանություն, իբրև լեզվաբանական միավորի ծագման ու զարգացման պատմություն, հիմնվում է հնչյունական օրենքների վրա: Առանց հնչյունական օրենքների բացահայտման և դրանց գործադրության գիտական ստուգաբանություն չի կարող լինել, ուստի և ամեն մի ըստուգաբանության ժամանակ նշտորեն պետք է գործադրել տվյալ լեզվին հատուկ հնչյունական օրենքները ինչպես այդ լեզվի պատմական իրողությունների բնությունսմբ, այնպես էլ նախապատմական իրակությունների համեմատական ուսումնասիրությամբ: Այսպես, օրինակ, հայերեն բարբառներում, ինչպես և ժողովրդա-խոսակցական լեզվում, լայնորեն գործածվում է *թուշ* բառը գրական լեզվի *այտ* բառի փոխարեն. այդպիսի լայն գործածականությունը և ընդհանրությունը գրեթե բոլոր հայերեն բարբառների համար ենթադրել են տալիս, թե այդ բառը պետք է եղած լինի նաև հիմ հայերենում. հարց է առաջանում, ի՞նչ ձև կարող էր ունենալ այդ բառը հիմ հայերենում: Բնականաբար առաջին ենթադրելի ձևը կլինեք հենց *թուշ*. սակայն, ելնելով մեր լեզվի պատմական հնչյունաբանության տվյալներից, մենք կարող ենք ենթադրել նաև մի այլ ձև: Այսպես, գիտենք, որ հիմ

հայերենի *բշ* հնչյունակապակցությունից ընկել է *բ* հնչյունը, ինչպես՝ *խարշել* > *խաշել*, *քարշել* > *քաշել*, *կարշն* > *կաշն* (*կաշմբուռն* բարդության մեջ). այդ օրենքից ելնելով, կարող ենք ենթադրել, որ *թուշ* բառի հնագույն ձևն էլ եղել է *թուրշ*: Այսֆանը՝ հայերենի պատմական տվյալներով: Համեմատական ֆերականության տվյալներից էլ գիտենք, որ հայերենի *բշ* կապակցությունը ծագում է հնդեվրոպական *rs-*ից, *ու-*ն *ս-*ից կամ *օ-*ից, իսկ *թ-*ն՝ *տ-*ից կամ *th-*ից, ուստի և կարող ենք հանգեցնել *\*turs/\*tōrs* կամ *\*thurs/\*thōrs* նախաձևերին. սակայն հայտնի է նաև, որ հնդեվրոպական *rs-*ն կարող է տալ նաև հայերեն *ռ* (հմմտ. *\*tōrs* > *թառ-ամ* և *թարշ-ամ*). այս դեպքում էլ, ուրեմն, հենվելով նույն կանոնի վրա, կարող ենք ենթադրել, որ *թուրշ* ձևին զուգահեռ հին հայերենում պետք է եղած լինի նաև *թուռ* ձևը, որն իսկապես էլ ավանդված է գրաբարում *թուռս* հոգնակի հայցակառուցի ձևով և *թռալիք*, *հասկաթուռ* բարդություններում (մանրամասնությունները տե՛ս ստորև՝ § 43): Այս մի օրինակը արդեն բավական ենք համարում պատմական և համեմատական հնչյունաբանության տվյալներն ստուգաբանության մեջ կիրառելու մասին որոշ պատկերացում տալու համար: Կարևորն այստեղ այն է, որ հնչյունական օրենքների նշգրիտ գործադրությունը միայն կարող է գիտական արժեք տալ ստուգաբանությանը. ուր որ հաշվի չեն առնվում հնչյունական օրենքները, ուր որ համեմատությունները հիմնվում են պատահական նմանությունների վրա, ստուգաբանությունը դադարում է գիտական նշմարտություն լինելուց:

Առաջնորդվելով այս սկզբունքներով, տարիների ընթացքում աշխատել ենք ստուգաբանել հայերեն բազմաթիվ բառեր և հրապարակել գիտական պարբերականներում: Սույն գրքում ի մի ենք բերել այդ բոլորը և հանձնում ենք գիտական հասարակայնության ուշադրությանը: Հասկանալի է, որ ստուգաբանություններից մի քանիսը կարող են վիճելի կամ կասկածելի լինել, և մասնագետների ֆնդությունը կնպաստի դրանց նշգրտմանը:




## 1. ԱՂԱՏ, ԱՂԱՏԵԼ

Սուանձին գործածված արմատը նշանակել է «սեր, գուրգուրանք», իսկ բայը՝ «դառնորեն ողբալ»: Բարբառնե-րում գործածվում է՝ աղատ—աղատ «դառնագին, սրտաճըմ-լիկ», աղատ անել «գուրգուրալ», աղատով «աղիողորմ ձայ-նով», աղատով լինել «շատ սիրել, վրան գուրգուրալ», աղատ—պաղատ «աղաչանք—պաղատանք», աղատել «ա-ղերսել, աղաչել, պաղատել»: Ծագում է հնիւ. el-, ol- բնա-ձայն արմատից (Քօք. I, 306), որից են նաև հայերեն աղ—ալք, աղ—աչել, ող—ոբ, ողբ, եղեր/եղար բառերը: Ըստ այսմ՝ աղատ բառի արմատն է աղ-, իսկ —աա ածանց է (չենք բերում ցեղակից լեզուների համապատասխանություն-ներն ու զուգաբանությունները, որովհետև հայերեն աղալք, աղաչել, ողբ, եղեր/եղար բառերի՝ բոլորին հայտնի ստու-գաբանություններն արդեն բավական են սույն ստուգաբանու-թյունը հաստատելու համար):

## 2. ԱՂՈՒՆՔ/ԱՂՆ, ԵՂԾ, ԱՂԻՏ/ԱՂԵՏ, ԱՂՃԱՏ

Հին մատենագրության մեջ աղունք գործածվել է միայն հոգնակի ձևով՝ «աղետ, եղեոն» նշանակությամբ: ՆՃԲ եղա-կիի համար ենթադրում է աղուն ձևը, սակայն Հր. Աճառյանը ճիշտ կերպով ուղղում է աղն, հենվելով հոլովական ձևերի վրա (աղունք, աղունց, աղունս): Ծագում է հնիւ. el-, ol-, «փշաց-նել, ապականել, ոչնչացնել, կործանել» արմատից: Այդ արմատից է հայ. եղեոն բառը, ինչպես և՛ հուն. ἔλεος





(\* <նի-ր-րա) «փշացնել, ապականել», ὄλεσθαι «ռչնչացնել»: նույն արմատից ենք ծագած համարում եղծ «տձև, վատ, պակասավոր, փշացած», իբրև գոյական «հերքում, ջրնջում, ժխտում», որից՝ եղծանել (նաև՝ եղծել, եղծնուլ) «ավերել, փշացնել, ջնջել, ապականել»: Այս արմատի համար պետք է կանխադրել հնիս. արմատի՝ ց՝ աճականով \*elg՝-ձևը. թերևս այս արմատի հետ պետք էր կապել նաև աղէտ բառը, կանխադրելով ը-, օլ-ի աճած ձեւ/oleid ձևը: նույն արմատից է, վերջապես, նաև աղնատ, աղնատել, որի արմատն է աղ-, -ատ ածանցն է, իսկ ն-ն՝ աճական (հնիս. olgy-):

### 3. Ա.ՂԱԻՏ (Ա.ՂՕՏ)

Այս բառը հայերենի կենսունակ բառերից է, որ տալիս է նաև շատ բարդություններ և ածանցումներ, ինչպես՝ աղօտանալ, աղօտաշահ, աղօտերևակ, աղօտաճաճանչ, աղօտագոյն, աղօտատեսիլ և այլն, և այլն: Բառիս իմաստն է «կես մութ (լոյս), նսեմ, թույլ, տկար, ոչ պարզ, ոչ մաքուր»: Հայագետներից շատերը ճիշտ կերպով համարել են ածանցավոր՝ բաղադրված -աւտ (օտ)- ուտ մասնիկով, որ հաստատում և ընդունում է Հ. Աճառյանը: Այսպիսով՝ բառիս արմատն է աղ-, որ ծագում է հնիս. sal «կեղտոտ—մոխրագույն, մութ մոխրագույն» արմատից. ցեղակից լեզուներում ունենք հբգ. salo «պղտոր, մութ, մոխրագույն», անգլոսաքս. salu «կեղտոտ գույնով», ռուս. СОЛОВЬИЙ «բաց դեղին», հին բրետ. haloc «մռայլ, մթագույն», կիմր. halog «կեղտոտ» և այլն: Հնդեվրոպական արմատը կապված է sal,—sald «աղ» բառի հետ և փոխաբերաբար գործածվել է նաև ուռենու (որպես աղագոյն տերևներ ունեցող), ինչպես և թուքի համար, որ ցույց են տալիս լատ. saliva «թուք», salix «ուռենի», հբգ. sal (a) ha, մբգ. salha, անգլոսաքս. sealth, հիսլ. selja, բուլոն էլ՝ ուռենի նշանակությամբ: Ըստ այսմ՝

Հայերենն աղաւտ նախապես նշանակել է պղտոր, մոռալ, քշ  
հաւակ, որից և բխում են բոլոր մյուս իմաստներն ու գոր-  
ծածութիւնները:

#### 4. Ա Մ Ո Ղ

Քառիս արմատն է ոլ, իսկ ամ- ածանց է (հմմտ. ամ-  
ուսին, ամ-ործիք և այլն): Արմատը ծագում է հնիս. el-  
(elei-, lei), ol- (ōlen, olen) արմատից, որի նախնական  
իմաստն է «արմունկ, արմնկոսկր»: Յեղակից լեզուների մեջ  
բառը, բացի արմունկից, գործածւել է նաև մարմնի տարբեր  
մասերի համար, ստանալով նորանոր իմաստներ և նմանու-  
թյամբ անցել նաև զանազան գործիքների: Այդ արմատից  
են ծագել նաև հայերենն ուն «վիզ», ողն «ող, նաև՝ թի-  
կունք», իլ, իլիկ, ոլոխ: Ոլ-ը ծագում է արմատի պարզական  
ձևից՝ «ուս, բազուկ» նշանակութամբ և ամ- նախածանցով  
նշանակել է նախապես «ուսակից, բազկակից, զույգ»: Ամոլ  
բառի սեռականն է ամոլոյ կամ ամլոյ. այս երկրորդ՝ սղված  
ձևը ցույց է տալիս բառի մի երկրորդ ձև՝ ամ-ուլ, որ միան-  
գամայն համապատասխան է գալիս ուն բառին:

#### 5. Ա Ն Ց

Հայերենի շատ արգասավոր արմատներից է, որից, բա-  
ցի անցանել > անցնել, անցի բառերից և դրանց բազմաթիւ  
բարդութիւններից, յ, զ և առ նախդիրներով կազմւել են  
այժմ արդեն արմատների վերածված բառեր, ինչպես՝ յանց  
(յանցանել, յանցանի ևն), զանց (զանցանել, գերազանց ևն),  
առանց (առանցանել «բանդագուշել, զառանցել»), առանցիկ  
«առասպելական», առանցի ևն), զառանց (զառանցել, զա-  
ռանցական ևն): Արմատի նախնական իմաստն է «անցք,  
ճանապարհ, անցում, ընթացք», որից նաև՝ «նեղութիւն,  
դիպված, պատահար»: Ծագում է հնիս. sent- «ուղղվել, դի-  
մել, գնալ, ընթանալ, ընթացք, անցք, ճանապարհ» արմա-  
տից. ցեղակից ձևերն են. ավեստ. hant- «հասնել, հասցնել»,

հին իսլ. sēt կիմբ. hynt, բրետոն. hen «ճանապարհ», հին սաքս. sith «ճանապարհ, ուղղություն», անգլ. sid «ընթացք, ճանապարհորդություն, անգամ», գոթ. sinθ «երթ», ga-sinθa «ընկեր», sanđjan «ուղարկել», հին իսլ. senda «գնալ», sinni «ընթացք, ճամփորդություն», sinn, «անգամ», հին բարձր գերմ. sinnan «գնալ, ճամփորդել, գալ», sindōn «ճամփորդել», sinden «ուղարկել», լիտվ. siunėiù, լատիշ. sùtu «ուղարկել» և այլն (Պոկ., 908): Հայերենը ծագում է արմատի -sko մասնիկով աճած ձևից՝ ստորին ձայնդարձով (\*sŋ(t)-sko > անց): Նույն արմատից է ծագում նաև հայ. ընթանալ բառի ընթ- արմատը, որի համար Հր. Աճառյանը կանխադրում է \*senth նախածեք (\*senth > \*ինթ-անալ > ընթանալ):

## 6. ԱՆՈՒՐ, ԱՆԴՐՈՒԱՐ

Անուր բառն ավանդված է դասական շրջանի մատենագրությունում և գործածական է մինչև այժմ էլ: Նշվ բացատրություն մեջ գրում է. «Մանեակ կամ օղ փայտե և յերկաթոյ՝ ի նուաճել զպարանոց մարդոյ կամ անասնոյ, որպէս և անցուցեալն ի քիթս և գործի տանջանաց»: Այս բացատրությունը, որ հաստատվում է բերված բազմաթիվ վկայություններով, ցույց է տալիս, որ անուր սովորական օղ չէր, այլ վզին (կամ անասունների դնչին) ազուցվող ծանր փայտե կամ երկաթե օղակ: Ահա հնագույն գործածություններից մի քանիսը. Անուրս փայտեղէնս խորտակեցեր, և արարից ընդ այնր անուրս երկաթիս: Դիցէ զանուր երկաթոյ ի պարանոցի քում: Լուծ անրոյ նորա յաջողեսցի (բոլորն էլ՝ ՍԳԲ): Ինչպես կարելի է հեշտություն մը հասկանալ, այս նախադասությունների մեջ անուր-ը ռուսերեն ХОМУТ-ի իմաստն ունի, այսինքն՝ հենց այսօրվա անուր-ի նշանակությունը:

Բառս ծագում է հնիս. oïd արմատի i-n-drojendro ձևից. արմատի նախնական իմաստն է «ուռչել», որից ըստացվել են «ուռուցք, պալար», ապա և՛ ուռուցիկ ձև ունեցող

առարկաների, մարմնի մասերի ևն անուններ: Այսպես՝ արմատի պարզ՝ oid ձևից են ստացվել հայերեն այտ, այտ-նուլ «ուռչել», որին համապատասխանում են (ըստ ձևի) հուն. οἶδος «ուռուցք», οἶδμα «ջրի ուռչելը, ալիք, ալեծփանք, ծով», հին բարձր գերմ. eiz «պալար», նորվեգ. eitel «բողբոջ, աչք (բույսի), հանգույց, գեղձ», հին եկեղեցասլավոններեն isto (<\*id-s-to) «ամորձիք, երիկամ» և այլն: Իր ձևով հայերեն անուր-ը ծագում է արմատի անորձ ածած տարբերակից. մեր բառի նախնական ձևն է եղել \*անդուր (սեռականը՝ անդրոյ), սակայն նոր բաղաձայնների կուտակման պատճառով դ-ն ընկել է: Համենայն դեպս, հին ձեռագրերում ունենք նաև անդուր գրչությունը, որ Աճառյանը բացատրում է դ-ի սովորական հավելումով (ինչպես ծանր > ծանդր, մանր > մանդր և այլն), բայց չի բացատրում, որ դա որևէ վայրում պահպանված ավելի հնագույն ձև լինի: Համենայնդեպս, այս ենթադրության օգտին է խոսում անդրուար բառը, որի մասին կխոսվի ստորև:

Անդրադառնալով «ուռչել, ուռուցիկ → կորած և → օղ» իմաստային զարգացմանը, պետք է նկատի ունենալ հետևյալը. շատ լեզուներում անիվ, շրջանակ, օղ և նման բառերը ծագում են «կորուսյուն, ձկել, ուռուցիկություն» բնիմաստով բառերից: Հենուն չգնալու համար կարող ենք հիշել հենց մեր օղ (ալ) բառը, որ ծագում է հնիս. aulo արմատից, որի իմաստն է «կլոր խողովակ, երկարավուն փոս՝ խոռոչ՝ գոգավորություն»: Իմաստի տեսակետից մեր անուր բառի հետ համեմատելի են նույն արմատից ծագած ռուս. ядро «կորիզ, միջուկ», նորվեգ. eitel «հանգույց, բողբոջ», ինչպես և՛ հին հնդկերեն indriyam «ուժ, կարողություն, գորություն», լիտվերեն idra «ծառի փտած բուն կամ բնի միջի խողովակաձև խոռոչ (փտելուց գոյացած)» և այլն: Ձևի տեսակետից համեմատելի են հին հնդկերեն indra, «ուժեղ», ավեստերեն Indra, հին հնդկերեն indriyam «ուժ, կարողություն», միտանի Indar «նույն նշ.», սլավոնական \*jendro, \*jēdrъ «արագ» և այլն (Պոկ. I, 774):



Այսպիսով, անուր (անդուր) նախապես նշանակել է «կորացրած՝ ճկած՝ ուռուցիկ դարձրած փայտ կամ մետաղ՝ վզին հագցնելու համար», որից և՛ անուր-ի «վզին հագցնելու օղ» իմաստը:

Նույն արմատից է նաև անդրուար բառը, որ բաղկացած է անդր (<անդուր) և վար- (վարել «տանել, կրել») արմատներից. այս բառը նշանակում է «կառքի կամ պատգարակի լծված ձի, ջորի. կառք, սայլ»: Բնականաբար, նախնական իմաստն է «անուրը կրող», այսինքն՝ լծկան: Վար բառի վերածվելը ուար-ի կանոնավոր երևույթ է հին հայերենի համար, ըստ որում վա, վո կապակցությունները երկբարբառային դիրքում դառնում են ուա (համտ. անիւ>անուակ, թիւ>թուոյ և այլն):

## 7. Ա Ն Ք Ա Տ

Գործածվել է հին մատենագրության մեջ՝ «1. կարոտ, աղբատ, նվաստ. 2. աչքածակ, ազահ» նշանակություններով. ունենք նաև անֆատանալ «կարոտ լինել, կարիք ունենալ», անֆատուրին «աղբատություն, չքավորություն», անանֆատ «անկարոտ» բառերը: Ածանցավոր բառ է անֆ- արմատից, ինչպես ունենք աղֆ-ատ, հաստ-ատ և այլն: Ծագում է հնիս. ank- «բռնություն, անհրաժեշտություն, կարիք» արմատից. համտ. հուն. ἀνάγκη «կարիք, բռնություն», հին իռլ. eien, միջին կիմր. anghen, կիմր. angen, կոռն. բրետ. anken «կարիք, անհրաժեշտություն»: Հնչյունական օրենքների տեսակետից տարօրինակ է հնիս. k>հայ. ֆ, ըստ որում հընդ-վորոպական պարզ խուլերը ձայնորդներից հետո վերածվում են համապատասխան ձայնեղներին (համտ. penk<sup>w</sup>e>հինգ). սակայն այդ տարօրինակությունը բացատրվում է աղֆատ բառի համաբանության մեջ, որին նմանվել է և՛ -ատ ածանցավոր կազմության մեջ, և՛ ֆ>ֆ փոփոխության մեջ. համաբանություն մեջ տեղի ունեցած այդ կարգի փոփոխության համար կա-

րելի է հիշել տալ «ամուսնու բույրը» բառը, որ ծագում է հնիւ. ց'(e)lou արմատից, և պետք է լիներ ծալ, բայց տալգր-ի համաբանությամբ դարձել է տալ ( $\delta > \alpha$ ):

### 8. Ա. Շ և Ո Յ ժ

Բառի ձևը ցույց է տալիս, որ իրանական փոխառութիւնն է, ըստ որում հայերենի աշխ-ով սկսվող բոլոր ստուգաբանված բառերն իրանական ծագում ունեն (*հմմտ. աշխարհ, աշխէտ, աշխատել և այլն*): Մյուս կողմից՝ -ոյժ (-ույժ) մասը հայտնապես կապվում է ոյժ (ույժ, ուժ) բառին, որ նույնպես իրանական է: Այսպիսով, պետք է ընդունենք, որ բառը բարդ է և կազմված է աշխ- <իրանական լճա- և ոյժ<իրանական աօձա, աօga բառերից. իմաստի և կազմութեան համար միանգամայն համապատասխան է առոյգ բառին, որ նշանակում է «կայտառ. առողջ, առողջութիւնն ու ուժերը տեղը» և կազմված է առ- նախածանցով՝ ոյգ <հին պրսկ. աօga «ուժ» բառից: Աշխոյժ բառը հին մատենագրութեան մեջ գործածվել է «ուժեղ, զորեղ, արի, կտրիճ» նշանակութիւններով, իսկ այժմ ունի «զվարթ, կայտառ, եռանդուն» իմաստը: Բառի առաջին բաղադրիչը (աշխ-) Ավեստայի xša(y) «կարողանալ» բայի արմատն է. այդ բայը, բացի կարողանալ ընդհանուր իմաստից, ունեցել է նաև «տիրել, իշխել, ի վիճակի լինել. թագավորել» նշանակութիւնները<sup>1</sup>: Ըստ այսմ, \*xšaօձա նշանակել է «ուժ ունեցող, զորեղ, հզոր», որ մեր աշխոյժ բառի իմաստն է:

### 9. ԱՌԱՎԻՐ, ՎԵՌ

Հին մատենագրութեան մեջ գործածվել է, բայց ոչ հաճախ. իմաստն է «իզուր, անօգուտ, դատարկ տեղը». այս բառից է առաիւրական «անտեղի, զուր, անօգուտ»: Բառի

<sup>1</sup> Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, էջ 551—553:

կազմութեան մասին Հր. Աճառչանը (Արմ., Ա, 504) անորոշութեան մեջ է. «հայտնի չէ, թե բառի մեջ առ նախդի՞ր է, թե՞ արմատական»: Մեր կարծիքով առ(ա)- ածանց է և արմատն է վիր. ծագում է հնիւ. Կեր «հանդիսավոր կերպով խոսել, ասել» արմատից: Յեղակից լեզուների զուգահեռներն են. ավեստ, urvāta- «սահմանում, վճիռ, պատվեր», հին հնդկ. vrata- «պատվեր, ուխտ», հին եկեղեցասլավոնական rola «երդում», հուն. εἶρος «խոսել», ῥήσις «բառ, բայ», ῥήσις «խոսք», ռուս. брать «ստել, կեղծել», брать առավել. հոգն. браки) «բարբաջանք, դատարկաբանութիւն» և այլն (Պոկ., 1162): Ըստ այսմ՝ հայ վեր/վիր նշանակել է «դատարկաբանութիւն, բարբաջանք, շաղփաղփանք» և առ նախածանցով՝ առավիր՝ ստացել է նախ՝ «դատարկ խոսք, իզուր խոսակցութիւն», ապա և՛ պարզապէս «իզուր, անտեղի, պարապ տեղը» նշանակութիւնը:

Այս նույն արմատի so-ով աճած ձևից ենք կարծում նաև վեռ բառը, որ Աճառչանը (Արմ., Զ, 634) կասկածանքով բացատրում է «կամապաշտ, վես». բառը գործածվել է Ախտարբում «լինի վեռ, կամապաշտ, լեզուանի» կապակցութեամբ, ուստի և ավելի հարմար է «դատարկաբան, շաղակրբատ, շաղփաղփ» իմաստը, ըստ որում կապակցութեան մեջ արդեն կամապաշտ բառը կա:

## 10. Ա Ռ Ա Ի Օ Տ

Հայերենի շատ գործածական բառերից է, որ, սակայն, ոչ միայն ստուգաբանված չէ, այլև կազմութեամբ անորոշ է. ոմանք առ- համարում են ածանց, ոմանք՝ ոչ: Մենք արմատն ենք համարում աւ, իսկ առ- և աւտ(օտ) ածանցներ. առաջին ածանցը շատ հայտնի է, և կրկնելու հարկ չկա: Երկրորդի համար որպէս համեմատելի կազմութիւններ ունենք աղաւտ (աղօտ), կարաւտ (կարօտ). այս բառերին պետք է միացնել նաև արաւտ (արօտ). սրա արմատն է ար-, որից կազմված են նաև արածել և արաւտ. ընդունված է աւտ(օտ)-ի, -աւտ-ի

(ար-ատ) և ատ-ի (ար-ած) միջև տեսնել այնպիսի հարաբերություն, ինչպիսին կա մատ-մատ (մատչիմ-մատեայ), զած (զգածիմ, առիզած) և գատ (գատի, պարեգատ) և նման բառերի միջև: Սակայն այդ բառերի կազմությունն էլ պարզ չէ, թեև ծագումը հայտնի է: Արատ բառի համար ատ-ը պետք է ածանց համարել, որով արած-, արատ բառերի հետ կկապվի միայն արմատով (հնիս. արմատն է \*ter/tr, որից՝ ց'-ով ածած treg՝ ձևից ունենք արած-, արատ-ը պետք է կապել նույն արմատի d-ով ածած ձևի հետ (\*tred). հմմտ. կիմր. trwyddo «պատռել, ծակել», լիտ. triedziu «habe starken Durchfall» ևն, և արատ-ը՝ tr+ատ > արատ): Այս -ատ ածանցով կազմությունները շատ հին են, ավելի ճիշտ՝ հնություն մնացորդներ. այդպիսին է նաև առատ (առատ) բառի կազմությունը: Առանց նախածանցի ունենք առատ (ատ) բառը, որի մասին Հր. Աճառյանը գրում է. «շատ անստույգ նշանակություն մի բառ է, որ գործածվում է վանակ. հատատ. ստուգաբանական հետևյալ մութ հատվածում. «Հատատն լոյս. հան սկիզբն է ատն զօրութիւն գործոյ. զհոյն(հ) դիր ի բաց առ, առատ ասի. ամենայն ի դէպ բանի ասեն՝ թէ առատ կայ. և առատ ասեն զսկիզբն աուրն, որպես առտ արեգական գալոյ»: Այս բառից են կազմված անշուշտ շաղատ «գիշերվա ժամը շորսը՝ ըստ արևելյան ժամահաշվի» և կամատ «գիշերվա ժամի հինգը»: — Ըստ իս առտ նշանակում է «ժամանակ» (Արմ., Ա., 824): Մեզ թվում է, թե հատվածն այնքան էլ մութ չէ, ինչպես այն թվում է առաջին հայացքից. հեղինակը հատատ-ը համեմատում է լույսի հետ, ապա՝ բառը բաժանելով երկու մասի (իբր թե «բաղադրիչներ»)՝ հալ բացատրում է «սկիզբ» (իրոք ունենք էլ հալ «սկիզբ, ծայր» բառը), իսկ առ՝ «զօրություն». սա արդեն պարզ չէ. առա՞կ բառը նկատի ունի, հատել բառի ատ-ը որպես բարդությունների բաղադրիչ (պոչատ, գլխատել ևն), թե՞ մի այլ անծանոթ բառ?։ այնուհետև հեղինակը բառի սկզբից հանում է հ-ն, որով ստանում է առատ, բայց սա էլ դարձնում է առատ (ատ). այս բառի համար էլ բերում է «առատ կա» դարձվածը, որ



«ասում են ամեն բանի (գործի) առիթով»։ դա, ինչպես իր խոսքերից է բխում, նշանակում է «ժամանակ կա»։ վերջապես այդ առատ բառի համար էլ գրում է, թե առտ-ը արեգակի գալու ժամանակն է։ Բառի համար մեզ հենց այս վերջինն է կարևոր. հեղինակը բացատրում է, որ առտ-ը արևի գալու ժամանակն է, այսինքն՝ արևագալ, արևածագ։ Այսպիսով, ահա, ունենում ենք առտ և առառտ բառերը, որոնք եթե ստուգաբանորեն բացատրենք, նշանակում են. առաջինը՝ «արևագալ, արևածագ»։ Երկրորդը՝ «արևածագի դեմ, լուսաբաց»։ Համարելով երկու բառերի արմատը -ալ-, մենք այն բխցնում ենք հնիս. \*sau-el/sauol, suyel-, sūl «արեգակ» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. suvar = ավեստ. hvarə «արեգակ, լույս, երկինք», հին հնդկ. sūrta «պայծառ, լուսավոր», հուն. հոմեր. ἥλιος, ատտիկ, ἥλιος դոր. ἄελιος, ἄλιος «արեգակ», լատ. sol «արեգակ», գոթ. sauil, հին իսլ. söl «արեգակ», հին իսլ. and-solis, հին շվեդ. and-sylis «արևը դարձած՝ մայր մտած» (der sonne zugewendet), լիտ. և լատիշ. soulė «արեգակ», ռուս. солнце «արեգակ», հին բարձր գերմ. sundar «հարավ» և այլն (Պոկ., 881—882)։ Հնիս. sau-el բառի պարզ արմատն է sau, որ հայերեն տալիս է ալ (նախահունչ s-ի անկումը սովորական է. նույնիսկ այն դեպքերում, երբ բառակզբի s-ի դիմաց հայերենում ունենք և, ըստ Ա. Մեյերի, ոչ թե ունենք հնիս. s > հայ. և հնչյունախոսությունը, այլ s-ի անկումից հետո և-ի հավելում հայկական հողի վրա)։ Հնդեվրոպական այդ արմատի մասին է. Բենվենիստը հետևյալն է գրում. «որոշ չափով, այսինքն՝ կարճ ձայնավորով, -el-ը մտնում է հնդեվրոպական բառապաշարի ամենահին բառերից մեկի կազմի մեջ. \*sāu-el «արեգակ»- \*sāu «փայլել» արմատի անբուն (աթեմատիկ) բաղադրություն մեջ, որ լեզվից լեզու երևան է բերում երկակի, ծայրահեղորեն հնատիպ բնույթի հերթագայություն՝ արմատական և ածանցական։ Sāu-el-ի կողքին և, հավանաբար,

նրա համապատասխանությունը կազմված, կղետեղվի սա-  
բին. ausel «այգ, արշալույս» ... Հնդեվրոպական \*sāuel-ի  
մեջ -el- տարրը ածանց է ներկայացնում, և միայն \*sāu-ն  
է ստանում ածանցներ ու վերջավորություններ և, աճած  
լինելով, կրճատվում-դառնում է \*sū: Ինչպես kerd (հուն.  
ζήρ) տալիս է եզ. սեռ. křde·e/os (լատ. cordis), այնպես էլ  
\*sāu պետք է տար \*sū·e/os, որը հնչյունաբանորեն վերած-  
վեց ավետ. h(u)vō-ի. մյուս կողմից. \*sāu-ից -en-ի հավելու-  
մով կազմվել է բաղադրյալ \*sū·en/sun (գոթ. sunnō) զուգա-  
հեռ սū·el/sūl-ին (վեդայական svar, sū'rah): Suens (գաթաների  
\*vāng) հայտնապես առաջացել է բաղադրյալ sūen (ավետ.  
\*vanvant «արեալին») և արմատական սեռ. հնլ. \*sūes (ա-  
վետ., huvō) ձևերի փոխազգեցությունը: Այս sūens-ը որպես  
սեռական հոլով կրկնակի անկանոն է. և՛ իր sūen հիմքով փո-  
խանակ sun-ի, և՛ իր -s- վերջավորությունը՝ փոխանակ -\*/eos·  
ելթե sūen-ը արմատանար իրանական հոլովման մեջ, նա  
պետք է տար սեռ.— բաց. hūnō, քանի որ sūel-ը տալիս է  
hūro<sup>2</sup>: Այսպիսով, մեր առաջառ բառի մեջ տեսնեք հնդեվրո-  
պական հնագույն մի արմատ՝ \*sāu, որը պապահանվել է առանց  
-el, -en ածանցների:

## 11. Ա Ռ Ա Ք Ի Ն Ի

Նախնական իմաստն է «քաջ, կտրիճ», որից ստացվել  
են՝ կրոնական առումով՝ «բարեպաշտ», բարոյական առու-  
մով՝ «անբասիր, բարոյապես մաքուր» նշանակությունները.  
արմատն է fէն, իսկ առա- և -ի ածանցներ են: Ծագում է  
հնլ. \*qet- (ket-) «կռիվ» արմատից, որից են. գալլ. catu-  
«կռիվ», իռլ. cath «կռիվ», հին իսլ. hǫotr «մի աստծու  
անուն», անգլ. heapo, հին բարձր գերմ. hadu- «կռիվ»,  
միջին բարձր գերմ. hader «վեճ, կռիվ», հին բուլղար.  
katora «կռիվ», կիմր. cadr «ուժեղ, արի», cadarn «հզոր»,

<sup>2</sup> E. Benvenist, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935, էջ 42—43 և 65—66:

բրևտ. cadarn «բաջ, կտրիճ, արի» և այլն: Հայերենի համար պետք է կանխադրել հնիս. արմատի ո ձևորդով աճած \*qetən տարբերակը (qetən > հայ. ֆեյն > ֆլն. որից՝ -ի ածանցով՝ ֆինի), ինչպես որ բուլղարերեն, կիմերերեն, գերմաներեն և բրետոներեն ձևերի համար էլ կանխադրվում է ր ձևորդով ձևը (Walde-Pokorny, I, 339):

## 12. Ա. Ռ. Ի Ք

Հին մատենագրությամբ ավանդված չէ. լայնորեն գործածվում է բարբառներում՝ «առաստաղ» նշանակությամբ, անեղական բառ է, որի սեռականը՝ առից «առիքի, առաստաղի» նշանակությամբ, ըստ Հր. Աճառյանի, պահպանված է Չարսանճաքում: Ծագում է հնիս. rēt «ձող, գերան, բուն, գերանակապ» արմատից, որի ցեղակից ձևերն են. հին բարձր. գերմ. ruota, հին իսլ. rōta «գերան, ձող, գավազան», հին սաքս. rōda «փայտե խաչ (pfahlkreuz)», անգլոս. rod «ցուպ, գավազան», եկեղեցասլավոնական ratište, ratovište «նիզակաբուն»: Ըստ այսմ, հայ. առի՛ նախապես նշանակել է «գերաններ, գերանակապ» և ճիշտ նույն իմաստային դարգացումն ունի, ինչ որ՝ ձեղուն, որի արմատն է ձեղ—«ձող, գերան»: Հընչյունական տեսակետից ոչ մի կասկած չի հարուցում. rēt հայերենում պետք է տար րիյ, սակայն հայերենում ի-ից հետո յ-ն միշտ ընկնում է (ի-ից հետո յ լինել չի կարող), ուստի և՛ րի. նախահավելված ձայնավորը պարտադիր է ր-ից առաջ. միակ դժվարությունն է ներկայացնում թերևս հնիս. ր > հայ. ո համապատասխանությունը, բայց սա էլ հաճախ է լինում բառասկզբում (հմմտ. հնիս. par > հայ. առ (նախդիրը), հնիս. reug > հայ. առեծ/առիւծ, հնիս. ar > հայ. առի (առնուկ բայի կատարյալի առաջին դեմքի) և իրանական փոխառություններում՝ պճլ. \*rasan > հայ. առասան, պճլ. rat > հայ. առատ և այլն):

### 13. ԱՍԿՆ

Իմաստն է «սուտակ»։ Հին մատենագրության մեջ գործածվել է միայն մեկ անգամ։ Ծագում է հնիս. *ās* արմատի *azg* աճած ձևից, որ նշանակում է «վառել, այրել, այրվել, շողալ, փայլել»։ Յեղակից ձևերն են. հին հնդկ. *asa*-ի «մոխիր», լատ. *āra* «զոհասեղան, զոհարան» (նախնական «կրակ» իմաստից. հմմտ. *ara sepulcri* «թաղման կրակ»), *areo* «չոր լինել, տոչորվել», *arīdus* «չոր», *ardēo* «այրվել», հին իսլ. *arinn* «կրակի տեղ, կրակարան, բարձր տեղ, բարձունք» (իբր կրակ վառելու տեղ), թոխ. *ās* (պտճո. բայ) «չորացնել», խեթ. *ḫa-aš-ši-i* (գործ. հոլ.) «կրակարան», հուն. *ἄζωζος* «բռնկուն, բորբոքուն, վառվուն» և այլն (Պոկ., 68)։ Հնիս. *zg*-ն հայերենում դառնում է սկ, ինչպես որ *sd*-ն էլ դառնում է ստ (օր. *nīzd*->հայ. նիստ)։ Այս նույն արմատի *azgy*- տարբերակից ծագում է հայ. անյուն «մոխիր. մեռյալի ոսկորներից գոյացած հողը», իսկ *azgh*-տարբերակից՝ ազագել «չորացնել» (Արմ., Ա, 22, 175)։ Մեր ասկն բառը կապվում է հնիս. արմատի «փայլել, շողալ» իմաստի հետ, ըստ որում սուտակը համեմատվում էր «կայծ շողացող, կրակ» հասկացությունների հետ. այս են հաստատում նշբ-ում սուտակ բառի տակ բերված՝ «Սուտակն կարկեհանն է և յականց Գիրքն կայծ ասի» վկայությունը, ինչպես և կայծ բառի «կարկեհան, սուտակ» իմաստը։

### 14. ԱՍՏՈՒՃ/ԱՇՏՈՒՃ

Գործածվել է միայն աստուն հաց «ցամաք հաց» կապակցությամբ՝ աշտունձ և աստունձ ձևերով. բաղադրությունների մեջ ունենք՝ աշտինագոյն, աշտնակեր/աստինակեր։ Հնագույն ձևն է աստուն, որի մեջ *u* դարձել է շ բառավերջին-ի առնամանկությամբ (հմմտ. աստինան>աշտինան)։ Արմատն է աստ-, իսկ ուն և ին (աշտինագոյն) ածանց են (ուն-ի համար հմմտ. պարկուն)։ Ծագում է հնիս. *ās* «այրել, տոչորել, վառվել, շողալ» արմատի *d* աճականով ձևից՝ *azd*>աստ (հնիս. *zd* հայերենում օրինաչափորեն դառնում



է ստ. հմմտ. ozd->ոստ, nizd->նիստ և այլն). ցեղակից լեզուների համապատասխանություններն են. հուն. ἄζω «այրել, չորացնել», ἄζωϋα: «չորանալ», շխ. և լեհ. ozditi «չորացնել», լատ. ardeo «չորանալ», aridus «չոր, չորացած», ardeo «այրել» և այլն: նույն արմատից են նաև հայ. ազ-ազ-ել «չորացնել» (արմատի gh-ով աճած՝ azgh- ձևից. հմմտ. գերմ. գոթ. azgo «մոխիր»), ռուսին «չոր, ցամաք, անջրդի» (գարձյալ d աճականով, բայց նախահունչ օ. ձայնավորով՝ ozdո), աճին (gy աճականով՝ ozgy- ձևից. հմմտ. հին իսլ. aska, գերմ. Acshe, անգլ. ashes «մոխիր, աճյուն», և այլն), և վերջապես՝ ասկն «սուտակ» (ց աճականով՝ azg ձևից)՝ «փայլել, շողալ» նախնական իմաստից (տե՛ս նախորդը):

## 15. Ա Ր Գ Ա Տ

Այս բառը հիշում է նորայր Բյուզանդացին իր Ֆրանս-հայերեն բառարանում որպես միջին հայերեն բառ, ունի նաև Երեմիա Մեղրեցին, որոնցից առել է նաև Հր. Աճառյանը (Արմ., Ա, 643): Արարատյան բարբառում, ինչպես և ուրիշ բարբառներում, գործածվում է արֆալ, արֆառ ձևերով և նշանակում է «խաղողի որթի կտրած ոստ՝ մատ»: Անշուշտ, բառի հնագույն ձևն է արգառ, որի մեջ գ-ն ր-ից հետո վերածվել է ֆ-ի (ինչպես՝ կարգ>կարբ, մարգարիտ>մարբարիտ են) և վերջին տ-ն էլ ձայնեղացել է արարատյան բարբառին հատուկ հնչյունական օրենքով: Ծագում է հնիս. ք(e)rad- արմատի քրəd- տարբերակից՝ գրառ>րգառ>արգառ հաջորդական փոփոխություններով: Հնիս. արմատի իմաստն է «ճյուղ, արմատ, ոստ, ճիպոտ». ցեղակից լեզուների ձևերն են հուն. ῥᾶζ: «ճյուղ, ոստ, ճիպոտ», ῥᾶζαϋος (էռլ. ῥοδαμνος) «մատաղ ոստ», ալբ. rrânzë «արմատ», լատ. radix «արմատ», կիմր. gwraidd (<\*քրədio) «արմատներ», gwrisg «ոստ, ճյուղ», հին կորն. gruelten «արմատ», գոթ. wourts «արմատ, անգութ. wurz «բույս. արմատիք», հին իսլ. urt «արմատիք, սաղարթ», röt «արմատ» և այլն (Պոկ., 1167):

Հայերենում ւր > րգ փոփոխութեան համար համեմատելի է հնիւ. ւր eg' > հալ. երգիծանել (< րգիծանել < գրիծանել):

## 16. ԱՐԳՆ, ԳԵՂԱՐԳՆ

Արգն բառը նշՔ-ում բացատրվում է իբրև «նիզակ, տեգ, աշտյա», որ ընդունում է նաև Հ. Աճառյանը (Արմ. բառ., Ա, 661): Այս բացատրութեամբ արդև նույնացվում է և՛ նիզակի, և՛ տեգի հետ, որոնք, սակայն, բոլորովին տարբեր բաներ են: Յալոք սրտի մենք շունենք հայոց հին զենքերի ու ռազմի գործիքների գիտական ուսումնասիրութեանը և նկարագրութեանը, որպեսզի հնարավորութեան ունենայինք պարզելու դրանց տարբերութեաններն ամենայն մանրամասնութեամբ ու ճշգրտութեամբ, համենայն զեպս նիզակի և տեգի տարբերութեանը հեշտութեամբ բացահայտվում է ըստ գործածութեան: Տեգը սուր սլաք էր, որ գործածվում էր որպես ձեռքով նետելու զենք, ի տարբերութեան նետի, որ աղեղով էր արձակվում. այս երկուսի տարբերութեանը պարզորոշ կերպով երևում է հետևյալ կապակցութեան մեջ. «Շուն ոչ միայն առ քարանց հանդուրժէ ձիգս՝ ընդդէմ կալով, այլև առ տիգաց և նետից ընդդէմ յարձակելով հարուածոցն» (Փիլոն, Ա. Լիւսիմարոս. ըստ նշՔ): Միևնույն ժամանակ, տեգը որպես սուր սլաք ագուցվում էր նիզակի ծայրը: Այս էլ հաստատվում է բազմաթիվ վկայութեաններով, որոնցից լավագույններն են. «Մանուէլ զտէգ նիզակին ի ձեռինն կալեալ, և նիզակեան ի կառափն մատուցեալ ձեծէր զարքայն Վարազդատ» (Բուզանդ), այսինքն՝ նիզակի տեգը (= սուր սլաքը) ձեռքին բռնելով, նիզակով (= նիզակի բնով՝ կոթով) ձեծում էր արքա Վարազդատին: «Տեսցեն զքերովբէսն և զսուր տէգ նիզակին» (Յփրեմ. ըստ նշՔ):

Քանի որ նիզակը և տեգը բոլորովին տարբեր բաներ են. ապա արդև չի կարելի միաժամանակ թե՛ մեկը համարել, և թե՛ մյուսը: նշՔ-ի բերած գործածութեանները ցույց են տալիս, որ արդև խոցելու զենք էր. դա երևում է հատկապես հետևյալ կա-

պակցութունից. «Ի պատերազմի յախոյեանէ սուր արդեանց ի սիրտ տոնուցու» (Փիլոն. ըստ ՆՃԲ): Հարց է, թե նա նետելու՞ զենք էր, թե ոչ, և եթէ այո, ապա նո՞ւյնն էր, ինչ որ տեղը: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցի պատասխանը տալիս են արդն բառից կազմված բարդութունները: Այսպես՝ ունենք արդնընկեց բառը, որ նշանակում է, թե արդն նետելու զենք էր, ինչպես և՛ տեղը: Բայց տեղը սլաք էր, որ կարող էր և՛ առանձին գործածվել, և՛ ազուցվել նիզակին՝ որպես խոցող սուր ծայր: Արդն միայն նետելու զենք էր, ուրեմն՝ նիզակից փոքր, որով և կարծես թե նույնանում է տեղի հետ, ինչպես կարելի է հասկանալ նաև արդնընկեց բառից: Սակայն դրա հետ միասին ունենք նաև արդնատէգ բառը, որը ցույց է տալիս, որ արդն նույնպես իր ծայրին ուներ տեղ, որով խոցում էր. դա պարզ կերպով երևում է հատկապես հետևյալ կապակցության մեջ. «Ոչ արդնատիգաւ խոցեցաւ մարմին եղեալ բանն անշարչարելի» (Հովհաննես Սարկաւազ. ըստ ՆՃԲ): Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ արդն նիզակի նման, բայց շատ ավելի թեթև զենք էր՝ ձեռքով նետելու համար. նա չէր նույնանում նաև տեղի հետ, որ է՛լ ավելի փոքր ու թեթև նետելու զենք էր (համար. «Ոչ տիգաւորք և արդնաւորք շուրջ», ՆՃԲ, Ա., 350): Քանի որ արդն կարող էր իր վրա կրել **տեգ, ապա պարզ է**, որ նա ամուր փայտի ձող էր՝ սուր ծայրով կամ ազուցված սուր սլաքով (տեղով): Ըստ այսմ՝ արդն բառը ծագում է հնիւ. \*rēt-, \*rōt-, \*rət- արմատի ստորին ձայնդարձով ձևից (\*rət), որի t-ն օրինաչափորեն ձայնեղացել է ձայնորդից հետո (rt > rոդ) և սկզբից ավելացել է ա ձայնավորը r-ից առաջ: Ցեղակից բառերից մերին առավել մոտ են հին բարձր գերմ. ruota, գերմ. Rute «զավազան, ձող», հին եկեղեցասլավոնական ratište, ratovište «նիզակաբուն» (Walde—Pakorny, II, 368): Հնդեվրոպական արմատն ունեցել է «ձող, բարակ ծառաբուն» իմաստը, որից և զարգացել են «զավազան, նիզակաբուն» և մեր արդն-ի իմաստները. իմաստի զարգացման համար համեմատելի է նէա բառը, որի հնիւ. \*nad- արմատը նշանակել է «եղեգն»:

Ուշագրավ է նաև արդն բառի հոլովումը. նշՆ-ն տալիս է միայն հոգնակին՝ արդունք, արդեանք: Հայտնի է, որ և հանգող բառերը, նույնիսկ նրանք, որոնք նախապես ն-ից առաջ ունեցել են ի ձայնավորը, հոգնակի սեռականում ունենում են -անց և ոչ թե -եանց (հմմտ. հարսն-հարսին-հարսանց, գառն-գառին-գառանց ևն): Արդն բառի այս շեղումը կարելի է բացատրել նրանով, որ եզակիում ունեցել է նախապես սեռականի -եան վերջավորություն, ինչպես՝ ծնունդ, գալուստ ևն: Այս բացատրությունը չի հիմնավորվում, որովհետև գաղտնավանկի ը ձայնավորին հաջորդող ն-ով բառերը այդ հոլովման շեն ենթարկվում: Մնում է ենթադրել, որ նախապես այդ բառն ունեցել է արդն, արդան, արդանց ձևերը և արդին (արդինք) բառի համաբանությունը ստացել է -եան հոլովումը: Մեր այս ենթադրությունը հաստատվում է գեղարդն բառի հոլովումով, ըստ որում ունի և՛ գեղարդան, գեղարդանց, և՛ գեղարդեան, գեղարդեանց ձևերը: Սակայն սա նշանակում է նաև մի այլ բան. «Արմատական բառարանում» արդն և գեղարդն բառերի տակ Հ. Աճառյանը կասկածանքով հարցնում է, թե կապ ունե՞ն այդ բառերն իրար հետ: Մեզ թվում է, թե կապը բացահայտ է: Դրան իբրև ապացույց է ծառայում ամենից առաջ ձևաբանական հատկանիշը՝ հոլովման նույնությունը: Բայց իմաստային կասն էլ ակնհայտ է. ինչպես գիտենք, գեղարդը նիզակից ավելի մեծ, խոցելու ձեռնամարտի զենք էր: Նրա մեծություն մասին կարելի է գաղափար կազմել «Աստվածաշնչի» հետևյալ հատվածից. «Բուն գեղարդան նորա իբրև զստորի ոստայնանկաց. և տէգ նորա ի վեցհարեւր սկեղէ երկաթոյ» (ԱԹադ., Ժէ, 7): Եթե սիկղը հավասար է 6,8 գրամի, ինչպես ընդունված է, ապա՝ հատվածում հիշված գեղարդի միայն տեգի կշիռն է ավելի քան 4 կգ, իսկ բունը՝ ոստայնանկի ստորու շափ: Գեղարդի և նիզակի տարբերությունը շեշտվում է նաև «Հաղագս պիտոյից» գրքի հետևյալ հատվածում. «Ոչ ի գեղարդանց վիրավորելով, և ոչ ի նիզակաց» (ըստ նշՆ): Այսպիսով, պետք է ընդունել, որ գեղարդն նի-



ղակի ավելի մեծ տեսակն էր՝ հաստ ու երկար բնով և խոշոր տեղով, թեև ուշ շրջանում գեղարդի-ի երկու տեսակ են տարբերում՝ մեծ, որ գործածվում էր ձեռնամարտում, և կարճ՝ որ հեռվից նետում էին թշնամու վրա: Քանի որ, ինչպես վերը ցույց տվեցինք, արդն նախապես նշանակել է բուն, ձող, կոթ, ապա՝ գեղարդն բառի մեջ էլ այդ իմաստը պետք է ենթադրել, որով ամբողջ բառի նախնական նշանակությունը կլինի գեղի արդն, այսինքն՝ գեղի բուն, ինչպես ունենք նիզակաբուն (= նիզակի բուն): Ըստ այսմ, գեղ բազարդիչն էլ պետք է նշանակած լինի տեգ, սլաֆ կամ նման մի բան, որ ճշտել հնարավոր կլինի միայն բառի ստուգաբանությունն իմանալու դեպքում:

## 17. ԱՐՏԵՎԱՆ/ՈՒՆՔ/

Ավանդված է դասական շրջանից՝ սովորաբար հոգնակի գործածությամբ, բայց Հ. Աճառյանը հիշում է նաև արտևան եզակի գործածությունը Աստվածաշնչի մեջ (Արմ., Ա, 763): Կազմված է -ան ածանցով. ուրեմն արմատն է արտե, որ ծագում է հնիս. \*derep «տեսնել» արմատի \*drep- ձևից, ինչպես հունարեն δρωπάζειν, δρωπτειν «տեսնել» բառը (Pok, I, 212): Հայերենում իբրև կանոն dr տեղափոխությունով դարձել է rd (հմմտ. \*dro->արտ-որալ), ապա՝ rա և ստացել ա նախահավելվածք. հնիս. p-ն ձայնավորից հետո դառնում է ւ, ուստի և \*drep>rdep>rtep>արտե: Իմաստի տեսակետից դժվարություն չի առաջանում, որովհետև -ան ածանցով ստացվել է տեսանելիք ընդհանուր իմաստը, ապա և՛ քարթիչ, ինչպես որ այս բառն էլ ստացվել է քարթել «աչքը բացել-փակել» բայից:

## 18. ԱՐՏՈՐԱԼ

Այս բառը գործածված է միջնադարում («Վաստակոց գիրք», Վարդանի «Առակք» և այլն), գործածվում է Պոլսի, Խարբերդի, Նոր-Նախիջևանի և մի քանի ուրիշ բարբառներում

և նշանակում է «շտապել, աճապարել»: Գոյականի ձևերն են արտորհ, արտորանք: Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» (հտ. 1, էջ 766) արմատական ձևն է համարում արտոր-բ. բայց պարզ արմատն է արտ-, որ ածանցված է -որ մասնիկով, ինչպես ունենք՝ զլորել, մտորել և այլն: Ծագում է հնդեվրոպական \*dra- արմատից, որ նշանակում է «վազել, շտապել»: Հմմտ. հին հնդկերեն praṭi «վազում է, շտապում է», հունարեն δραπειν «վազում եմ (վրայով)», հին բարձր գերմաներեն zittarōm «շտապում եմ», գոթերեն anatrimpan «շրջել, շարժվել», միջին բարձր գերմաներեն trumpfen «վազել», անգլերեն tramp, trample «մտնել» և այլն: Հայերենը ծագում է dra- ձևից, dr > r ա օրինաչափ տեղափոխությամբ (հմմտ. \*drakru > արտասու, dhabhro > զարբին և այլն) և բառակազմում r-ից առաջ ա-ի հավելումով, որից և ստացվել է արտ- պարզական արմատը:

## 19. ԱԻՆՏ (ԱԻՆՏԵԼ, ԱԻՆՏԻՔ)

Գրաբարում գործածվել է աւետ իբրև անկախ բառ՝ «բարի լուր, ուրախալի լուր, բարև, ողջույն» նշանակություններով, բայց ավելի հաճախ՝ աւետիք ածանցավոր ձևով, և իբրև բայ՝ աւետել: Գրվել է նաև աւէտ ձևով, սակայն ածանցումների մեջ առկա է միայն աւետ (առանց է > ի փոփոխության): Ծագում է հնիս. aud «խոսել» արմատի ayeð, ayeid աճած ձևերից, որոնցից օրինաչափորեն ստացվում են աւետ < ayeð) և աւէտ (< ayeid). ցեղակից լեզուներում ունենք. հուն βῆω «փառաբանել», հին հնդկ. vadati «խոսում է, ողջունում է», vandate «գովք, պատկառալից ողջույն», հուն. ἀεῖδω (< ἄFεῖδω) «երգել», թոխ. AB. wätk, B watk, «հրամայել» և այլն:

## 20. Բ Ա Յ, Բ Ա Յ Ո Յ

Այս բառը նշանակում է «գազանների որջ կամ գազանների ձմեռվա քառասունը». գործածված է հայ հին մատեն-

նագրութեան մեջ. օրինակ՝ «Առիւծ գոշեաց ի յանտառին և գիշախանձ արջն ի բային»: Ավելի գործածված է բայոց ածանցյալ ձևով, ինչպես և՛ բայել, բայաճալ բայաձևերով. ինչպես՝ «Աղգք ազգք առնիտաց ի ձմերանի բայեցեալ անշարժ կայ». Կոչ. «Քայանան օձք ընդ հողով. և որջք իւրեանց են ի սորս և ի սոյզս երկրի» Փիլ. լիմ., «Աղղմունք բնականք. և արջոյ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ» Եղն. և այլն: Գրված կա նաև բառ, որ սակայն հետին է: Մագում է հնդեվրոպական \*bheu- արմատի \*bhya->\*bha ձևից. ընդհանուր «բնակարան, տուն» իմաստով նույն արմատից կան բազմաթիվ բառեր ցեղակից լեզուներում. ինչպես՝ հին իսլանդերեն buet «բնակարան», չեխերեն budlo «կացարան, բնակարան», հին պարսկերեն both «խրճիթ», լիտվաներեն butas «տուն» և այլն: Հայերենի «որջ» իմաստով նույն արմատից ունենք՝ հունարեն φλοῦδος, φλοῦδος «վայրի կենդանիների որջ», լիտվաներեն būkias «կենդանիների որջ», հին իսլանդերեն bōl «կենդանիների և մարդկանց ապրելու տեղ», որոնք բոլորն էլ նախապես նշանակել են «ապրելու տեղ, ընդհանրապես, իսկ հետագայում՝ «կենդանիների ապրելու տեղ, որջ»: Այսպիսով, հայերեն բայ-ի կապը \*bhut-, \*bhat- արմատի հետ հաստատվում է: Զայնդարձի համար կարելի է համեմատել գոթերեն bauan «բնակվել», գերմաներեն bauen «կառուցել» և այլն: Այս արմատից են նաև՝ հայ. բոյս, բուսանիմ, բոյն (\*bheu-no), բուն (ծառի), սևո. բնոյ (\*bhuno), թեև Պոկոտնին այս երկուսի (բոյն, բուն) մասին վերապահութեամբ է գրում:

## 21. ԲԱՐԱԿ «ՈՐՍԻ ՇՈՒՆ»

Հայերեն բարակ «որսի շուն» բառը, որի հնագույն գործածությունը գտնում ենք Եղիշեի մոտ, և գործածական է նաև ժամանակակից գրական հայերենում, ստուգաբանված չէ: Բառի ձևը, յուր -ակ հանգով, թույլ է տալիս ենթադրել, թե նա իրանական փոխառություն կարող է լինել: Դեռևս ՆՀԹ-ի հեղինակները, ինչպես և Զախջախյանը, ձիշտ կերպով

նկատել են այդ բանը և հիշյալ բառը կապել են պարսկերեն պարագ «շուն» բառի հետ, որ սակայն գոյություն չունի: Այդ իմաստով և այդ ձևով կա տաճկերեն براق baraq «որսի շուն» բառը, որի մասին կխոսվի ստորև: Հիշյալ հեղինակները տաճկերեն այդ բառն անշուշտ պարսկերեն են համարել: Սոֆուս Բուզգեն հայերեն բարակ բառը կապում է իտալերեն bracco, baracco «որսի շուն» բառի հետ, որ մերժում է Հյուբշմանը, քանի որ այդ բառը, ֆրանսերեն braque, անգլերեն brach «որսի շուն» բառերի հետ, ծագում է գերմաներեն bracke, հին վերին գերմաներեն bracko հոմանիշից, որի հետ նույն է հին ֆրիզերեն barm—braccus (ավելի մանրամասն տե՛ս Հ. Ա. Ճ ա ո ճ ա ն, Հայերեն Արմատական Բառարան, հատոր Ա, էջ 994): Հակառակ Բուզգեի, մենք գտնում ենք, որ հայերեն բարակ բառը իրանական ծագում ունի: Նա կապվում է պահլավերեն bārak «արագավազ ձի, նժույգ», Renner, Ross» բառի հետ, որ գտնում ենք Nyberg. Hilfsbuch des Pehlevi, II, Glosser, Upsala, 1931, 32-րդ էջում: Բառը ծագում է հին պարսկերեն bar- «արագ շարժվել, արշավել, sich rasch bewegen, stürmen» արմատից (Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904, S. 943): Բառի այս սկզբնական իմաստը լույս է սփռում թե՛ պահլավերեն bārak բառի ծագման, և թե՛ հայերենում նրա կրած իմաստափոխության ընթացքի վրա: Նախնական «արագ շարժվել, արշավել» իմաստից հեշտ է բխեցնել պահլավերեն bārak բառի «արագավազ ձի, նժույգ» իմաստը: Ինքնին հասկանալի է, որ բառին այս իմաստը տալով նկատի է առնվել ձիու մի հատկանիշը՝ արագավազությունը: Նույն իմաստով բառն անցել է նաև նոր պարսկերենին, միանգամայն օրինաչափ կերպով ստանալով ٭ بارا bārah ձևը: Մի անգամ արդեն նժույգի իմաստըն ստանալով՝ բառն ուրիշ բարդությունների բաղադրիչ է դառնում ոչ միայն իր նախնական «արագ շարժվել, արշավել» իմաստով, այլև՝ անմիջականորեն նոր իմաստի հետ կապվող «հեծյալ, լավ ձիավարժ» իմաստներով: Այսպես՝



նույն արմատից են կազմված՝ հին պարսկերեն *barəṃna* հատուկ անունը, որ նշանակում է «արշավող, հեծյալ», և *baro aspa* «1. արագավազ ձի, նժույգ: 2. Հեծնող, նժույգով արշավող» բառը (*Bartholomae, idid., 944*): Հատկապես վերջին բառն ուշագրավ է նրանով, որ կազմված է *baro* և *aspa* բաղադրիչներից, որոնցից երկրորդը, ինչպես գիտենք, նշանակում է «ձի»: Ուստի և՛ այստեղ էլ *bar-* արմատը հանդես է գալիս յուր նախնական «արշավել» իմաստով, որով և ամբողջ բարդութունն ստանում է «արշավող ձի, արագավազ ձի» իմաստը: Այս նույն արմատից և նույն ճանապարհով է ստացվել նաև Ավեստայի *bāšar- < \*bartar* «հեծյալ, ասպետ, Reiter» բառը (*Nyberg, idid., 32*): Վերջապես նույն արմատի հետ են կապված նաև հին պարսկերեն *assabara* «ձիով արշավող», Ավեստայի *ayarbeara* «մի օրվա ճանապարհ, Tagesritt», պաղենդ. *bar* «հեծանելի, ձի, Reittier» բառերը (*Horn, Grundriss der neupersischen Etymologie, Strassburg, 1893, § 160*): Այս բոլոր բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ պահլավերեն *bārak* բառը յուր ծագմամբ նշանակել է բնդհանրապես «արագավազ, սրարշավ» և հետագայում միայն բառիմաստի նեղացման հայտնի երևույթի շնորհիվ հատկացվել նժույգին: Այստեղից էլ արդեն հեշտ է եզրակացնել, որ այդ նույն բառը յուր նախնական «արագավազ, սրարշավ» իմաստով կարող էր հատկացվել նաև ուրիշ կենդանիների, առանձնապես որսի շան, որի բնորոշ հատկանիշն է արագավազությունը: Այս դեպքում էլ մենք ունենք բառիմաստի նեղացում, այն տարբերությամբ, որ արագավազ ձիու փոխարեն այստեղ հանդես է գալիս որսի շունը: Որ այս կարգի իմաստափոխությունը միանգամայն իրական է, հեշտ է ապացուցել նույն պարսկերեն تازی *tazi* «արագավազ» բառի հետագայում ստացած իմաստների համեմատությամբ: Այդ բառի արմատն է իրանական *tač* «վազել», որից՝ Ավեստայի *tačaiti* «վազել, հոսել», պահլավերեն *taxtan, tačēt*, նոր պարսկերեն *تاختن taxtan تازم tāzam*

«վազել» (Horn, *ibid.*, § 368): Պաճլավերենում նույն արմատից ունենք tāčik «1. արագավազ: 2. Միջագետքի. արաբ: 3. Արաբական» բառը, որից՝ նոր պարսկերեն تاجيك tājīk, նաև tāžik, تازيك tazīk «արաբացի ծնունդ, որ մեծացել է Պարսկաստանում և تازى tāzī «1. արագավազ (օր. asb-i tāzī «տաճիկ ձի»): 2. Արաբ (ինչպես՝ zabānī tāzī «արաբ. լեզու, արաբերեն»): Այս վերջինից լժուրքերենն էլ ունի tāzī բառը «որսի շուն» իմաստով: Իմաստափոխությունն ճիշտ նույն պատկերն են ներկայացնում նաև հայերենի տանիկ և քազի բառերը: Առաջինը, որ ավանդված է հինգերորդ դարից, ունի «արագավազ» և «արաբ» իմաստները, ըստ որում առաջին իմաստով նա գործածվում է թե՛ ձիու և թե՛ ուղտի համար, ինչպես օրինակ՝ տանիկ ձի, Բուզ. դ. 47, էջ 134, տանիկ ուղտ, Բուզ. դ. 54, էջ 141 և այլն: Ինչ վերաբերում է քազի բառին, որ գործածական է ժողովրդական խոսակցական լեզվում, ապա նա էլ՝ ծագած լինելով նույն արմատից՝ ստացել է ավելի նեղ իմաստ և, ճիշտ ինչպես թուրքերենում, նշանակում է «որսի շուն»: Ուշագրավ է, որ այս վերջին իմաստից ստացվել է նաև մի նոր, փոխաբերական իմաստ՝ «նիհար, լղար»: Դրա պատճառն այն է, անշուշտ, որ որսի շունը սովորաբար բարակ ու երկար ոտքերով և նիհար է լինում. ուստի և՛ նմանությունը գործածվում է նաև իբր փոխաբերություն (հմմտ. նիհարել, քազի է դառել, կամ, իբր հարադրություն՝ լղար-քազի և այլն: Տաճիկ բառի մանրամասն քննությունը տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հատոր 2, էջ 760—764): Այս բոլորը ցույց են տալիս, որ «արագավազ» բառը կարող է իմաստի նեղացմամբ հատկացվել թե՛ ձիուն, և թե՛ շանը: Այս էլ իր հերթին նշանակում է, որ հայերեն բարակ «որսի շուն» բառի ծագումը՝ պաճլավերեն bagak բառից՝ միանգամայն ընդունելի է: Վերջապես այդ բանը հաստատվում է նաև նույն պաճլավերեն բառի ուրիշ փոխառություններով: Б у д а г о в, Сравнительный словарь турецко-татарских наречий

(СІБ, 1869, 2 հատոր) գրքի առաջին հատորի 251-րդ էջում գտնում ենք թուրքերեն *براق* barāq «որսի շուն» և կիրգիզերեն *باراق* bārāq «մի տեսակ որսի շուն, род пуделя» բառերը, որոնք հեղինակը, առանց որևէ հիմքի, կցում է վերը հիշված ֆրանսերեն braque բառի հետ, նկատի շանելով հնչյունական անհամապատասխանությունը և, մանավանդ, շունենալով որևէ պատմական հիմք կիրգիզերենի ու ֆրանսերենի փոխազդեցության համար: Աճառյանը, յուր «Արմատական Բառարանում» (հատոր Ա, էջ 995) հիշելով այս բառերը, հարցնում է, թե արդյոք դրանք կապ ունեն՞հ հայերեն բարակ բառի հետ: Այդ բառի մեր ստուգաբանությունը միանգամայն հաստատապես ցույց է տալիս, որ թուրքերեն *barāq* և կիրգիզերեն *bārāq* բառերը նույնպես ծագում են պահլավերեն *bārak* բառից և վերցված են պահլավական շրջանում, այսինքն՝ Մասանյանների հարստության ժամանակները, եթե ոչ ավելի շուտ: Անշուշտ նույն ծագումը պետք է ունեցած լինի նաև շաղաթայերեն *باداق* badaq «մի տեսակ որսի շուն, род пуделя» բառը, որ Բուդաղովը՝ քաղելով 1820 թվին Կալկաթայում հրատարակված շաղաթայերեն-պարսկերեն բառարանից, հիշում է յուր բառարանում: Բառի d բաղաձայնը r-ի փոխարեն՝ հավանաբար արդյունք է բարբառային տարբերության, եթե ոչ՝ գրչազրբական կամ տպագրական վրիպակ:

Այս բոլորը նշանակում են. 1. պահլավերեն *bārak* բառը իր սկզբնական իմաստով նշանակել է «արագավազ» և հետագայում միայն իմաստի նեղացմամբ հատկացվել է ձիու մի տեսակին՝ ճծույզին: 2. Հայերեն բարակ «որսի շուն» բառը փոխառյալ է պահլավերենից, երբ այդ բառը պահլավերենում իմաստի հիշյալ նեղացումը չէր կրել, և հայկական հողի վրա իմաստի նեղացման մի այլ ընթացք է ստացել՝ հատկացվելով շան արագավազ տեսակին՝ որսի շան: 3. Իմաստափոխության այս վերջին պատկերն են ներկայացնում

նակ բուրբերեն *bāraq*, կիրգիզերեն *bāraq* և չաղաքայե-  
րեն *badaq* բառերը, որոնք նույնպես փոխառյալ են պահլա-  
վերենից:

## 22. Բ Ա Ր Գ Ա Ի Ա Ճ

Հին մատենագրության մեջ գործածվել է «պանծալի»,  
փառավոր, անվանի» նշանակությամբ: Անշուշտ բարդ բառ է,  
որի առաջին բաղադրիչն է բարգ. ծագում է հնիւ. \*bharq  
«լցնել, ուռճացնել» արմատից, որի համար Պոկոռնին տա-  
լիս է \*bharek<sup>U</sup>, \*bhārekū ձևերը (I, 110—111): Յեղակից  
ձևերն են լատ. *farciŕe* «լցնել, լիուլի ցնել», *fartim* «սեղմ  
խիտ», միջին իտալադերեն *barc* «առատություն», ալբան. *bark*  
«ուռուցք», *mbarë* «ամբողջապես, լիովին», լատ. *frequens*  
«հաճախ, շատ, բազում», լիսիւ. *U. prakār, Բ prakre* «ա-  
մուր, հաստատուն» (WP, II, 134, Pok., I, 110—111): Հստ  
ալսմ, հայերենում էլ բարգ պետք է նշանակած լինի «շատ,  
լիովին»: Երկրորդ բաղադրիչը՝ աւան նույնն է աւաչ «ձայն,  
երգ, մեղմ և քաղցր երգ» բառի հետ: Այս բառը փոխառ-  
ված է պահլավերենից. պահլավ. *ձեն* է *āvač*, որը պիտի  
տար հայերեն աւան, ինչպես՝ *arčič* > արսիս, *gač* > գան,  
*dahič* > դահիս, *hančar* > հաննար, *čašak* > փաշակ և այլն:  
Հստ ալսմ, աւան ավելի հին ձևն է, որ միջնադարում  
դարձել է աւաչ, այլև՝ ավան (Արմ., Ա, 799): Բարգավան  
բառի մեջ աւան նշանակել է «համբավ, հռչակ», ուստի և  
ամբողջ բառը նախապես ունեցել է «շատ հռչակված, մեծա-  
համբավ» իմաստը: Լեզուների մեջ սովորական է ձայն բա-  
ռի «հռչակ, համբավ» իմաստն ստանալը. հայերենում հռչակ  
բառը նախապես նշանակել է «ուրախության ձայն, աղա-  
ղակ» և ապա՝ «համբավ»: Պահլավերեն նույն *āvač* բառը  
նոր պարսկերենում ստացել է նաև «հռչակ, համբավ» ի-  
մաստը, որից և փոխառվել են աֆղաներեն, բելուջերեն և  
քրդերեն *āvāz* «ձայն», չաղաթայերեն *avaze* «համբավ»  
և այլն: Աշխարհաբարում բարգաւան, բարգաւանել ստացել



են «լավ զարգացած, բուն կերպով զարգանալ» նշանակութիւնը, երկրորդ բաղադրիչի իմաստի մթազնվելու և անբառի հետ կապվելու հետեանքով, մինչդեռ առաջին բաղադրիչը պահպանել է իր հին՝ «լիովին, շատ» իմաստը: Հնլս. \*bharq կամ \*bharek<sup>U</sup>, bharek<sup>U</sup>, ձևերից հայերեն բարգ ձևի առաջացումը միանգամայն համապատասխանում է հնչյունական օրենքներին:

### 23. ԲԱՐՁՐԱՔԵԱ՞Յ, ԹԵ ԲԱՐՁՐԱՔԻ

Այս բառը միայն մեկ անգամ է գործածվել Բարսեղի «Ճառք վասն վեցօրէից արարչութեանն» գրքի դասական շրջանի թարգմանություն մեջ, հետևյալ հատվածում. «Վասն այնորիկ է երկայն պարանոց ուղտու, զի դիրաւ լիցի նմա ձկտել ի բարձրաբերձ հասակէն առ ի հաւասարութիւն բարձրաբեաց ոտիցն. զի յորժամ խոնարհեսցի և հասցէ ի թաթուսն, համարձակ լինի նմա առնուլ զդարմանս իւրոյ կենացն ի թփոց և ի խոտոց որ ունիցին զերեսս երկրի»: Նշք բերում է այս բառը բարձրաբեաց ձևով և բացատրում «որ ունի զբարձր աքեացս, բարձս և ոտս, բարձրասրուն»։ Նույն ձևով բառս հիշում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում», Ա. Բառի բարդությունների շարքում և բացատրում «բարձր ոտքերով»: Վերջապես, նույն ձևն է բերում նաև Ստ. Մալխասյանցն իր բառարանում:

Կարծում ենք, որ բառարանների մեջ ընդունված այդ ձևը պետք է մերժել, և ուղղել բարձրաբեաց, հետևյալ պատճառաբանությամբ: Բարսեղից բերված հատվածում հիշյալ բառը գործածվում է որպես ածական-որոշիչ ոտն բառի, որը գրված է հոգն. սեռ. հոլովով: Որոշիչը համաձայնել է որոշյալին, ուստի և բարձրաբեաց հոգն. սեռ. հոլովաձև է: Ըստ այսմ, բառի եզակի ուղղականը պետք է լիներ բարձրաբեաց՝ կազմված բարձր և աբ բառերից՝ ի ածանցով, որ կնշանակեր բարձրասրուն, բարձրոտն: Հայկազյանի հեղինակներին թերևս շփոթության

մեջ է գցել Բաբելոն (Բ) բառը, որ նրանք դիտում են իբրև առան-  
 ձին բառ, հիմնվելով միայն երկու վկայությունների վրա. դրանք են.  
 «Եթէ կարասցէ թափել հովիւ ի բերանոյ առիւծու արեացս եր-  
 կուս» (Ամովս. Գ. 12). «Երկու արեացս, զարշապարքն՝ որք  
 ընթացան ի ծառն, և ելին ի դրախտէն» (Լմբ. Ամովս.): Այս  
 երկու նախադասությունների մեջ էլ Բաբելոն ձևի հայցական  
 համարելը կասկածելի է. երկրորդի մեջ հայցական համարելը  
 անբացատրելի է դարձնում նախադասությունը (= երկու ոտ-  
 քերը, զարշապարները, որոնք գնացին դեպի ծառ և ելան զը-  
 րախտից). անհիմաստ է «երկու ոտքերը, զարշապարները գնա-  
 ցին». ավելի ճիշտ կլինեք թարգմանել (վերացնելով ստորակե-  
 տը)՝ երկու ոտքերի զարշապարները գնացին (այս դեպքում  
 կունենանք սովորական փոխաբերություն՝ մասը ամբողջի փո-  
 խարեն): Ինչ վերաբերում է առաջին վկայությանը, ապա ճիշտ  
 հասկանալու համար ստիպված ենք մեջ բերել Ամովսի մար-  
 զարեությունն այդ հատվածն ամբողջությամբ. «Զորօրինակ  
 եթէ կարասցէ թափել հովիւ ի բերանոյ առիւծու արեացս եր-  
 կուս, կամ բլթակ մի ունկան, այնպէս զերծցին որդիքն իսրայէ-  
 լի, որ բնակեալ են ի Սամարիա, դէմ յանդիման ազգին, և ի մէջ  
 Դամասկացոց»: Այս հատվածից հետո է հասկանալ, որ Բաբելո-  
 նը մասնական սեռական է երկու թվականի համար (ոտքերի  
 երկուսը = ոտքերից երկուսը). հմմտ. Եւ կոտորեաց Դաւիթ  
 յասորեաց եւթն հազար կառաց, և քառասուն հազար հետևա-  
 կաց (Ա Մնացորդաց, ԺԹ, 18). Եւ էր ամենայն իսրայէլի հա-  
 զար հազարաց, և հարիւր հազար արանց որ ձգէին սուսեր, և  
 յուզաս չորեքհարիւր յիսուն հազար արանց սուսերաւորաց  
 (Ա մնացորդաց, ԻԱ, 5): Ինչպէս երևում է բերված օրինակ-  
 ներից, թվականների հետ սովորական է մասնական սեռակա-  
 նը, ուստի և Բաբելոն երկուս կապակցությունն մեջ էլ բուն  
 հայցականն է երկուս, իսկ Բաբելոն սեռական: Ի դեպ, Զոհ-  
 րապի հրատարակության մեջ ձեռագրական տարբերակների  
 շարքում բերված է «արաց երկուս» տարբերակը, որ արդեն  
 կասկած չի թողնում մեր բացատրության նկատմամբ, ըստ  
 որում արտագրողն էլ հասկացել է իբր Բաբելոն հոգնակի

սեռական: Ըստ այսմ, աֆեաց բառը պետք է հանել բառացանկից, դիտելով այն որպես աֆ «ոտք» բառի հոգնակի սեռական-տրականի ձև (աք, աքից և աքեաց), իսկ ա-երը, որոնք դիտվել են որպես հայցականի վերջավորություն, պետք է համարել հոր: Համապատասխանորեն բարձրաֆեաց բառի համար պետք է ուղղականը համարել բարձրաֆի:

## 24. Բ Ի Լ, Դ Ա Լ

Այս երկու բառերն էլ հանդիպում են Սյունեցու «Մեկնութիւն բերականին» աշխատության մեջ, հետևյալ հատվածում. «Իսկ առասական է, այսինքն տեսակաւոր անուն, որ զհասարակական ինչ էութիւն ասէ, որպէս մարդ կամ ձի կամ ոչխար կամ արջառ և այսպիսիք ամենայն ազգ կենդանեաց, աճականաց և անաճից: Եւ վասն այնորիկ ասէ հասարակական զայսոսիկ, զի ի սոցանէ բաժանին մի մի անհատ գոյացութիւնք՝ Մարկոս, Ադամ, հայր, որդի, թոռն, խնձորի, տանձի, մանուշակ, շուշան, տլփին, սղոցն, դալն, լոքն, բիւն, կապոյտն, ովկիան: Իսկ սեռականաւ իմն այս ի բազումս կոտորի, որք են առասականք. և այսք են սեռքն. կենդանի, տունկ, բոյս, ոչ կենդանի, աճական, անաճ, ցամաքային, ջրային, երկնային, հրային, օդային, թևաւոր, թռչուն, դազան, չորքոտանի, սողուն, լուղակ, զեռուն, խոտաբուտ, ձեռնընդել, վայրենի, քանզի ամենեքին սոքա ի բազում տեսակաւ բաժանին, զորս առասական ասէ»<sup>3</sup>: Բառարաններում (ՆՃԲ, ԱԲ, ՋԲ) բիլ բացատրվում է «բաց կապոյտ», իսկ դալ «դեղնա-կանաչավուն»: Այս վերջին բառը քննության առնելով՝ Հր. Աճառյանը համարում է դալ-առ բառի արմատը և ծագած համարում հնիս. պարզ dhel արմատի ստորին ձայնդարձով dhլ ձևից: Հետագայում, սակայն, մերժում է թե՛ իր ստուգաբանությունը և թե՛ բառարաններում տրված բացատրությունը, և «Արմատական բառարանում» երկուսն էլ

<sup>3</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 207—208.

համարում է ձկնանուններ, տալով հետևյալ մեկնաբանությունը. «ՆՆԲ սխալմամբ մեկնում է բառս «դալարագոյն ինչ կամ դեղին» և համեմատում է իտալ. giallo «դեղին» բառի հետ: ԶԲ «թուի թէ արմատ դալար և դալուկն բառից»: Այս հիման վրա Աճառ. Բազմ. 1898, էջ 370—1, կցում է դալար բառին և սրա հետ միասին հանում հնիս. dhal արմատի՝ dh| ձայնդարձից: Ուղիղ մեկնությունը տվալ Մ. Աբեղյանը (տե՛ս Բիլ բառի տակ): Իսկ Բիլ բառի տակ գրում է. «ՆՆԲ մեկնում է բառս «բաց կապույտ» և սրանցից է հանում պլուզ կամ բլուզ (վերջին ձևը գոյություն չունի) և համեմատում է իտալ. blu «կապույտ», թրք. buludi «ամսագույն, կապույտ» բառերի հետ: Ավելի խոհեմ է ԶԲ, որ զնում է «թուի բացագույն կապուտակ»: Երկուսն էլ հավասարապես սխալ են: Վերի հատվածում գույների մասին խոսք չկա բնավ, այլ բույսերի և կենդանիների: Հեղինակը շարում է նախ մարդկային սեռի անուններ, հետո բույսեր և հետո ձկներ. այսպես, ձրկան անուն են հայտնապես՝ դլփին, սղոց (սղոցածուկ), լոֆ (այժմ լոբո) և կապույտ. ձկներ պետք է լինին նաև դալ և ովկիան բառերը և մանավանդ բիլ, որ երկու ձկների միջև է գտնվում: ՆՆԲ շփոթվել է կապույտ բառից՝ առնելով գույնի իմաստով, որին հետևել են դալ «դալար», լոֆ «կարմիր»: — Այս պատվական մեկնությունը թեև դրեց ինձ մեր համալսարանի դասախոսներից՝ հայագետ Մանուկ Աբեղյանը»: (Արմ. 1): Դժվար է, իհարկե, հակաճառել երկու խոշորագույն հայագետներին, սակայն մենք կարծում ենք, որ տրված մեկնաբանությունը կարոտ է լրացման: Թյուրիմացություններից խուսափելու համար նախապես ասենք, որ մենք հաշվի չենք առնում այն փաստը, որ հայ նոր գրականության մեջ, հատկապես քնարերգության մեջ, հաճախական գործածություն ունի բիլ բառը «բաց կապույտ» նշանակությամբ: Մեր բանաստեղծները բառարաններից են առել բիլ բառը, և այնուհետև մեկը մյուսից սովորելով՝ գործածել: Այնպես որ, արդի գրականության լեզվում բիլ բառի հաճախական գործածությունը ոչ մի նշանակություն չի կարող ունենալ Սյու-



նեցու հիշյալ հատվածի բիլ բառը բացատրելու համար: Հեն-  
 վելով Մ. Աբեղյանի բացատրություն վրա, Հր. Աճառյանը  
 բիլ և դալ համարում է ձկնանոններ. որովհետև «Նեղինակը  
 շարում է նախ մարդկային սեռի անուններ, հետո բույսեր և  
 հետո ձկներ», ըստ որում ովկիան բառը նույնպես ձկան  
 անվանում է համարում (դժվարանում ենք ընդունել): Ինչ-  
 պես տեսնում ենք, մեծանուն հայագետների համար միակ  
 հիմունքը բառերի շարքն է՝ մարդկային սեռի անուններ, բույ-  
 սերի անուններ, ձկնանոններ: Սակայն իրականում այդ  
 շարքը այլ կերպ պետք է բացատրել. մեջ բերված հատվա-  
 ծում Սյունեցին խոսում է անունների մասին, հակադրելով  
 «հասարակական» և «սեռական» հասկացությունները. հասա-  
 րակականը, ըստ Սյունեցու, այն անուններն են, որոնցից  
 «բաժանվում են մի մի անհատ գոյացություններ». այս վեր-  
 ջինների համար իբրև օրինակ բերում է՝ Մարկոս, Ադամ  
 (հատուկ անուններ), հայր, որդի, թոռն (անձի հասարակ ա-  
 նուններ), խնձորի, տանձի, մանուշակ, շուշան (բուսանուն-  
 ներ), տլիհին (ձկնանոն) և այնուհետև՝ սղոցն, դալն, լոֆն,  
 բիլն, կապոյտն, ովկիան: Օրինակների ամբողջ շարքը դիտե-  
 լով՝ տեսնում ենք, որ սղոց, դալ, լոֆ, բիլ, կապույտ բառերն  
 ունեն որոշիչ հոդ, իսկ մյուսները՝ ոչ. պատճառը պարզ է. բո-  
 լոր մյուս բառերը, այդ թվում և վերջինը՝ ովկիան, գոյական-  
 ներ են, մինչդեռ որոշիչ հոդով բերվածները՝ ածականներ (սղոց  
 բառն էլ՝ ըստ մեր քերականների մեկնություն՝ սուղ-ոց «սղող,  
 կարճացնող, կտրող» է, այսինքն՝ դարձյալ ածական): Ստաց-  
 վում է այն, որ և հոդով բերված բառերը բոլորն էլ ածական-  
 ներ են՝ գոյականաբար առնված (սղոցը, դալը, բիլը, լոֆը,  
 կապույտը): Արդ, եթե ընդունենք էլ, որ դրանցով Նեղինակը  
 ձկների զանազան տեսակներն է անվանում, ապա պարզ է,  
 որ բիլ, դալ և կապոյտ (հավանաբար նաև լոֆ) անվանում-  
 ները տրված են ըստ գույնի: Այս տեսակետից առանձնա-  
 պես ուշագրավ է կապույտ բառը. իսկապես այդ անվանումով  
 ձուկ կա, որ Հր. Աճառյանն էլ հիշում է «Գավառական բա-  
 րարանում»՝ նշելով Երևանի խոսվածքը: Մեղրու շրջանում

Մեղրի գետի ձկների մի տեսակը կոչվում է կիպիտէ, որ է կապուտի(կ)։ Իրոք էլ այդ ձուկը կապտագույն է, ինչպես և Երևանի կապույտ-ը և այլ վայրերի կապուտիկ, կապուտակ, կապուտ և նման անվանումներով ձուկը (մեծ մասամբ գետածուկ)։ Նշանակում է, բիլն և դալն էլ, եթե նույնիսկ իբրև ձկնանուններ են գործածվում, ապա գույն ցույց տվող բառեր են եղել նախապես։ Ըստ այսմ, բիլ «բաց կապույտ» և դալ «դեղնա-կանաչավուն» բացատրությունները, որ տալիս են ՆՀԲ, ԱԲ, ՋԲ, ՃԻշտ են։ Այս եղանակով մենք միավորում ենք Աբեղյան-Աճառյանի մեկնաբանությունները նախորդ բառարանների բացատրությունների հետ. բիլ և դալ (նաև լոՒԲ) գույների անվանումներ են, որոնք գոյականաբար գործածվել են ձկների անվանման համար՝ ըստ գույնի հատկանիշի, ինչպես կապույտ-ը։ Հասկանալի է, որ մեր այս բացատրությունից հետո Հր. Աճառյանի ստուգաբանությունը՝ դալ <հնիս. ձիլ մնում է ուժի մեջ։ Ինչ վերաբերում է բիլ բառին, ապա մենք այն կկապեինք հնիս. bhle-u-o-s «կապույտ, դեղին, խարտյաշ» աճած ձևի պարզ bhēl- «փայլուն, սպիտակ» արմատի հետ (Պոկ. I, 118)։

## 25. Բ Ո Ղ Ջ

Այս բառը մեր մատենագրության մեջ վկայված չէ, արդի լեզվում չի գործածվում։ Մի անգամ գործածում է Երեմիա Մեղրեցին իր բառարանում «խոյլ» բառի դիմաց (էջ 144). նույն տեղում ունի և դրանից կազմված բղջուն բառը՝ «պալարոտ, վրան պալար դուրս եկած» իմաստով։ Բառիս գոյությունը և նշանակությունը հաստատում է արդի գավառականներից Տիգ. բողջոց «վերք, պալար», որից բողջոցվիլ «վրան վերքեր դուրս գալ»,—գրում է Հր. Աճառյանը։ Երեմիայի բղջուն բառը ենթադրել է տալիս արմատի բուղջ ձևը, որի ուն սղվել է ածանցման մեջ։ Ըստ այսմ, պետք է ընդունել բողջ և բուղջ ձևերը։

Երկուսն էլ ծագում են հնիս. \*bhel-/bhol- արմատի \*bhel- և bhōl- ձևերից, ջ աճականով, որի համար հմմտ. գաղջ, ջինջ են: Հնդեվրոպական արմատի իմաստն է «ուռ-չել», որից հայերենում ունենք բեղուն, բեղմն, բեղմնատր, բոլ-որ, բլուր, բուլ (գվռ.) «խմորագունդ», իսկ արմատի \*b| ձևից՝ պալար, պղպջակ և այլն, որոնց մասին մանրամասնորեն խոսում է Հր. Աճառյանը (Արմ., Ա, 1138—1141):

Այս ստուգաբանությունը մենք կատարել էինք, երբ պրոֆ. Գ. Զահուկյանը մեզ տրամադրեց իր նոր ստուգաբանությունները՝ մեքենագիր վիճակում, որոնք և հետագայում հրատարակեց «Պատմա-բանասիրական հանդեսում» (1965, № 1): Այդ հոդվածում նա այս բողջ բառը ծագած է համարում հնիս. նույն արմատի \*bholdhjo կամ \*bholtjo աճած ձևից. անկախորեն առաջարկված այս նույնական ստուգաբանությունները փոխադարձաբար հաստատում են իրար: Նույն հոդվածում պրոֆ. Գ. Զահուկյանը այդ բողջ բառի հետ է կապում բղջախոհ բարդության բղջ բաղադրիչը՝ բիղջ կամ բուղջ սկզբնաձևով: Ընդունելով այդ հիանալի մեկնությունը, գտնում ենք, որ սկզբնաձևը պետք է համարել բուղջ, ինչպես որ ենթադրել է տալիս Երեմիայի բղջուն բառը: Իբրև ապացույց սրա կարելի է հիշել և այն, որ Երեմիան մեղրեցի էր, իսկ Մեղրու բարբառում հին հայերենի ու ձայնավորը դառնում է օ, որից կարելի է ենթադրել, որ նույնիսկ բողջ բառն էլ ստացվել է նախնական բուղջ-ից (հմմտ. սուր > սօր, տուն > տօն և այլն): Ցավոք սրտի Մեղրու բարբառից մեղ այդ բառը հայտնի չէ: Ինչ վերաբերում է բողջ ձևին, ապա նրա գոյությունն էլ հաստատվում է Տիգրանակերտի բողջոց-վիլ բառերով:

## 26. ԳԱՄ, ԳՕՏԻ

Գած արմատը առանձին ավանդված չէ, այն գտնում ենք զգածիլ «1. հագնել, 2. (փխբ.)՝ իր մեջ կրել, համակվել», զգածումն «հագնելը», զգածնուլ «համակվել, զբաղվել»:

զգածուցանել «համակել», մքազգած, խաւարազգած «մութով՝ խավարով պատված», սեազգած «սեռով պատված», առիգած «դէնջակ, գոգնոց» և այլ բառերում: Ծագում է հնիս. *veg* «հյուսել, հանգուցիլ, հյուսվածք, գործվածք» արմատից: Յեղակից լեզուների բազմաթիվ բառերից հայերենին իմաստի կողմից առավել մերձավորներն են. լատ. *velum* «1. վարագույր, 2. ծածկոց, վերմակ, առագաստ», *velo* «ծածկել, պատել, փաթաթել մի բանով, փաթաթել—կապել», կիմր. *gwe* «գործվածք, հյուսվածք», գերմ. *wickeln* «պատել, փաթաթել», *Wickel* «դալար, փաթեթ», անգլոսաքս. *wöcig* «1. պատատուկ, պատաղիճ, 2. օղ, օղակ» և այլն: Այս բառերի համեմատութունից երևում է, որ հայերեն զած արմատն էլ պետք է նշանակած լինի պատել, փաթաթել, որից ինքնին կարող էին զարգանալ հագնել, վրան առնել, ինչպես և փոխաբերական՝ համակվել իմաստները: Արմատի բնիմաստն առավել ցայտուն է մքազգած, խաւարազգած բառերում, որոնց մեջ զգած նշանակում է «պատած»:

Նույն հնդեվրոպական արմատից է ծագում գօտի < գաւտի բառը, որի մեջ ի-ն ածանց է, և արմատն է գաւտ, որ պարզ կերպով երևում է պարեգօտ, ընդգօտել «միասին կապել» բառերում: Ակ. Գր. Ղափանցյանը դեռևս 1927 թ. իր «Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում» աշխատության մեջ շեշտում է աւ—ա լծորդների առկայութունն այնպիսի բառերում, ինչպիսիք են մաւտ (մօտ)—մաւտ (-շիմ), ամաւք—ամաւշ-ել, ծանաւք—հանաւ-շ-ել, (\*ծանաւշել), աւաւտ—աւաւծ-ել<sup>4</sup> և այլն: Նույն աշխատության մեջ նա նկատում է աւ—ա լծորդումին զուգորդող պայթաշփականների պարզեցումը, ինչպես աղաշել—աղաւք, հանաւշել—ծանաւք, աւաւծել—աւաւտ և այլն, որոնց մասին ավելի հանդամանորեն խոսում է շատ տարիներ հետո՝ իր «Ընդհանուր լեզվաբանութւյան» մեջ: Մեզ համար, տվյալ դեպ-

<sup>4</sup> Գր. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում, Երևան, 1927, էջ 3:



քում, կարևոր է այն, որ այս աշխատությունն մեջ ուրիշ բաների շարքում հիշում է նաև զգածիմ—գաւտի բառերը<sup>5</sup>, գտնելով, որ նրանք մեկ արմատից են ծագում:

Գաժ արմատի «պատել, փաթաթել» իմաստը, որ պահպանված է ցեղակից լեզուներից շատերի մեջ, հնարավորություն է տալիս իրար հետ կապել գաժ և գաւտի բառերը նաև իմաստային տեսակետից: Այդ կապը է՛լ ավելի աներկբա է դառնում հին հնդ. wāgura «տոռն, չվան, պարան», հին կորն. guiat «հենք, թել, առասան»: համեմատությամբ, որտեղ նույնպես հնիս. weg արմատից են ծագում: վերջապես, ավելի լավ այդ կապը հաստատվում է հենց հայերեն զգածիմ բառով, որի համար Հայկազյան բառարանը տալիս է նաև «արկանել զիւրև, պատել, մածանիլ» իմաստը՝ համապատասխան վկայություններով:

Այսպիսով՝ հայերեն գաժ (զգածիմ, առիգած) և գոտ-ի միասին ծագում են հնիս. veg արմատից. միակ հանգամանքը, որ կարող էր կասկած հարուցել այս ստուգաբանության նկատմամբ, հնիս. e ձայնավորի փոխարեն հայերեն ա ձայնավորի առկայությունն է: Սակայն դա էլ հեշտությամբ լուծվում է, երբ նկատի ենք առնում հնիս. արմատի եռաստիճանի ձայնդարձը. վաղը-Պոկոնիի բառարանում բերված ցեղակից ձևերի համար նշվում է արմատի երկու ձայնդարձը՝ e և o (veg, vog), հայերենը ներկայացնում է ձայնդարձի ստորին աստիճանը (vəg).

## 27. Գ Ա Ր

Առանձին չգործածվող արմատ է, որ բարդությունների մեջ հանդես է գալիս իբրև երկրորդ բաղադրիչ (այժմ ածանցական դերով)՝ «որևէ ցավով տառապող՝ հիվանդ, հիվանդություն» նշանակությամբ, ինչպես՝ ցավագար, լեզվագար, գլխագար և այլն: Հնում գործածվել է որպես ինքնու-

<sup>5</sup> Պրոֆ. Գր. Չ ա փ ա ն ց յ ա ն, Բնդհանուր լեզվաբանություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 208: 2. Աճառյանը գոտի բառը համարում է բարդ, կազմված գաւ և տի «կապ» բաղադրիչներից:

րույն բառ՝ կազմելով ածանցավոր ձևեր, ինչպես և հանդես գալով իբրև բարդության առաջին բաղադրիչ (հմմտ. անգար, «միգրեն»), գարադուրիւն «աղիքների հիվանդություն, փորհարինք», գարելի կամ գարրելի «ցավալի», գարիլ «ցավ ըզգալ, ցավել» և այլն):

Իրանական փոխառություն է. բառն առկա է Ավեստայում՝ gada ձևով «փշացում, վնասվածք, խաթարում. շարիք, աղետ» նշանակությամբ (Բարթ. 488): Յեղակից է հնդկական gada- բառին, որ նշանակում է «հիվանդություն»: Հր. Աճառյանը նախապես մեր բառը համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով պճլ. gar, պրսկ. gar, garr «բոր, բորոտություն», քրդ. gir, բելուջ. gar «բորոտություն», զենդ. garenu և սանս. gara- «մի տեսակ հիվանդություն», նոր. սլավ. garje «բորոտություն», garjav, garatb «բորել» բառերի հետ: «Արմատական բառարանում» (Գ. 81) հիշելով իր այդ ստուգաբանությունը և մերժելով՝ գրում է. «հյ. գար չի կարելի փոխառյալ դնել այս իրանյան ձևերից՝ նշանակության պատճառով. ինչպես որ չի կարելի դնել ցեղակից՝ ձևի պատճառով. սպասելի էր նախաձայն կ և ոչ գ»: Ավեստերեն gada բառը լիովին համապատասխանում է մեր գար-ին թե՛ ձևով և թե՛ իմաստով, ըստ որում իրանական ծ-ն հայերենում դառնում է ր (հմմտ. nivaēda > նուէր: \*haðazat > հարազատ, frapaðak > հրապարակ և այլն):

## 25. Գ Ա Ի Ա Կ

Բառիս արմատն է գալ, որ առանձին չի գործածվել, սակայն գաւեղ, «մեծ և գեր գաւակ ունեցող» բառը հաստատում է, որ գաւակ-ի ակ-ն էլ ածանց է: Ըստ Հր. Աճառյանի, հայերենից են փոխառվել վրաց և թուշ. ծօջօ «անասունի գաւակ, ողնաշարի ծայրը» բառը (Արմ. 1,527): Ծագում է հնիս. yat «կորացնել, ճկել» արմատից. հմմտ. լատ. vatax, -icis «կոր կամ ծուռ ոտքեր ունեցող», vatius «դեպի ներս ծռված, կոր», գերմանական wapwan «կորություն, ճկվածք». նեղ իմաստով՝ «զիստ», հբգ. wado «զիստ», հսաքս.

suathan «սրունքի ուռուցիկ մասը»: Հայերենի համար այս ստուգաբանությունը անընդունելի կլինիք հնիս.  $\text{t} > \text{հայ. } \text{t}$  փոփոխություն պատճառով, ըստ որում ձայնավորից հետո հնիս.  $\text{t}$ -ն հայերենում դառնում է յ: Սակայն պարզ արմատը պետք է դնել  $\text{va-}$ , ինչպես հավանական է համարում Պոկոտնին (էջ 113)՝ հենվելով լատ.  $\text{varus}$  «դեպի իրար թեքված, կորացած, ծուռտան» բառի վրա: Հայերենը հիմք է տալիս հաստատելու, որ պարզ արմատն է  $\text{va-}$  և միատամանակ երևան է բերում  $\text{p-}$  ու  $\text{w-}$  ածած ձևը (\* $\text{wa-p} > \text{գալ}$ ):

## 29. Գ Ե Ղ Գ Ե Ղ - Ե Լ

Գեղգեղ «բեկբեկ՝ խաղուն ձայնով երգելը», ըստ Հ. Աճառյանի (Արմ., Բ, 124—125) միայն մի անգամ է գործածվել հին մատենագրություն մեջ, մինչդեռ նրանից կաղաված գեղգեղել, գեղգեղանք բառերը մեծ գործածություն են ունեցել դասական շրջանում և այժմ էլ գործածական են՝ գեղգեղալ «դայլայլել, քաղցր ձայնով հնչել», գեղգեղանք «դայլայլ, երգի քաղցր ձայն» իմաստով: Կրկնավոր բառ է. պարզ արմատն է գեղ «երգ», որը «առանձին չէ գործածված, բայց պահված է գեղօն «երգ» բառի մեջ» (Արմ., 125): Այս գեղօն բառը, որ ավանդված է դասական շրջանից, գործածվում է արևմտահայ գրականում «երգ, երգ ու նվագ» և «բալլադ» իմաստներով:

Ծագում է հնիս.  $\text{ghel}$  «կանչել, գոչել, գոռալ» արմատից, որ ցեղակից լեզուներում պահելով այդ իմաստը, տվել է նաև դանազան թռչունների անուններ, ինչպես՝ հին իսլանդերեն  $\text{gjalla}$  «հնչել, արձագանքել», անգլ.  $\text{սաքս. } \text{giallan}$  «գոչել, կանչել, բղավել», հին բարձր գերմ.  $\text{gellan}$  «հնչել, գոչել», հին հյուսիս.  $\text{gala}$  «գոչել, կանչել (աբաղաղի), երգել», անգլ.  $\text{սաքս. } \text{հին բարձր գերմ. } \text{gelan}$  «երգել», նաև՝ «նզովել, կախարդել», հին սաքսոններեն, հին բարձր գերմ.  $\text{galm}$ , միջին բարձր գերմ.  $\text{galm}$ ,  $\text{gelm}$  «ձայն, հնչյուն, աղմուկ», անգլ.  $\text{սաքս. } \text{gealdor}$  «կախարդի երգ», միջին բարձր գերմ.  $\text{gielpen}$  «իրեն գովել, սնապարծել»,  $\text{gelpfen}$ ,  $\text{gelfen}$  «գոչել, երգել, իրեն գո-

վել», անգլ. սաքս gielp, հին իսլանդ. gjalp «մեծախոսութիւն, ինքնագովութիւն», հին սաքսոներեն gelp «հակա-ճառութիւն», շվեդ. galpa «ճովողել, կանչել (թռչունի)», հուն. γελῶ «ծիծեռնակ», որից կրկնութիւմբ κιγλιγ «սարլակ», κίγλιτω «ճովողել, կչկչալ, մեղմ ծիծաղել», սուս. (լատ. Պոկոնոս) galits-ся «ծաղրել, հեղնել», գավառական՝ nagalits «աշխատելիս երգել, չափ տալով ձայնել» և ալլն (WP, I, 628, Pok., I, 428):

2. Աճառյանը «Արմատական բառարանի» հավելվածում (հ. է), շեշտելով հիշյալ բառերի նմանութիւնը հայերեն գեղգեղի-հետ, այնուամենայնիվ, կասկած է հայտնում, նկատի ունենալով բառասկզբի gh > հայ. գ համապատասխանութիւնը: Մեզ թվում է, սակայն, որ այդ դժվարութիւնը վերանում է, երբ հաշվի ենք առնում այնպիսի բառեր, ինչպիսիք են հնիս. \*ghelegʰ > հայ. գեղծ, նիս. \*ghoidhio > հայ գեջ, «խոնավութիւն» և այլն: Ըստ այսմ, Աճառյանի ստուգաբանութիւնը պետք է համարել վավերական:

### 30. Գ Ժ Տ Ե Լ

Գրաբարում գործածվել է ներգործական և շեղոք-կրավորական ձևերով՝ «բարկացնել, զայրացնել, սիրտը ցավացնել» և «նեղանալ, խռովել» նշանակութիւններով: Լիակատար քերականութիւն մեջ (հ. 6, էջ 631) Հր. Աճառյանը արմատն է համարում գժիտ կամ գժուտ, չորոշելով՝ թի դրանցից որն է ճիշտ (իբրև շատուգաբանված բառ): Կարծում ենք, որ ճիշտն է գժուտ, կազմված գիժ բառից, -ուտ (= ուտ) ածանցով: Պետք է դասել հին շրջանի ժողովրդա-խոսակցական բառերի շարքը, որից և թափանցել է գրական լեզվի մեջ: Կազմութիւն և իմաստի տեսակետից համեմատելի է դեւ+ոտ > դիւտ, դիւտել բառը (համտ. նաև Ղարաբաղի բարբառի գժաւ «խենթուկ» բառը, ինչպես և՛ արդի ժողովրդա-խոսակցական գժվել, որ ունի «զայրանալ, իրենից գուրս գալ» իմաստները), և մանավանդ՝ ժողովրդա-խոսակցական դժգուտ «խենթուկ, գիժ դամար ունեցող»:



Հայերենի շատ գործածական վերջածանցներից է -գին, որ սովորաբար կապել են գին «արժեք» բառի հետ, ենթադրելով, թե հիշյալ ածանցով բառերը նախապես եղել են բարդություններ, բայց հետո, գործածվելով իբրև մակբայ, քմբռնվել են որպես ածանցավոր բառեր, և դրա հետևանքով էլ ստացվել է գին մակբայակերտ ածանցը: Այս բացատրությունը այնքան հավանական է, որ բոլորը կարծես թե լուռ կերպով ընդունել են այդ՝ առանց կասկածելու: Եվ սակայն, -գին ածանցով բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա ճիշտ չէ: Նախ՝ այդ ածանցով մակբայներ կազմվում են ժամանակակից հայերենում (կսկծագին, տըրտմագին, խնդագին և այլն), մինչդեռ զրաբարում նա կազմում էր ածականներ (աճագին «աճեղ», ուժգին «ուժեղ, բուռն, հզոր», մոլեգին «խիստ մոլի, կատաղի»), որոնք կարող էին գործածվել նաև մակբայաբար. հմմտ. Հողմ մեծ ուժգին (Ա, Թագ. բ, 6), Ուժգին դռչմամբ... մատուցանէր (Եբրա. Ե, 7), բայց՝ «Զի ուժգին շարժիցի հողմոյ» (Յայտ. Զ, 13): Երբ քննություն ենք ենթարկում այդ ածանցով կազմված այն բառերը, որոնք գործածվել են հինգերորդ դարի մատենագրության մեջ, տեսնում ենք, որ գին նշանակում է «ունեցող, որևէ հատկություն օժտված», ինչպես՝ մոլեգին = մոլություն օժտված, ուժգին = ուժ ունեցող, ուժեղ, մրագին = մութ ունեցող, մթով օժտված = մթին և այլն, մինչդեռ գին բառով կազմված ածականների մեջ գին բաղադրիչը նշանակում է «գին ունեցող, գնող, գնած, գնված», ինչպես՝ մեծագին = մեծ (թանկ) գին ունեցող, քանկագին = թանկ գին ունեցող, արծաթագին = արծաթով (= դրամով) գնված (զրնած), մարգագին = մարգ գնող և այլն:

Այնուհետև՝ գին բառով կազմված ածականները մակբայաբար չեն գործածվում: Նկատելի է, որ գին բառով կազմված ածականները սովորաբար ենթարկվում են ոչ հոլովման, այսինքն՝ գին բառը պահպանում է իր անկախ հոլովումը.

մինչդեռ գին ածանցով կազմված ածականները հոլովվում են ի-ա խառն հոլովմամբ. հմմտ. նարդեան ազնուի մեծագնոյ (Մար. ԺԳ, 3)<sup>6</sup>, բայց՝ «Շարժմանց ահագնից եղելոց ի Բիւզանդիոն» (Խոր., Գ., 52): Այս ամենայն են մոլեզնին արուեստքն (Ճառքնտ., Գ) և այլն: Ուշագրավ է, որ մոլեզին բառը հոգնակիում ունի նաև -եաց ձևը, ինչպես՝ նմանեալ ես մոլեզնեաց (Ճառքնտ., Ա.). դա ցույց է տալիս, որ -գին ածանցն ունեցել է ի բնով հիմք իզական սեռի համար<sup>7</sup>, իսկ այդ էլ նշանակում է, թե այդ ածանցը դեռ շատ վաղ ժամանակներում արդեն ածանց է եղել և, հետևաբար, կապ չունի գին բառի հետ: Նրա հնության օգտին է խոսում նաև այն՝ որ շատ բառերի մեջ նա պարզապես սաստկություն է ցույց տալիս (մոլեզին = խիստ մոլի, կատաղի, մթագին = խիստ մութ և այլն), ինչպես և այն, որ ունենք նրա կրկնակի գործածությունը՝ մեկ բառի վրա, ինչպես՝ ահագնագին: Վերջապես, առանձնապես կարևոր է այն, որ գին բառով կազմված ածականներից բայ չի կազմվում, չի կարելի ասել՝ գանձագնել, մեծագնել, քանկագնել և այլն. անհրաժեշտության դեպքում դիմում են հարադրությունների օգնությունը (օր. գանձագին առնել), մինչդեռ -գին ածանցով կազմված ածականներից ունենք բազմաթիվ բայեր (մոլեզնել, ահագնել կամ ահագնանալ, մթագնել և այլն): Այս բոլորը ցույց են տալիս, որ -գին ածանցը ոչ մի կապ չունի գին բառի հետ: Գրանից ելնելով էլ մենք այն ծագած ենք համարում հնիս. vent ածանցից, որ ունի «-վետ, մի բան ունեցող, մի բանով առատ» իմաստ, և պահպանված է հնդիրանական, հունական ու լատինական ճյուղերում, ինչպես՝ սանս. apavant «չրավետ», հն. oinōris «գինեվետ» և այլն: Մասնիկը բաղադրյալ է, որ կազմված է -ven և -to-ածանցների միա-

6 Կա նաև մեծագնի, բայց դա մեծագին բառի սեռականը չէ, այլ ի ածանցով կազմված բարդածանցավոր բառ. հմմտ. վաճառեալ զդա մեծագնի (Մատ. ԻԶ, 9):

7 Սեռի՝ հին հայերենում պահպանված հետքերի մասին տե՛ս Հ. Ա. Տ ա ո յ ա ն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 292—312:

ցումով<sup>8</sup>: Վերի օրինակները ոչ մի կասկած չեն թողնում իմաստի համապատասխանության վերաբերյալ. ինչ վերաբերում է ձևին, ապա դա էլ ճշգրիտ կերպով ներկայացնում է հայերենի հնչյունական օրենքները. այսպես՝ հնիս. v հայերենում դառնում է գ, հնիս. e-ն ռնգայիններից առաջ դառնում է ի (հմմտ. հնիս. g'en > հայ. ծին), հնիս. n մնում է անփոփոխ, իսկ l վերջավանկում ռնգայինի և հաջորդ ձայնավորի միջև ընկնում է (հմմտ. \*bheronti > բերեն):

Հնդեվրոպական -vent մասնիկի հետ են կապել հայերենի -վեա ածանցը, որ, սակայն, իրավացիորեն մերժում է Հ. Աճառյանը<sup>9</sup>. մեր այս ստուգաբանությունը մի ավելորդ անգամ ևս ապացուցում է այդ մերժման ճշտությունը:

### 32. Գ Ո Ր Տ

Այս բառն ստուգաբանված է կազարդի կողմից իբրև հնդեվրոպական բառ՝ կցվելով լատվ. warde, լիտվ. varlė «գորտ» բառերին: Հյուբշմանն ընդունում է այդ, և Հր. Աճառյանն էլ, բերելով այդ ստուգաբանությունը (Արմ. 1) գրում է. «Հնիս. wordo- ձևից, որի հետ նույն են միայն լեթթ. warde, արևելյան լեթթ. vařglė, լիթ. varlė «գորտ». մյուս լեզուների մեջ գտնում ենք զանազան իրար անհամապատասխան ձևեր, ինչ. հն. βατραχος, լատ. rana, գերմ. Frosch, հբգ. frosk ևն. բառիս այսպիսի այլազան ձևեր ստանալը բացատրվում է գորտին վերագրված հմայական հատկություններով»: Վալդե-Պոկոռնիի բառարանում հնդեվրոպական word արմատ չի ընդունվում, անշուշտ, զուգաբանությունն ունեցող լեզուների սակավության պատճառով, այդպիսի արմատ չունի նաև Պոկոռնիի բառարանը: Գտնում ենք, որ պետք է վերանայել մեր բառի ստուգաբանությունը: Մեր

<sup>8</sup> K. Brugmann und B. Delbrück, Grundriss, II B., I T., SS. 461—5, 664.

<sup>9</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. 3, էջ 115:

կարծիրով, մեր գորտ բառը ծագում է հնիս. au(e)-, aued-<sup>4</sup> aueŕ «խացացնել, թրջել, հոսել» արմատից, որից են նաև հայ. գեա, ուս. вода, водный, հուն. ὕδωρ և այլն:

Հնիս. արմատը զանազան աճականներով ու ածանցներով և ձայնդարձի տարբեր աստիճաններով ձևական ու իմաստային մեծ զարգացում է ստացել ցեղակից լեզուներում: Նախնական իմաստից զարգացել են գլխավորապես հետևյալ հիմնական իմաստային խմբերը. 1. թաց, խոնաւ. 2. թացություն, խոնավություն. 3. ջուր. 4. հոսանք. 5. ջրային կենդանի և այլն: Հայերենը մի կողմից ունի գեա (= հորդահոս ջուր), իսկ մյուս կողմից՝ գորա, որ է՝ «ջրային կենդանի»: Գորտ բառը ձևական տեսակետից ծագում է արմատի yed- տարբերակի -ro ածանցով աճած yodōro yodro ձևից, որ dr > rd հայերենի համար սովորական տեղափոխությամբ դարձել է wordo > հայ. գորա: Իմաստի տեսակետից հայերենի հետ կարող են համեմատվել. սանս. udra «ջրշուն, կուղբ», հուն. ὕδρος «ջրի օձ», հին սլավ. вода «կուղբ», հին հնդկ. udrah «ջրային մի կենդանի», ավեստ. udra «ջրասամույր, կուղբ» և այլն, ինչպես և հատկապես վերը արգեն հիշված՝ լատվ. warde, varglē, լիտվ. variē «գորտ»: Մեր այս ստուգաբանությունը ցույց է տալիս, որ՝ ա) ճիշտ է մեր գորա բառի համեմատությունը լատվ. և լիտվ. բառերի հետ, բ) ճիշտ է կանխադրվել հայերենի հնդեվրոպական նախաձևը՝ wordo, բայց դա հնդեվրոպականից հայերենին անցման ընթացքում dr > rd տեղափոխությամբ առաջացած ձև է yodro-ից, գ) հայերեն և բալթիական համապատասխան բառերը չեն ենթադրում հնիս. մի տարբեր արմատ, այլ հանգում են au(e)-, uyed-, aueŕ- արմատին, որից կանոնավորապես կազմվել է yodro ածանցավոր ձևը:

### 33. ԴԱՂԱՊԱՐ, ՄԱԳՐ

Բերելով այս Դաղապար բառը «Արմատական բառարանում», Հր. Աճառյանը գրում է. «ԴԱՂԱՊԱՐ, «մագր». այսպես



ունի բառ. Երեմ. 72 (նույնը նաև երկրորդ տպագրությունն է մեջ). Ինչ լինելը հայտնի չէ» (Արմ. 1, 616): Սխալագրություն մը են առաջացել և՛ դաղապար, և՛ մագր կեղծ բառերը. առաջինը դաղապար բառն է, որ կա նույն բառ. Երեմ. 75-րդ էջում՝ ԴԱՂԱՏՐ «տապար» ձևով, իսկ մագր-ը՝ տապար բառն է՝ սկզբնատանի շփոթություն մը (Տ և Մ). Ըստ այսմ՝ երեմիայի բառն ուղղելի է՝ ԴԱՂԱՊՐ «տապար», որով և երկու կեղծ բառեր դուրս կգան արմատական բառերի շարքից:

### 34. Գ Ա Ն Գ Ա Ղ

Կրկնավոր բառ է, որի անփոփոխ արմատն է դաղ-ինչպես ցույց է տվել Հ. Աճառյանը (Արմ. Բ, 401): Կրկնություն համար համեմատելի են դոնդող, ծանծաղ և այլն:

Ծագում է հնիս. \*dnel արմատի ստորին ձայնդարձից (dhl). արմատի ժառանգները կան միայն գերմանական լեզուներում՝ նորվեգերեն և շվեդերեն բարբառային dilla «շարժել, ճոճել, թևերը շարժելով քայլել», նորվեգերեն բարբառային dalla, dulla «մանր քայլերով գնալ», հունգերեն dallen «գանդալ քայլել», անգլերեն dally «ժամանակ վատնել, ձգձգել, հապաղել, զվարճանալ», նորվեգերեն diite, dalte «մանր քայլերով գնալ, ցատկոտելով գնալ» (WP, I, 865, Pok., I, 246): Վալչեն հնիս. \*dhel արմատից է հանում հայերեն դողդողալ, և որպեսզի իմաստի կապ ստեղծի հայերենի այդ բառերի ու գերմանական լեզուների նշված բառերի միջև, հնդեվրոպական արմատի իմաստն է համարում «դողալ, մանր քայլերով քայլել»: Հ. Աճառյանը (Արմ., է, 122) իրավացիորեն մերժում է հայերեն դող-ալ բառի կապը գերմանական ճյուղի հիշյալ բառերի հետ և դրանով իսկ հարցականի տակ առնում \*dhel արմատի «դողալ» իմաստը:

Մեր այս ստուգաբանությունը մի կողմից անմիջապես կապ է ստեղծում գերմանական ճյուղի բառերի հետ, իսկ մյուս կողմից՝ կապող օղակ է դառնում զրանց և հա-

լերեն դող, դողդոջ, դղորդ, դղուղ «սարսելը, ցնցում, շարժում» բառերի միջև: Ա. Մեյեն (MSL, 10, 279) «իրար է կցում դողալ, դղրդել, դղորդել, դրդուել, դանդաղիլ իբր կրկնական, հմմտ. սանս. dardirât, dédiéât, հան. ԴՅՄՁԴՅՁՅՁՅՁ «շարժել, գղրղել», ԴՅՄՁԴՅՁՅՁՅՁՅՁ «գղրղալ», լիտվ. drugys «ջերմ», սուս. дрогнуть «ցնցվել», дрожать «գոգալ», լեհ. drzeć, չեխ. drhati, լիտվ. drebù, dredėti «գոգալ», որոնք բոլորը կրամ են մե+ձայնավոր +դ արմատական տարրը» (Արմ. Բ, 401—402): Լ. Աճառյանը, շխոսելով հայերեն դանդաղ, դող ևն բառերի իմաստային կապի մասին, մերժում է Մեյեի ստուգաբանությունը, որովհետև բացի դրդուել-ից, բոլորը դ ունեն մյուս լեզուների բ-ի դիմաց: Մեր դանդաղ բառը իր իմաստով ճշտում է հնդեվրոպական արմատի իմաստը, այն է՝ «թեթևակի շարժվել, շարժման մեջ լինել, մանրաբայլ գնալ (ուս. семенить, գերմ. trippeln): Այս գեպքում միայն հնարավոր է դառնում իրար հետ կապել դանդաղ, դող-ալ, դողդոջ, դոնդոդ «թանձր և մածան նյութ» (գրված նաև դողդող, դանդող), որի սկզբնական իմաստն է «գողգողացող» և որի հետ նույնն են դնդոդ «երերուն, շարժուն», դնդեղ «կակուղ» (Արմ., Բ, 588—589), դղորդ—դղուղ «ցնցում», որից՝ դղորդել—դղրդել. «1. ցնցել, 2. շարժման, ցնցման ձայն հանել, թնդացնել, 3. վախեցնել», դղրղալ «թնդալ» և այլն: Դրդուել բառը, որ Ա. Մեյեն միացնում է նախորդներին, հեռու է մնում հնչյունական անհամասպատասխանության պատճառով: Հիշյալ կրկնավոր և պարզ ձևերի մեջ գտնում ենք ա (դանդաղ, դանդող), ե (դնդեղ), ո (դող, դողդոջ, դոնդոդ, դնդոդ) և ու (դղ-որդ—դղուրդ < դուղ-որդ—գուղ-ուրդ), որոնք ենթադրում են հնիս. արմատի եռաստիճան ձայնդարձի \*dhj, \*dhel, \*dhðl ձևերը:

### 35. ԴԵԳԵՐ, ԴԵԳԵՐԵԼ

Հին մատենագրության մեջ գործածվել է թե՛ առանձին, որպես արմատական բառ, և թե՛ բաղադրությունների մեջ, ինչպես՝ դեգերել, դեգերանք, դեգերումն: Լ. Աճառյանը

(Արմ. Բ, էջ 477), հիշելով այդ բուրբը, իմաստը բացատրում է «մի տեղ կենալ՝ տնտնալ՝ դանդաղիլ, ժամանակ անցկացնել» և «թափառել» իմաստը համարում է նոր. «նոր գրականում բառիս իմաստը փոխվելով եղել է «թափառել»: ՆՆԲ-ն ղեգեր բացատրում է՝ «արմատ ղեգերելոյ, որպէս ղեգերեալ և ղեգերանք», իսկ ղեգերել՝ «թափառել, կալ մնալ ուրեք, և պարապիլ կամ կրթել չիրս ինչ. պատաղիլ, յամել առժամանակ մի, և տատանիլ»: Ինչպէս տեսնում ենք, իմաստները բավական տարբեր են, ուստի և պետք է դիմել գործածություններին՝ պարզելու համար, թե իրոք «թափառել» իմաստը նո՞ր է: ՆՆԲ-ն ղեգեր, ղեգերանք, ղեգերել, ղեգերումն բառերի համար բերում է բազմաթիւ վկայություններ, որոնցից մենք կհիշենք միայն տարբեր իմաստներ զրսեորոզ գործածությունները՝ ընտրելով հնագույնները:

1. Խափանեալ՝ եղև ղեգեր առ յոլով քաղաքօք (ղեգեր = թափառ, թափառական. եղև ղեգեր = թափառեց, շքրջեց): — Ոսկեբերան:

2. Ախորժ է զգինեաց ղեգերանս (= գինու ղեգերանքներ = գինով թմրություն, արբեցություն = գինարբուք): — Ս. գիրք:

3. Վատթարն ի լավ ղեգերանս ածեալ (= զբաղմունք, պարապմունք): — Գործք Արիստոտելի:

4. Զյապաղանացն ի բաց լիցես զղեգերանս (= զղեգերանս յապաղանաց = դանդաղելը և հապաղելը): — Փիլոն:

5. Յահ և երկիւղ մատնեալ՝ կայր ի ղեգերանս (= տատամեւելը, վարանում, տատանում): — Վարք Հարանց:

6. Դեգերեալ գտցէ զնա առ դրունս իւր (ղեգերեալ = նստած մնացած: Հուն. παρῆρως, լատ. assidens): — Ս. գիրք:

7. Ոչ ղեգերին առ դուրս լիոցն (= հաճախել, գալ):

8. Յանկ ղեգերիս պատրաստել պատճառս հնարից (= որոնել, փնտրել, ձգտել):

9. Յարաժամ ղեգերիմ յընթեռնուն (= պարապել, ըզբաղվել): — Նարեկացի:

10. Դեգերէին ի դուրս տան իմոյ (= շրջում էին, ման էին գալիս): — Հովհաննէս կաթողիկոս:

11. Ասպականին ընդ շունս և ընդ գաղանս առնէ զիր զգեգերումն վարուց (= շրջելը, թափառելը, մոլորվելը):

12. Զայն՝ որ առ գինիսն՝ հասարակաց դեգերմունք են (= զբաղմունք, որպես մոլութուն):— Փիլոն:

13. Բազում թախանձանօք և յերկար դեգերմամբ խնդրեսցէ (= ձգտելով, ջանալով):— Փարպեցի:

14. Ո՛վ, յերկինս աստուածային դեգերմամբ (մտօք). (= հածում՝ մտքի):

Բերված վկայությունների մի զգալի մասը V դարից է, ուստի և հետին շրջանի իմաստափոխություն չի կարելի համարել: Արդ, բոլոր օրինակների մեջ եղած իմաստները կարելի է խմբավորել հետևյալ ձևով. 1. Շրջել, ման գալ, 2. գալ, հաճախել, 3. զբաղվել, պարասպել մի բանով, 4. դանդաղել, հապաղել, մնալ, 5. սրոնել, փնտրել, ձգտել, 6. մտքով հածել, 7. վարանել, տատամսել: Իմաստների այս բազմազանությունը և հնությունը մեզ հնարավորություն են տալիս բառը ծագած համարելու հնիս. \*dheu-, \*dhewա- արմատի \*dhewer ձևից, որ նշանակում է «շրջել, շարժման մեջ լինել, շտապել, պտույտ, թափառում, հուլություն, թմրություն, անմտություն»: Հայերենի հետ իմաստի համար հատկապես համեմատելի են. հին ֆրիզերեն *dwilith* «հածել, թափառել, մոլորվել», հնդուս. *dvelja* «դանդաղեցնել, ուշացնել, կասեցնել», հին սաքսոներեն *bidwellian* «պահել, կասեցնել, խափանել», *fordwelan* «հապաղել», անգլ.-սաքս. *gedwolen* «թափառած, ման եկած, մոլորված, խափանված», հին բարձր գերմ. *twalm* «թմրություն», լիտվաներեն *dūlinėti* «աննպատակ այս ու այն կողմ շրջել՝ ման գալ», *dulis* «աննպատակ այս ու այն կողմ քարշ եկող» և այլն (WP, I, 843, Pok., I, 261—267): «Տատանվել, տատամսել» իմաստի համար լավագույնը նույն արմատից ծագած հայերեն դե-դեկիմ «երերալ, տատանվել, տատամսել, կասկածել» բառն է, «թափառել, շրջել» իմաստի համար՝ լիտվ. և հին ֆրիզերեն բառերը, իսկ «դանդաղել, ժամանակ անցկացնել» իմաստի համար՝ հնդուս. և հաքս. բառերը:



Այս բառը, որ նշանակում է «գոնապան» և համապատասխանում է հունարեն *Θυρωρός* բառին, ըստ ՆՀԲ-ի վկայության, մեկ անգամ միայն գործածված է Բարսեղի ճառերի թարգմանության մեջ, հետևյալ ձևով. «Զարքայութեան զփականս նա ունի. դրոյլ է երկնից... ի ձեռն նորա եղիցին քեզ վայելք բարութեանցն» (ՆՀԲ, 1, 643): Կասկածից վեր է, որ բառը կազմված է դր > դուր արմատից, որ նույնն է դուռն բառի հետ (հմմտ. դուրք, ի դրանէ և այլն): Բառի երկրորդ բաղադրիչն է ոյլ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հնիս. -ել, —tel վերջավորությունը. դրանցից առաջինը, որ օրինաչափորեն տալիս է հայերեն աղ, ենթակայական դերբայի հանրահայտ վերջավորությունն է, երկրորդ ձևը այլուստ հայտնի չէ, բայց կա սլավոնական -tel' վերջավորությունը, որ հայերենի աղ-ի զուգահեռն են համարում:

Հայտնի է, որ հնիս. է խուլ պայթականը ձայնավորի ու ձայնորդի միջև դառնում է լ (ինչ. matros > մար, aratrom > արար), իսկ երկու ձայնավորների միջև՝ յ (ինչ. mater > մայր. bhrater > եղբայր): Արդ, հայերենի աղ ձևը կարող էր ստացվել միայն հնիս. ստորին ձայնդարձով -ել ձևից, իսկ tel ձևը օ բնի հետ միանգամայն օրինաչափորեն կտար -ոյլ: Նշանակում է, հայերեն դրոյլ բառը ծագում է հնիս. \*dhur-o-tel դերբայական ձևից: Ուշագրավ է, որ ոչ թե դոնապան, այլ դրոյլ բառն է գործածվել թարգմանության մեջ հունարեն *Θυρωρός*-ի դիմաց, որ նույնպես դերբայական կազմություն ունի:

### 37. ԵՂԵՐ, ԵՂԱՐ

Բառի իմաստն է «ողբ, կոծ». առանձին չի գործածվում, իսկ բարդությունների և ածանցումների մեջ էլ ժամանակակից լեզվում միակ ընդհանրացած ձևն է եղեբ, սակայն հնում եղել է նաև եղար, որից՝ եղարամայր «ողբասաց կին». հետագայում այս ձևն էլ փոխարինվել է ընդհանրացած եղեր- ձևով և դարձել եղերամայր: Ծագում է հնիս. el-/ol- բնա-

ձայնական արմատից, որի ցեղակից ձևերն են հուն. ἄλλος «կնկա նման ճշացող, կնամարդի, կնատ», ἄλλοφύλοισι «ողբալ», ἄλλοιόντι «ողբ. լացուկոծ», ἔλλεος «1. ողբ. 2. ողբերգ, հղերերգ», ἔλλεος «ցավակցություն, վշտակցություն», հին իսլ. jalmr «աղմուկ, տազնապ» և այլն: Ըստ այսմ՝ մեր բառի արմատն է եղ-, իսկ -առ ածանց է (հմմտ. արդար, մեծար, հրածար և այլն). ինչ վերաբերում է -եռ-ին (եղ-եր), ապա կարծում ենք, թե դա ստացվել է նախահունչ ե-ի առնմանությամբ, եթե, իհարկե, դա ևս մի անծանոթ ածանց չէ:

Այս նույն արմատից վալդեն և Պոկոռնին հանում են հայ. աղմուկ բառը, իսկ Պոկոռնին՝ հենվելով Պիզանիի վրա, բխեցնում է նաև աղօբ, ողբ, ողոբ բառերը. դրանցից առաջինն Հր. Աճառյանը շի ընդունում՝ իմաստի անհամապատասխանության պատճառով (աղմուկ հնում նշանակել է «իրարանցում, խառնաշփոթություն, կոխվ»): աղօբ բառի կապը հավանական է թվում, բայց դրա համար աբմատի el-, ol- ձևերի հետ հարկ կլինի կանխադրել նաև al- ձևը, այդ դեպքում կունենանք աղ- արմատը՝ աղ-ա-չել և աղ-ալք(f) բառերի համար: Ինչ վերաբերում է ողբ և ողոբ «լաց, ողբ» բառերին, ապա դրանց ծագումը հիշյալ արմատից վաղուց հայտնի է:

### 38. ԵՐԳ/ՀԵՐԳ/ՀՈՒՐԳ

Թե՛ դրաբարում և թե՛ բարբառներում լայնորեն տարածված ու գործածական բառ է, որ նշանակում է՝ «1. տանիքից բացված անցք՝ լուսամուտ, 2. տուն, 3. տնեցիներ, ընտանիք, գերդաստան»: Դրանից են կազմվել՝ երդակից «հարևան, դրկից», երդահամար «ծխահաշիվ, տների՝ ծխերի թիվը», երդումարդ «տնվոր» և այլն: Բարբառներում գործածվում է երդիք ձևից ծագած զանազան տարբերակներով (հմմտ. Մուշ Ժեյրդիկ, Սեբ. Ժեյրդիկ, Ախց. կր. էրքիկ, Ջղ. յերքիկ, Վն. էրտիս ևն), նախահունչ հ-ով հերդ/հեերդիք ձևերի տարբերակներով (հմմտ. Թբիլ. հիրք, հիրքիկ, նաև՝ էրքիկ,

Ուճգ. հերախս, Երև. հեռքիկ, Գոր. հեքք) և վերջապես հ նախաձայնով և ու ձայնավորով հուրդ ձևի տարբերակներով (հմմտ. Մեղրի հնրդ, Կարճևան հնրդ, Կաքավաբերդ հնրդ (Վարճավար), հնրք (Կուրիս, Գազեմնիս), Ղարարադ հնրք, Մոկք հնրառնս և այլն): Բարբառային ձևերի այս բազմազան տարբերակները համապատասխան հնչյունական օրենքների համաձայն հանգում են երևք նախաձևի՝ երդ- (իք), հերդ(իք) և հուրդ(իք), ըստ որում Մեղրու, Ղարաբաղի, Կաքավաբերդի և Կարճևանի բարբառներում ն-ն ստացվում է նախնական ու-ից:

Նկատի ունենալով այդ երևք ձևերը, մենք դրանք կապում ենք հնիս. per-, perə- «1. մյուս կողմը տանել՝ վարել՝ մղել, 2. ճանապարհ բացել, 3. (իբրև գոյական) մուտք, անցք, 4. նավակ» արմատի perto-/porto- ածանցավոր ձևերի հետ, որոնք օրինաչափորեն տալիս են հերդ, հորդ: Յեղակից լեզուների համապատասխան ձևերն են. ավեստ. pəṛətuš «մուտք, հուն», լատ. portus «գուռ, դարպաս», հին կիմր. rit «հուն», կոռն. rit «ծանծաղուտ», լատ. angi-portus «նեղ անցք՝ անցում», հուն. πύλος «անցք, մուտք, անցում» և այլն: Նույն արմատից են ծագել հայերեն հորդ «անցք, անցում, բացված ճանապարհ», հորդել «գնալ», հորդան տալ «առաջ մղել», նեհորդել «առաջ խաղալ», ուրդ «ջրի անցք, ջրանցք, ջրի խողովակ, ավազան», ինչպես և հերիս: Երդ բառի համար կասկածի տեղիք կարող է տալ perto-> հերդ (ո հոլովում) սպասվող ձևի նախահունչ հ-ի կորուստը, սակայն բարբառներում պահպանված հ-ով ձևերը ցույց են տալիս, որ այդտեղ էլ ունենք հ-ի անկում, ինչպես, օրինակ, war բառի սկզբում, որ ծագում է հնիս. pok'u արմատի ստորին ձայնդարձով pək'u ձևից (հմմտ. նակ հնիս. post>հայ. ըստ են): Դա նշանակում է նաև, որ բարբառային ձևերի նախահունչ հ-ն հետագա հավելում չէ, այլ նախնական հ-ի պահպանումը. մյուս կողմից, բարբառային է և ու ձայնավորներով տարբերակները ճշտորեն համա-

պատասխանում են հնդեվրոպական ձայնդարձի վերին և միջին աստիճաններին: Այս ստուգաբանությունը մերժվում է մեր այն ենթադրությունը, թե հայ. երգ բառը կարելի է ժազած համարել հնիս. rei արմատի ստորին ձայնդարձով ը ձևից<sup>10</sup>:

### 39. Ե Ր Կ Ի Ն (Ք)

Այս բառի համար առաջարկված բոլոր հին ու նոր ստուգաբանությունները մերժված են Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի կողմից, ըստ որում դրանցից ոչ մեկը չի բավարարում դիտական ստուգաբանության սկզբունքներին: Թե՛ հայ հին մատենագրության և թե՛ նորագույն լեզվաբանական դրականության մեջ հաճախ բառը դիտվել է որպես ածանցավոր, կազմված երկ- արմատից և -իճ ածանցից, որ հին հայերենում կենսունակ ածանց է եղել (հմմտ. օրինակ, լուս-իճ):

Մագում է հնիս. \*dei-, \*deja- (\*dejaθ, \*dī, dja) արմատից, որի աճած ձևերն են \*dejeu(o)-, \*deiuo-, \*diuθ-, \*djeu-, diu-, dju-(\*din, \*deino-) և այլն: Արմատի նախնական իմաստն է «փայլել, լուսավորել», որից հուն. δέιτρο «երևալ», սանսկրիտ dī-, abidet «երևալ, ցոլալ», հին հյուսիս. teitr «պայծառ», հոմերյան հուն. δειλός «տեսանելի», ἀριστερός «շատ պարզ, պայծառ» ևն:

Այդ հիմնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են երկու ուրիշ հիմնական իմաստներ, այն է՝ «օր, ցերեկ» և «երկինք»: Առաջին իմաստով ունենք սանս. divā «ի տուէ, ցերեկը», divēdive «օրըստօրե», divase «օր, ցերեկ», հուն. εἶ-δής «լավ եղանակ, լավ ու պայծառ օր», լատ. dies «օր», ռում. di «օր», հին իռլանդ. in-diu «այսօր», կիմրերեն diw, dyw «օր», հայերեն աիւ և այլն: Երկրորդ իմաստի ներկայացուցիչներն են. սանսկրիտ dyāus «երկինք, օր», divya «երկնային», dēva «աստված», Ավես-

<sup>10</sup> «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1971, № 7, էջ 17:



տալի լեզվով՝ daevō «դև», հուն. Ζεὺς, Διὸς, լատ. Deus «աստված», լատ. Jupiter «Յուպիտեր» (= երկնքի աստվածք), հին պրուս. dews, հին իսլանդերեն tivar, հին իսլանդերեն dia, կիմրերեն duiu, կորներեն duy, բրետոներեն doué «աստված» և այլն: Այս «աստված» իմաստը ծագել է «երկինք» իմաստից, ըստ որում աստվածն ըմբռնվել է որպես երկնքի հայր՝ անբ. այդ բանը շատ լավ է արտահայտվում լատիներեն Jupiter աստծու անվան մեջ, որի սեռականն է Jovis, և որը համապատասխանում է հուն. Ζεὺ πατέρα. հին հնդկերեն dyanšpítá «երկնքի հայր» բառերին: «Երկինք, աստված» իմաստն ունեցող այդ ցեղակից բառերը ստացվել են հնիս. արմատի ւ ձայնավորով աճած ձևերից՝ \*dejeuo-, \*diuo-, dieu-, \*diu-, \*dju. (WP, I, 772—773, Pok., I, 183—186): Հայերեն երկ-ին բառի արմատը ծագում է \*d̥ui > \*divi- նախածեղից, որի զուգահեռներն են լատ. Jupiter (սեռ. Jovis, բայց ումբերերեն՝ արական Juepatri), կիմրերեն duiu, կոռներեն duy «աստված»:

Հայտնի է, որ հնիս. \*dw հայերենում տալիս է րկ, ապա՝ և հավելվածով՝ երկ-։ այդպես են ստացվել երկու < հնիս. \*dwo, երկնչել, երկ-իսլ < հնիս \*dwi, երկ-այն, երկ-ար < հնիս. \*dwā և այլն: Պատմականորեն այս \*dw < րկ փոփոխությունը բացատրվում է հետևյալ ձևով. նախ w դարձել է գ (dw > dg), ինչպես ունենք \*wedo > գետ, vasj > զարուն և այլ բառերում. ապա՝ \*d > t, որ օրինաչափություն է: Ստացված \*dw > tg կապակցությունն մեջ նախորդ խուլի առնմանությունամբ ց ձայնեղն էլ դարձել է k (tg > tk). այնուհետև երկու պայթիականներից առաջինը վերածվել է շփականի (Պ), որով ստացվել է Պk, իսկ Պ շփականն էլ, ինչպես հայտնի է հին իրանական փոխառություններից, ավել է ր (Պk > րկ): Հընդ-եվրոպական նույն \*diu արմատից, ինչպես վերը հիշեցինք, ծագում է նաև հայերեն արի «օր, ցերեկ» բառը: Տիւ < հնիս. \*diu (\* = \*diw) և երկ-(ին) < հնիս. \*dui = \*dwi ձևերի միջև ունենք նույն հարաբերությունը, ինչ որ տեւ(ել) > հնիս.

\*dewə և երկ-(այն), երկ-(ար) < հնխ. \*dwa ձևերի միջև, որոնք մեկ արմատից են ծագում (Արմ., Բ, 832—837, Զ, 875):

#### 40. Ե Ր Կ Ի Ր

Այս բառի համար առաջարկված բազմաթիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուբշմանի և Աճառյանի կողմից: Հայագիտության մեջ շատերը, այդ թվում և մենք, համարել են ածանցավոր բառ, կազմված երկ- արմատից և -իւր ածանցից, առանց որևէ իրական տվյալի: Գտնում ենք, որ արմատը ծագել է հնխ. \*dheu-, \*dheya արմատի \*dhüēr (= \*dhwer) ձևից: Հնդեվրոպական արմատը, որ նախապես նշանակել է «շարժվել, շարժման մեջ լինել», ցեղակից լեզուներում ստացել է բազմաթիվ իմաստներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ հիմնական իմաստային խումբերում. ա) շարժում, ընթացք, բ) հույզ, խռովք, գ) մշուշ, մեզ, ամպ, ջուր, դ) խանգարում, արգելք, ե) հապաղում, դանդաղում, դադար, զ) հող, գետին, մակերևույթ, է) մոլորում, մտքի խանգարում, ը) թուլություն, հիվանդագին վիճակ, թ) բուռն շարժում, հարձակում, կռիվ ևն: Մեծ երկիր բառը կապվում է զ խմբի հետ, որի ներկայացուցիչներն են. հին հնդկերեն dhū(i), dhūī «հող, փոշի, գետին, երկրի մակերևույթ», հուն. θίς «կույտ, ավազուտ ասի, ավազաբլուր, բարձունք», միջին բարձր գերմ. düne. հին բարձր գերմ. dūna «լեռան կող», անգլ.-սաքս. dūn «բլուր, բարձրավանդակ, լեռ», անգլ. down «ավազաբլուր, բլուր, բարձունք, բարձրավանդակ» ևն (WP, I, 835—843, Pok., I, 263—266): Արմատի r-ով աճած ձևից բազմաթիվ ցեղակից բառեր կան, որոնք սակայն ունեն է, Ը, Թ խմբերի իմաստը (հմմտ. հին հնդկերեն dhōrana «ընթացք, բուռն շարժում», Ավեստայի լեզվով dvaraiti «շտապում է, գնում է» ևն): Հայերենը, ծագելով այդ ձևից, կապող ողակ է դառնում նախորդ բառերի և սրանց միջև:

Հայերենի համար միակ դժվարությունը ներկայացնում է \*dhw > րկ փոփոխությունը, որ սակայն բացատրը-

վում է շատ պարզ կերպով: Գիտենք, որ հնխ. \*dw հայե-  
րենում դառնում է rկ. այդ փոփոխության մասին մենք խո-  
սել ենք երկիմբ բառի ստուգաբանության մեջ և պարզել,  
որ այստեղ ունենք dw > dg > tg > tk > օk > rk հաջորդական  
փոփոխությունները: Այստեղ էլ համապատասխանորեն ու-  
նեցել ենք dhw > dhg > dg > օg, այսինքն՝ երկու պայթա-  
կաններից առաջինի վերածումը շփականի, որ օրինաչափ  
երևույթ էր նախահայերենում:

Արդ, ստացված ճգ կապակցություն ծ-ն (շփական դ) դար-  
ձել է ր, ինչ-որ հաստատվում է հին իրանական և ասորական  
փոխառություններով (հմմտ. ասոր. šappuša > հայ. շամփուր,  
պահլ. ֆրաթակ > հրապարակ պահլ. niveš > նուէր ևն):  
Այստեղ, ուրեմն, հնխ. dh > օ > r փոփոխությունը միանգա-  
մայն օրինաչափ է, ինչպես որ՝ d > t > օ > r փոփոխու-  
թյունը: Խնդրականը w > g > k փոփոխությունն է. dw > tg >  
tk փոփոխության մեջ g-ի (< \*w) խլացումը նախորդ խու-  
լին առնմանվելու հետևանք է. dhw > dg կապակցության  
մեջ այդ խլացումը չէր կարող լինել, որովհետև նախորդն էլ  
ձայնեղ էր: Մնում է ենթադրել, որ նախապես ունեցել ենք  
երգիր, որը երկիմբ բառի համաբանությամբ դարձել է եր-  
կիր: Մեր այս ենթադրությունը հաստատվում է բարբառ-  
ների տվյալներով, հետևյալ ձևով: Ունենք բարբառներ, ո-  
րոնց մեջ հին հայերենի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղները և պ, կ, տ,  
ծ, և խուլերը անփոփոխ են մնում ր-ից հետո, այդ բար-  
բառներից են Մեղրին և Ագուլիսը: Արդ, այս բարբառներում  
երկիմբ և երկիր բառերի մեջ կ-ի դիմաց ունենք գ (յէրգինք,  
յէրգիր), մինչդեռ ուրիշ բառերում կ-ն մնում է անփոփոխ,  
ինչպես՝ երկան > արկան, երկու > էրկու, էրկայն > էրկէն և  
այլն: Դրանց հակառակ, Ալաշկերտում ունենք էրկիր և էր-  
կիմբ, մինչդեռ երկայն բառի դիմաց՝ յէրգէն (Արմ., Բ, 832—  
843): Սրանից մենք եզրակացնում ենք, որ հնագույն հայե-  
րենում ունեցել ենք երկիմ և երգիր ձևերը. դրանց փոխա-  
դարձ համաբանությամբ որոշ տեղերում երկրորդի գ-ն է  
դարձել կ և ստացվել են երկիմբ, երկիր, իսկ որոշ տեղերում,  
ընդհակառակն, առաջինի կ-ն է դարձել գ և ստացվել են

երգիւնք, երգիւր ձևերը, որոնք և անփոփոխ կերպով մնացել են այն բարբառներում, որոնց մեջ ձայնեղները *բ-ից* հետո փոփոխութեան չեն ենթարկվում: Սրանով լուծվում է հնիս. \*dhw > հայ. րկ (<րգ) համապատասխանութեան հարցը, և երկիւր բառի ծագումը հնիս. \*dhwēr ձևից միանգամայն բացատրելի է դառնում:

#### 41. ԸՆԶՈՒԻԼ, ԸՆԾՈՒԻԼ

Գործածվել է հին մատենագրութեան մեջ՝ «ծլել, ծագել, բխել, ճառագայթել» իմաստներով: Հր. Աճառյանը արմատն է համարում ինձ, իսկ ու-ն՝ մասնիկ: Նույն արմատի հետ է կապում նաև ընձիւլ/ընծիւլ, որի մասնիկն է համարում -իւլ: Մեր կարծիքով ընձուիլ բառի արմատն է ձիւ/ծիւ, իսկ ըն նախածանց է, ինչպես և ընձիւլ/ընծիւլ բառի մեջ: Երկուսի մեջ էլ ունենք ծիւլ/ծիւ արմատը: Ընձիւլել բառն ստուգաբանել են Շեֆտելովիցը և Պեղերսենը. առաջինը մեր բառը կապում է հին իսլ. kioln, հին բարձր գերմ. kil «ծիւլ», անգլ. quill «փետուր» և գերմ. Kiel «փետուրի ցողունը» բառերի հետ. երկրորդը՝ հուն. γει-γίλος «նորածին», գոթ. keinen «ծլել», լիտ. židėti «ծաղկել» բառերի հետ: Պոկոռնին՝ միավորելով այդ երկուսը, հայ. ընձիւլ/ընծիւլ-ը, ծիւ, ծիւլ, ծեղ բառերի հետ դնում է հնիս. g'ei-, gi- «ծլել, բողբոջել, բացվել (բողբոջի, ծաղկի), ծաղկել» արմատի տակ, համեմատելով գոթ. keinan «ծլել, բողբոջել», անգրա. cinan «պայթել, բացվել», հին սաքս. kimo «բողբոջ, ծիւ, ընձուլ», հին բարձր գերմ. kil «սեպ», լատիշ. zēiju, ziēt «ծաղկել, երևալ», լիտվ. žy'd(ži)u, žydėti «ծաղկել»: Վերջին անգամ, այս ստուգաբանութեան վրա հենվելով, իրար հետ կապեց հայ. ծիւ, ծիւլ, ընձիւլ, ծիւ, շիւ բառերը Պ. Բեդիրյանը<sup>11</sup>, ավելացնելով նաև ճիւլ, ճեղ և հարակից բառերը: Ընդունելով ծիւ, ծիւլ, ծեղ, ծիւ (ընձիւլ) բառերի ծա-

<sup>11</sup> Պ. Բեդիրյան, Մի քանի ստուգաբանություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 139—146:



գումնաբանական միասնությունը<sup>12</sup> և միացնելով դրանց նաև  
ընծուիլ բառը, հարկ ենք համարում ավելացնել հետևյալը:

Հնդեվրոպական արմատը պահվել է միայն հայերեն,  
բալթիական և գերմանական լեզուներում, ըստ որում գեր-  
մանական և բալթիական ձևերի համար կանխադրվում է d-ով  
աճած ձև (gēid-/gi-d), ինչպես և -lo/-la մասնիկը (հմմտ.  
հին բարձր գերմ. kidel «սեպ»): հայերեն ծիլ, ծեղ ձևերը  
ենթադրում են gi-lo, gēlo ձևերը. ինչ վերաբերում է ծիւլ  
և ընծիւղ, ընծուիլ բառերին, ապա իւ երկբարբառի համար  
պետք է կանխադրել նաև gēu- ձևը, որից կարող էր ստաց-  
վել ծիւ. լիղ-ով ձևերն առաջանում են -lo/-la մասնիկով  
ձևից. gēu- պարզ ձևից է ինչպես ծիւ բառը, այնպես էլ՝  
ընծուիլ (\*gēu > (ըն)ծիւլ, ընծիւիլ > ընծուիլ/ընծուիլ): Ըն-  
ծուիլ բառի երկու՝ «ծլել, բողբոջել» և «ճառագել» իմաստնե-  
րը նույնպիսի հարաբերության մեջ են իրար հետ, ինչպես  
շառաւիղ բառի «ոստ, ճյուղ» և «ճառագայթ» իմաստները:

## 42. Թ Ե Ի

Իմաստի մեծ զարգացում ստացած և մեծ թվով բա-  
ղադրություններ ու զարձակածներ կազմող բառ է, լայնորեն  
գործածական թե՛ հին մատենագրության մեջ, թե՛ ժամանա-  
կակից գրական հայերենում: Նախնական իմաստն է «թռչու-  
նի թև», ապա՝ «ձկան լողակ, մարդու բազուկ, նավի դեկ»  
և այլն: Ծաղում է հնիս. pet արմատի ստորին ձայնդարձով  
pte ձևից՝ -wo ածանցով: Յեղակից լեզուներում իմաստային  
զուգաբանություններն են. հուն. πτερόν «փետուր, թըռ-  
չունի թև, ծառի ճյուղ կամ տերև», πτερόν «թռչունի թև,  
թռիչք, թռչուն, լողակ, հագուստի թևք, սրի բերան, տերև»,  
սանս. pátra «թև, փետուր», pátara «թռչուն, թռչող,

<sup>12</sup> Ծիւղ, ցեղ, ցիղ և այդ խմբի մյուս բառերի կապը ծիւ, ծիւլ, ծիւ,  
ընծիւղ բառերի հետ չենք բնորոշում. առաջին խմբի (ծիւղ ևն) բառերի  
մեր ստուգաբանությունը տե՛ս «Բանբեր նրևասի համալսարանի», 1968, 1,  
էջ 173—174 (ստորև՝ § 70):

փախստական», հրգ. fēdara, անգսք. fēðer, անգլ. feather, հին իսլ. íjadr, լատ. penna «փետուր» և այլն: Նույն արմատից են ծագում նաև հայերեն քիռ, քեր, քերք, քեղ, թաքչի՛մ (թաքեայ) բառերը, որոնց մասին մանրամասնորեն խոսվում է «Արմատական բառարանում»՝ յուրաքանչյուրի տակ:

Կասկածից վեր է, որ այս արմատի հետ է կապվում նաև հայերեն փետուր բառը, բայց ինչպե՞ս: Գ. Բ. Զահուկյանը (Очерки, 103, 106) հակված է ընդունելու, որ այստեղ ունենք հնիս. ք>հայ. փ համապատասխանություն, որ նկատվում է նաև այլ դեպքերում, ըստ որում այդպիսի դեպքերի զգալի մասը նա դիտում է իբրև հայերենի տարբեր շերտերի պատկանող իրակություններ: Մենք կարծում ենք, որ կարելի կլիներ բացատրել պարզապես հնիս. ք>ք՝ անցումով, կանխադրելով \*pet-ıcr-o (-tor դերբայական ածանցով կազմված ձև) և ք>ք՝ անցումը համարել տարնըմանություն հետևանք (երկու պարզ խուլերից առաջինի վերածումը շնչեղի): Համենայնդեպս, այս բացատրությունն էլ մնում է սոսկ իբրև վարկած, թեև փետուր բառի կապը \*pet- արմատի հետ ոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

### 43. ԹՈՒՇ, ԹՈՒՌ, ԹՈՒՐԾ

Թուշ «այտ» բառի հնագույն գործածությունը, ըստ Հր. Աճառյանի, 13-րդ դարից է, բայց մեծ տարածում ունի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան բարբառներում և ամենուրեք գուրս է մղել այս բառը: Նույն բառի հետ ենք կապում նաև քուռ բառը, որի մասին Հր. Աճառյանը գրում է. «անստույգ բառ. մեկ անգամ գործածել է Փիլ. տեսակ. էջ 17. «Պատաս և թուռս մարդկան ուտելով». որի՞ց քուալիր՝ նույնպես մեկ անգամ գործածված Ա.գաթ. «Գոռչիցն փքուռոյց լնդօք, թուալիր օղով, փողիցն այտմամբ»: — Բառ. Երեմ. էջ 122 մեկնում է քուռս «թուշ», ՀՀԲ քուռ «այտ կամ թուշ», քուալիր «թշալիր, այսինքն ի թուշս լցեալ և կամ զթուշս լցուցանող և ուռուցանող, որպիսի է օղն կամ փուրն, որ ի հարկա-

նելն ուրուք զփողս՝ լցուցանէ զթուշն և զբերանն», նշք թուռ «բերանալիր, լցուցիչ բերանոյ» թռալիր «բերանալիր որպես պատառով, լի և ուռուցիկ, և որ ինչ լնու զբերան իբրև զպատառ»։ Ջք թուռ «պատառ», թռալիր «թուշերը լեցուն՝ ուռած», իսկ ԱԲ ըստ սովորութեան միացնելով երկուսը՝ թուռ «մեծ պատառ. 2. թուշ», թռալիր «թուշը լեցուն, թուշը լըցնող»։ Սրան պիտի պատկանի նաև հասկաթուռ «ատոք հասկով» Ազաթ. որ սակայն «հայտնի չէ, թե ինչպես պետք է միացնել նախորդներին» (Արմ. Բ, 1311—1312)։

Մենք կարծում ենք, որ երկու թուռ բառերը երկու տարբեր հատվածներում, նախապես նույն բառն են եղել և միևնույն «ուռչել» իմաստով. այդ իմաստով էլ գործածվել է թուռ բառը թռալիր և հասկաթուռ բարդությունների մեջ։ Նախնական այդ «ուռչել» իմաստից զարգացել է «թուշ, այտ» նշանակությունը։ Ըստ այսմ, բերված վկայությունների մեջ թուռ առանձին գործածությամբ ստանում է «թուշ, ուռած» իմաստները. այս երկու նշանակությունները նույնպիսի հարաբերության մեջ են, ինչպես այտ «թուշ» և այտնուլ «ուռչել» բառերի նշանակությունները (այտ բառն էլ, ինչպես ցույց է տալիս ստուգաբանությունը, նախապես նշանակել է «ուռած»)։ Այս երկու իմաստների միասնությունն ինքնին ցույց է տալիս, որ թուռ «թուշ» բառի բնիմաստն էլ եղել է «ուռչելը. ուռած», որով և վերանում է Հր. Աճառյանի արտահայտած անորոշությունն ու կասկածը հասկաթուռ բառի թուռ բաղադրիչի «ուռած, ատոք» իմաստի «այտ» իմաստին կապվելու մասին («հայտնի չէ թե ինչպես պետք է միացնել նախորդներին»)։ Նշանակելով «ուռած, 2. այտ (դարձյալ որպես «ուռած»), թուռ բառը մեկ բարդության մեջ հենց այդ նշանակությամբ է առնվել (հասկաթուռ «հասկն ուռած՝ լցվելով փքված, հասկն ատոք»), մյուսի մեջ պարզապես «թուշ, այտ» նշանակությամբ՝ «թշերն ուռած» (կապակցությունն ինքը այդ իմաստն է թեև լադրում. «գոչում է փքով ուռած լինդերով, թշերը լցրած օդով, կոկորդի ուռչումով»)։ Ինչ վերաբերում է Փիլոն թուռ («պատառս և թուռս մարդ-

կան ուտելով») բառին, ապա, մեր կարծիքով, ավելի հարմար է «Նացի պատատուկ» իմաստով հասկանալ (պատառս և թուռս = պատառներ և պատատուկներ), և այդ դեպքում այս բոլոր բառն էլ իր նախնական իմաստով կկապվի «ուռչելը» բնիմաստի հետ («պատատելով ուռուցիկ ձև ստացած հաց»)։ այս բացատրությունն, անշուշտ, մնում է լոկ ենթադրություն և կարոտ է հաստատող կամ բացահող քննություն։

Այսպիսով, ընդունելով, որ բոլոր «թուռ, այտ» և բոլոր «ուռած» (թուալիր, հասկաթուռ) բառերը մեկ արմատ են ներկայացնում, մենք այդ արմատը կապում ենք բուռ «այտ» բառի հետ, որի նախնական իմաստը ևս համարում ենք «ուռչելը, ինչպես այտ բառի բնիմաստն է\*։ Երկու բառն էլ մենք ծագած ենք համարում հնիս. tēa-, tēu-, teḡa-, tūḍ-, tū- «ուռչել» արմատի ր-ով աճած -so ածանցավոր \*turso ձևից. րs կապակցությունը հալեթեհում տալիս է՝ n և րշ (հմմտ. \*tərs > քառ-ամ և քարշ-ամ), ուստի և \*turso-ից պետք է ունենալինք բուռ և բուրշ, սակայն րշ կապակցությունից ր-ի սովորական անկումով (հմմտ. քարշել > քաշել, խարշել > խաշել, թորշումել > թոշումել, կարշն > կաշնբուռն > կաշմբուռն և այլն) ստացվել է բուռ։ Հնդեվրոպական արմատը բազմաթիվ աճականներով (bh, g, k, l, m, n, r, s, t) աճած ձևեր ունի, որոնք նախնական «ուռչել» իմաստի զարգացումով տվել են բազմազան նոր իմաստներ, ինչպես՝ «հաստ, խիտ, թանձր, գեր, թիվ, մեծ թիվ, հազար, շատ, աճել, մեծանալ, զարգանալ. ուռուցք, պալար, հաստություն, գիրություն, բարձունք, բլուր, ցցունք, երկիր, ժողովուրդ, մթություն, ցուլ. ուժեղ, ուռած» և այլն, և այլն։

Չևի և իմաստի կողմից մեր բոլոր և բուռ բառերի հետ համեմատելի են. հին հնդկ. turá «ուժեղ, հարուստ, ա-

\* Որ բուռ «այտ» բառը կապված է «ուռուցիկություն, ուռչելը» իմաստի հետ, լավագույնս ցույց է տալիս oṛi t'ūś կապակցությունը, որ նշանակում է «նստուկի փափուկ և ուռուցիկ մասը»։



ասա», հան, տորճ (<\*tuo- rō-s) «կայտ, գեղ», տորճ «պա-  
 նիր», լատ. turgeo,- ere «լցված լինել, լիուլի լցվել» և  
 արլն: Իմաստի համար («ուռչել», իմաստից մարմնի մասերի  
 անվանում) համեմատելի են. հրգ. dioh, անգլ.ք. deoh  
 «ազգր», հին իսլ. þjo «նստուկի ուռուցիկ ու փափակ մասը,  
 նստուկի թուշ» (ճիշտ ու ճիշտ համապատասխան հայերեն  
 օբի t°uՏ-ին), կիմբ. tin «նստուկ», հան, տլէ. տլն: «ուռուցք,  
 կոշտուկ, կուղ, սապատ, ցից, եղունգ, ճիրան, penis», ար-  
 tul «առանց ոտկրի միտ, ազգր, հացի՝ պտղի միջուկ», հին և-  
 կեղեցասլավ. tulъ «ծոծրակ, շլինք», ուսն. ТУЛ «հետի  
 կողմը, հետև, թիկունք», ТОЛСТЫЙ «հասա» և արլն: Նույն  
 արմատի ր աճականով և -ց'ո մասնիկով түрг'о ձևից ծա-  
 դած ենք համարում նաև рուրծ «աչտ, թուշ» բառը, որ  
 գործածվել է մեր հին մատենագրության մեջ. ց'о ածանցի  
 համար համեմատելի է լատ. turgeo, -ēre «լցված լինել, լի-  
 ուլի լցվել»: Նույն արմատի tēu պարզ ձևից է ծագում հալ-  
 բիւ և tu—rho ձևից՝ рուփ, որոնց մասին տե՛ս Պոկ. I,  
 1080 և Արմ., Բ, 1323:

#### 44. Ժ է S/ժ է S

Գործածվում է միայն բարդությունների մեջ՝ -ժեա/-ժէա/  
 -ժաա/-ժոա ձևերով (ախտաժետ/ախտաժէտ, դիւաժետեալ/  
 դիւաժատեալ, լուսնաժէտ «լուսնահար, լուսնոտ», նենգաժետ/  
 նենգաժոտ/նենգժուտ և արլն): Հր. Աճառյանը ստուգաբանում  
 է իբրև իրանական փոխառություն (Արմ. է, 136), գրելով.  
 «պհլ. žatan, zatan զարնել, հարվածել, սպանել», զնդ.  
 jan պրս. ٭ج; zadan «զարնել...»: Ենթադրել է տալիս ախ-  
 տաժեա իբր զնդ. axti-jatya, ինչպես ունենք paiti > պեա.  
 բստ այսմ զնդ. ախտաժեա նշանակում է «ախտահար»,  
 մյուսները (նենգաժետ են) կազմված նույն ձևով: Ստուգա-  
 բանությունը միանգամայն ճիշտ է, բայց կուզեինք ավե-  
 լացնել հետևյալը. հայերենում տարբեր գրչությունները

սխալագրություններ չեն, այլ հին իրանական (հին պարսկական և ավեստերեն) *gan* «խփել, հարվածել» բայի անորոշ դերբայները. *jaidyai*, *jaiti*, բացարձակը՝ *jatəm*<sup>13</sup>:

Հայերենի շորս ձևերից երեքը՝ ժէտ, ժետ, ժատ ուղղակիորեն կապվում են այդ դերբայների արմատների հետ իրենց ձայնավորական հերթագայությամբ *jaiti* > ժէտ, *jatəm* > ժատ, -ժետ ձևի (է-ի փոխարեն է) բացատրությունը տվել է Աճառյանը. ինչ վերաբերում է նենգժոտ/նենգժուտ ձևին, ապա մեր կարծիքով այդտեղ կամ ունենք մի անհայտ ածանց, կամ, որ ավելի հավանական է՝ ժետ բաղադրիչը իմաստի և ինքնուրույնության միազնուսմով վերածվել է -ժոտ, ժուտ ածանցների, ըստ որում, եթե մյուս բառերի մեջ ժետ/ժատ-ի ինքնուրույնությունը գիտակցվում է նաև այսօր, ապա՝ նենգաժետ/նենգժետ/նենգժուտ բառերի մեջ այդպես ցայտուն կերպով չի առանձնանում, և իմաստով նույնանում է նենգոտ բառի հետ: Այս դեպքում -ժոտ/ժուտ ածանցի վերածված բաղադրիչի առաջացումը կարելի կլինի դիտել իբրև բաղադրկության (կոնտամինացիայի) հետևանք: Այսպիսով, հին հայերենի այդ երեք տարբերակների (ժէտ/ժետ/ժատ) գոյությունը ցույց է տալիս, որ հին հայերենում դա եղել է մի կենսունակ բառ, որ պահպանելով իրանական ձայնավորական հերթագայությունը, պահպանել է նաև դրանց միասնությունն ու կապը և կազմել նորանոր բառեր:

#### 45. Լ Ե Ս Ո Ւ Լ/Լ Ո Ս Ե Լ

Հնագույն իմաստն է «ճմլել, ճզմել», որից՝ «մանրել, փշրել, փոշիացնել», բարբառներում լայնորեն գործածվում է արմատի ո ձայնավորով ձևը՝ լոսել, որ բացի «մանրել» նշանակութունից ունի նաև «հեսանել, հեսանով սրել» իմաստը. իմաստային այս անցումը կապված է արմատի հնագույն (հնդեվրոպական) «տրորել» նշանակության հետ:

<sup>13</sup> Ch. Bartholomae, Altiransches Wörterbuch, էջ 490, 603:

Ծագում է հնիւ. kleik' - «ցավ պատճառելով տրորել, ճնշել, ճզմել, ճմլել» արմատից, որի ժառանգներն են. հին հնդկ. kliṣnati «տանջված», sam-kliṣ «ճմլել», լիտ. kliše «ունելի», եկեղեցասլավոնական klešta «ունելի», kleštiti «ճմլել, տրորել», ռուս. (բարբառային) клесть «ճնշել, ճմլել, ճզմել», клеши «ունելի» և այլն (Պոկ., 602): Հնիւ. k բառակզբում l-ից առաջ հայերենում ընկնում է (հմմտ. kleu- > հայ. լու (լսել բայի արմատը). kleitno > հայ. լեառն և այլն). ei երկբարբառը հայերենում պետք է տար է, որից՝ լիսուլ (և ոչ՝ լեսուլ). սակայն լես և լսս ձևերի e/o ձայնդարձը թույլ է տալիս կանխադրելու հնիւ. արմատի klek', klok' շրնդարձակված տիպը, որով վերանում է հնչյունական անհամապատասխանության խնդիրը:

#### 46. Լ Մ Ե Լ

Արմատն է լում, որ պահված է դիւրալում «հեշտ լմվող, կակուղ» բարդության մեջ. պարզ լմել բայը նշանակում է «ճմլել, ճմռել, կակղացնել», կրկնական կազմություններ են լմլմել, լմլմռել (կա նաև լումլումել, որ բարբառային ձև է՝ ու > ո փոփոխությամբ): Ծագում է հնիւ. lem-/lom- մանրացնել, «մանրացված. կակուղ, փափուկ» արմատից: Զուգահեռներն են. ալբ. lemë «կալ. ձիթհանք», հին բարձր գերմ., հին սաքս. lam, հին իսլ. lami «անդամալույծ, հաշմ», լատիշ. l'imstu, l'imt, լիտվ. limte «բեռան տակ կքել», հին բուլղ. loml'jǫ «կոտրել, ջարդել», ռուս. лом «նիզ», հոգն. ЛОМЫ «ջարդվածք, կոտրվածք» և այլն (Պոկ., 674): Հայերենն ըստացվել է արմատի միջին աստիճանի ձայնդարձից՝ lom, որ պահված է նաև գերմանական և սլավոնական լեզուներում<sup>14</sup>:

<sup>14</sup> Ինչպես մեզ հայտնեց պրոֆ. Գ. Բ. Զահուկյանը, այս ստուգաբանությունը մեզանից անկախ առաջարկել է ինքը՝ իր «Հայ բարբառագիտության ներածության» մեջ:

Ավանդված է դասական շրջանից. բառարանները բացատրում են «ծիլ, ընձյուղ կամ արմատի մազմզուք» (Արմ., Գ, 458): Ծագում է հնիս. \*sqel-, \*skel- արմատից, որի բուն իմաստն է «ճեղքել, պատռել», բայց որից զարգացել են «կեղև, պատիճ, հատիկ» և նման իմաստներ ինչպես՝ հին հնդկերեն kánah «հատիկ», լատ. siliqua «կեղև, պատյան», ալբաներեն hal'r «փուշ, քիստ», անգլ.-սաքս. sciell «պատիճ, պատյան», միջին բարձր գերմ. schelle «պտղի պատիճ», հին բարձր գերմ. scala «պատյան, պտղի կեղև» և այլն: Արմատի շեղբ և խեղբ հայերեն ձևերը նույն հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին կա շեղ (շաղ, շիղ) և խեղ բառերի միջև, որոնք ծագում են այլ իմաստով, բայց նույն ձևով (\*sqel «ծռել, ձկնել») արմատից: Առհասարակ հայերենի շ-ի ծագումը հնիս. զ-ից մութ է, թեև շատ բառերի մեջ է հանդիպում: Ինչ վերաբերում է խ-ին, ապա օրինաչափ է զ(kh) > խ փոփոխությունը: Այնպես որ, թե՛ իմաստի և թե՛ հնչյունական օրենքների տեսակետից \*qelp, khelp > խեղբ միանգամայն օրինաչափ է: Ծղել, պատռել իմաստից ոստ, ծիլ, ընձյուղ իմաստի զարգացման համար համեմատելի են նյուղ, նեղ՛, նող բառերը, որոնք նույնպես մեկ արմատից են ծագում:

## 48. Խ Ե Ղ Ե Փ

Ավանդված է դասական շրջանից և նշանակում է «մի ամբողջի կեսը, մազերի երկուսի բաժանված հյուսքերից ամեն մեկը», ըստ «Առձեռն բառարանի» նաև «ջուխտակք, երկուտրեակ»: Լայնորեն գործածվում է արդի բարբառներում՝ «ընկույզի միջուկի յուրաքանչյուր կեսը, ընկույզի միջուկը» իմաստով՝ խեղէփ, հեղէփ, հեղափ ևն ձևերով (Արմ., 2, 459—460):

Ծագում է հնիս. \*(s)qel «ճեղքել, պատռել, կտրել» արմատի\*\_qelep ձևից. նշանակության համար մեր բառի հետ



համեմատելի են հին հնդկերեն *kálpate* «գասալորվել կարգով, բաժին-բաժին արվել, բաշխվել» *kalpáyati* «բաժանում է, բաշխում է», անգլ. սաքս. *scielle* «բակլայի՝ ոչոռի են պատիճ՝ փոճուկ», հին բարձր գերմ. *scala*, անգլ. սաքս. *scealu* «պատյան, կեղև, պատիճ», *sceallan* «երկվորիք, փոշու», հին սաքսոն. *scola*, անգլ. սաքս. *sceolu* «բաժին, մաս, խումբ», լատ. *siliqua* «կեղև, պատյան», սլովերեն *ščalja* «պատառ, կտոր», գոթ. *halbs* հին իսլանդ. *halfr*, անգլ. սաքս. *healf*, հին սաքսոն. *half*, գերմ. *halb* «կես, մաս», սերբ. խորվաթ. *prökola* «մի ամբողջի մասը», սուս. բաշխում «բաժանում, ճեղքում» և այլն (WP, II, 591—596, Pok., I, 923—927): (S)qel- արմատի (s) qelep ձևն իր ժառանգներն ունի հնդկական, իրանական, հունական, իտալական, գերմանական ճյուղերում: Հայերենի խնդեփ ձևը կարող է առաջանալ առանց s-ի ձևից, q(kh) > խ համապատասխանությունը միանգամայն օրինաչափ է: Դժվարաթյուն է հարուցում վերջին փ հնչյունը: Հնիս. p ձայնավորից հետո սովորաբար դառնում է ւ (օր. \*septm > եւթն), ուստի և պետք է ենթադրել ph-ով աճած \*qeleph նախաձևը: Բարբառների մեջ խ > հ փոփոխությունը տարնմանություն հետևանք է, ինչպես խաղող > հաղող, խաղ > հաղ բառերում:

#### 49. Կ Ա Ս Ա Ր

Բառիս նախնական իմաստն է «գազաթ», որից ստացվել են՝ «ծառի վերին մասը՝ գազաթը. աքաղաղի բբուկ. ծայր, վերջ, ավարտ», ապա և՝ «գործադրություն» իմաստները: Ծագում է հնիս. *geu* արմատի *gəð* տարբերակից: Իմաստի տեսակետից մեր բառի հետ համեմատելի են. լիտվ. *gaūgaras* «լեռնագազաթ», միջին բարձր գերմ. *koifel* «լեռնագազաթ», հին հյուսիսային *kuifr* «կլորած ծայր՝ գազաթ՝ կուլտ», հոլանդերեն *kuif* «փետրափունջ. գլխարկ. թռչունի բբուկ. ծառի կատար», գերմ. (բավարական) *koppen* «ծառի

պսակ», անգլսքս. сopp «գագաթ, անոթ, գավաթ», միջին գերմ. koppe «թռչունի կատար», koppe, kuppe «կլորած կենսագագաթ» և այլն:

## 50. Կ Ա Տ Ի Կ

Կատիկը կոկորդի վերնամասի նուրբ առածգական կոճիկն է, որ փակում է շնչափողը ուտելու և խմելու ժամանակ. կոչվում է նաև մակկոկորդ (epiglottis): Այս բառը մատենագրության մեջ ավանդված է միայն միջին դարերից, սակայն շատ կենսունակ է արդի ժողովրդական-խոսակցական լեզվում և բարբառներում. գործածվում է նաև արդի գրական լեզվում: Կազմված է կառ-արմատից՝ -իկ մասնիկով. գրված է նաև գրիկ (<\*կտիկ) ձևով: Ծագում է հնիս. gēu- արմատի gud/gəd տարբերակից. երկու տարբերակներից առաջինը տվել է կուտ-իկ, որից միջին հայերենում ունենք գրիկ, իսկ gəd տարբերակից՝ կառ-իկ: Հնդեվրոպական արմատի նախնական նշանակությունն է «ճկել, կորացնել, կամարի ձև տալ», որից ստացվել են՝ «1. աղիք, փորոտիք, 2. կոկորդ, վիզ, 3. գունդ, գնդակ, 4. կլոր անոթ, 5. կլորացրած՝ ոլորած բան, ոլորվածք, 6. անձավ, որջ, դոմ, 7. մեջք, ազդր, զիստ» նշանակությունները: Ըստ իմաստի հայերենի կառիկ բառի զուգահեռներն են. լատ. guttur «կոկորդ», լիտվ. guza «1. քուշ, կտնառք, 2. խրպիպ (306)», ռուս. ryđa «շրթունք», անգլ. (բարբառային) kyti, kite «ստամոքս, փոր», միջին բարձր գերմաներեն kiutel «փոր», նոր բարձր գերմ. (բարբառային) Köderl, Goderl «բոխախ, խպիպ», խեթ. ku - u - tar/kuttar «ծոժրակ, վիզ, ուս», միջին նիդեռլանդերեն coon «ծնոտ», նիդեռլ. koon «այտ» և այլն:

## 51. ԿԱՐՇՆ<sup>1</sup> «ՈՒԺ», ԿԱՐՇՆ<sup>2</sup> «ԱՆՐԱԿ»

Այս բառը, որ առանձին գործածությամբ հին մատենագրության մեջ չի ավանդվել, հանդես է գալիս բարդու-

թյունների և ածանցումների մեջ «ուժ, զորություն» նշանակութամբ (կարշնեղ, կարշնեղություն, կարշապինդ, կաշմբուն): Կարշն, կարշ կաշն/կաշմ (հաջորդող բ-ից առաջն) մ օրինակափ փոփոխութամբ) տարբերակներից հնագույնն է և առավել տարածվածը՝ կարշն, որից ստացվել են՝ կաշն (բ-ի անկումով) և կարշ (ն-ի անկումով): Ծագում է հնիս. guer արմատի ց<sup>u</sup>լ—նս/ց<sup>u</sup>լս-նս ձևից: Յեղակից լեզուների զուգահեռներից ըստ իմաստի հայերենին մերձավոր են. կիմր. bryw «ուժեղ, ուժեղություն», հուն. ἄβρωτος «հզոր, ուժեղ, զորավոր», βρωτός «ուժեղ, ամուր», βρωτ «բռնություն», հին իռլ. brig «ուժ, զորություն. արժեք, հարգ», լատիշ. grīnums «խստություն, դաժանություն», գերմ. krieg «կռիվ» և այլն: Հնիս. rs>հայ. բշ հնչյունափոխությունը օրինակափ է:

Հր. Աճառյանը կարշն արմատի տակ բերում է Ստ. Լեհացու բառարանում հիշված կարշն բառը՝ գրելով. առանձին կարշն ձևը տալիս է Բո. Ստեփ. Լեհ. և մեկնում «ծայր բաղկին ի մէջ ոսկերաց թիկան և արմկան»: Սա, անշուշտ, պարզ ենթադրություն է. ավելի ուղիղ կլինեն դնել «ոյժ ջղանց կամ մկանանց» և կամ պարզապես «ջիղ», ինչպես ունին ոմանք» (Արմ. Գ. 1099): Մեր կարծիքով Աճառյանի այն միտքը, թե Ստ. Լեհացու բացատրությունը «պարզ ենթադրություն է», բավականաչափ հիմնավորված չէ. Ստ. Լեհացու բացատրությունն այնքան պարզորոշված է, որ հազիվ թե հնարավոր լինի պարզ ենթադրություն համարել: Եթե նա կարշնեղ բառից առանձնացնեն արմատը և լոկ ենթադրությամբ բացատրեն, ապա ավելի հավանական կլինեն ուղղակի բազուկ, թիկունք, ուս կամ ջիղ բառերով բացատրել. բայց քանի որ նա հատկապես շեշտում է բազուկի ծայրը՝ թիկունքի և արմուկի ոսկորների միջև, ապա պետք է մտածել, թե նրան ծանոթ էր այդպիսի մի բառ: Ընդունելով այդ բառն իբրև ինքնուրույն արմատ, որ նախորդ կարշն «ուժ» բառի հետ կապ չունի և սոսկ համանուն է, մենք ծագած ենք համարում հնիս. ց<sup>u</sup>er արմատի ց<sup>u</sup>oros/ց<sup>u</sup>լս-նո տարբերակից (Պոկ., 474). արմա-

տի ընդհանուր իմաստն է «կլանել, կուլ տալ. կոկորդ, վիզ, վզի առջևի մասը»: Այս նույն արմատից են նաև հայերեն կեր. կուր (կերակուր), կոկորդ բառերը:

## 52. ԿԱՐ, ԿԱՐԵԼ, ԿԱՐ(ԱԻԱՆԴ)

Բառի առաջին իմաստն է «պարան, շվան, լար, առասան», որից բխել են «հող, կարելը» և այլ նշանակությունները: Ծագում է հնիս. *ger* «դարձնել, պտտել, ոլորել, փաթաթել» արմատից<sup>15</sup>: Արմատը շատ մեծ զարգացում է ունեցել ցեղակից լեզուների մեջ թե՛ ձևի և թե՛ իմաստի տեսակետից՝ տալով մարմնի անդամների (մեջք, ոտք, կուռ), զանազան գործիքների ու գործողությունների (կարթ, ջուլհակի հաստոց) անվանումներ: Մեր բառի զուգահեռներն են հին հնդկ. *guná-h* (\**gr-no-s*) «պարանի՝ լարի առանձին թել. առասան, չվան», *անգսք. cranc-stœi* «հյուսիս գործիք», *crencestre* «ջուլհակահի», հին հնդկ. *granth-*, *grathna'mi* «փաթաթել, ոլորել, կապել, հանգույց անել», հին իսլ. *grinne* «հանգույց, կապ, տրցակ» և այլն (Պոկ. 385—390):

Այս արմատի հետ ենք նույնացնում կարաւանդ բառի առաջին բաղադրիչը՝ կար: ՆշՅ այս բառը բացատրում է «սնակուշտ» կամ «զրահի վրայի կարած կամ զոդված տեղերը»: Հր. Աճառյանը հիշում է նաև Երեմիայի բառարանի կարաւանդ «զրահի կապ» և ակարաւանդ «յօղք զրահից» բառերը, եզրակացնելով, որ ավելի հավանական է ՆշՅ-ի երկրորդ բացատրությունը. միակ գործածություն մեջ էլ, թեև դրված է հունարեն բնագրի «սնակուշտ» բառի փոխարեն, բայց այդ իմաստին չի համապատասխանում. ահա այդ գործածությունը. «Վիրատրեցաւ ընդ կարաւանդսն ի ներքս» (ՍԳԲ, Ա. թագ., լա, 3): Այս նախադասությունը պետք է թարգմանել՝ «վիրավորվեց կարավանդների տակ՝ ներքս», որով

<sup>15</sup> Ոլորել իմաստից «կար, կարել, թել» իմաստների զարգացման համար հմմտ. դարձ, դերձան, դերձակ, հանդերձ բառերը, որոնց նախնական (հնդեվրոպական) իմաստն է դարձյալ ետրորել, պտտել, շրջել»:



կարաւանդ-ը կդառնա զրահը: Մեր կարծիքով կարաւանդ-ը  
 օղազրահն է, ըստ բաղադրիչների՝ կար «հանգույց, կար» և  
 ւանդ (<վանդ) «կապ». այն նշանակել է «հանգույցներով  
 կապված՝ հյուսված», որով և կստացվի օղազրահը: Երկրորդ  
 բաղադրիչը ծանոթ է իրանական փոխառութիւններից և նշա-  
 նակում է «կապ» (իրան. բանդ)<sup>16</sup>:

### 53. Կ Ե Ր Կ Ե Ր

Այս բառը ունի միայն Ս. Գաբամաշյանի բառարանը,  
 որ բերում է Հ. Աճառյանը «Արմատական բանարանում» (Գ,  
 1156) և համարում անստույգ բառ: Գաբամաշյանը բացատը-  
 րում է «Բարձրաբլայց (=բարձրտան, բարձրասրուն) թըռ-  
 շուններու սեռ, անդրթ, folque»: Ֆրանսերեն այս folque  
 թռչունը ռուս. ЛЫСУХА-ն է, որ ռուս-հայերեն բառարաննե-  
 րում թարգմանվում է «սև փարփար, կերկեր»: Նույն կերկեր  
 բառը նույն իմաստով ունի նաև Դաղբաշյանը (Հայ-ռուսե-  
 րեն բառարան, Թիֆլիս, 1911), ինչպես և ավելի վաղ՝ Ռուս-  
 հայերեն բառարանում՝ ЛЫСУХА բառի զիմաց: Բառս անըս-  
 տույց չի կարելի համարել. նա գործածվում է շատ բարբառ-  
 ներում. մասնավորապես Մեղրու բարբառում այդպես էր կոչ-  
 վում Արաքսի ափամերձ ճահճուտներում բնակվող մի թըռ-  
 շուն, որ սև փարփարն է:

Ծագում է հնիս. \*ger- «խզված՝ խոպոտ ձայնով կանչել՝  
 ձայնել, կոնչալ» արմատից: Ցեղակից լեզուներում նույն  
 արմատից ունենք, իբրև թռչունների անուններ՝ հին բարձր  
 գերմ. krā(w)a, kraia, միջին բարձր գերմ. Krähe, հին  
 սաքս. kraia, անգլ.-սաքս. crāwe, հին հյուսիսային kraka  
 «արջնագուավ, եղջերակ», հին հյուսիսային krakr «աղ-  
 ոավ», լատ. graculus, «արջնագուավ, եղջերակ», հուն. γῆρυξ-

<sup>16</sup> Ընդունելի չենք համարում կար բառի համեմատությունը հուն.  
 γῆρυξ «առասան, չվան» և զրանց ցեղակից բառերի հետ, որոնք հանգում  
 են հնիս. k'er «առասան, հյուսել, կապել» արմատին, որովհետև k' հայե-  
 րենում տալիս է ս. այդ արմատից ունենք սարիֆ:

տ. «կասնկ», գալլերեն tarvos trigaranos, կլամերեն, կոր-  
 ներեն, բրետոներեն garan «կասնկ», լիտ. garnys «ճալ»,  
 gervi «կասնկ», լատ. grus, գերմ. Kranich, լատիշերեն  
 dzeife, հին սլոուակերեն gerve, սաս. журавль, հայերեն՝  
 կռուկ: Հայերենը, այսպիսով, նախն արմատից անի երկու  
 թռչանի անան՝ կերկեր և կռուկ, ինչպես որ լատիներենը՝  
 grus «կասնկ», graculus «արջնագուսվ», լիտվաներենը՝ gar-  
 nys «ճալ», gervi «կասնկ», գերմաներենը՝ Krähe «արջ-  
 նագուսվ», Kranich «կասնկ» և այլն (WP, I, 591—593, Pok.,  
 I, 383—385):

#### 54. Կ Ե Ր Կ Ե Ր Ի Լ

Հին մատենագրության մեջ, ըստ ՆՃԲ և Հ. Աճառյանի,  
 պատահում է միայն մի անգամ, այն է՝ «Վաստակեցի ես առ  
 աղաղակել, կերկերեցաւ կոկորդ իմ» (Սղմ. կը, 4): ՆՃԲ և Հ.  
 Աճառյանը բացատրում են «Կոկորդը շորանալ, ձայնը կտրը-  
 վել»: Արդի գրականում գործածվում է կերկերուն «խզված,  
 խռպոտ» (ձայնի մասին), հազվադեպ նաև կերկերալ «ձայնը  
 խզվել, խզված՝ բեկբեկուն ձայնով խոսել»: Ծագում է հնիս.  
 \*ger «խզված, խռպոտ ձայնով կանչել, խռպոտ ձայնով ձայ-  
 նել» արմատից, որից ցեղակից լեզուներն ունեն. հին հնդկե-  
 րեն jaratē «աղմկել, հնչել, սուր և բարակ ձայն հանել,  
 խռպոտ ձայն հանել, կանչել», jara «աղմուկ», հին բարձր  
 գերմ. kerran, միջին բարձր գերմ. kerren, karren, անգլ.-  
 սարս. ceorran «սուր ձայն հանել, մոնչալ», ռուս. грать  
 «կոնչալ, կոկոսալ» և այլն (WP, I, 591—592, Pok., I, 383—  
 385): Հնդեվրոպական բառը բնաձայնական է, որ ցեղակից  
 լեզուներում դարձել է նաև զանազան թռչունների անուն, որի  
 մասին տե՛ս նախորդ բառի տակ: Մեր բառը կրկնավոր է,  
 ինչպես բացատրում է Հ. Աճառյանը (Արմ., Գ, 1156):

Այս բառից պետք է կարծել մեր բարբառներում տարա-  
 ծում ստացած և զանազան ձևափոխությունների ենթարկված  
 զկոտալ «ստամորսի գագերը կոկորդից դուրս բերել»: Այս

բառի բարբառային ձևերը երեք խումբ են կազմում. ա) պարզ կեր արմատի կրկնություն՝ յուրաքանչյուր բարբառին հատուկ հնչյունափոխություն՝ ինչպես՝ գէսգոտալ (Կես., Մարզվան), ֆէոկոտալ (Ակն), գէրգշտալ, ֆէրֆշտալ (Արաբկիր), ֆէրֆտալ (Սեբաստիա) և այլն, բ) պարզ արմատից՝ զ սաստկականով և բայական ա, շ, սակ ածանցներով կազմված ձև, ինչպես՝ գ-կոտալ (Գորիս, Արարատ., Գվին, Ղրբ., Մեղրի, Ռբիլիսի), սկոտալ (Վան), ծկրհատի տալ (Ղարադաղ), կոշնկ (Կեսարիա), կոստկալ (Ալաշկերտ, Մուշ) և այլն, գ) ու ձայնավորով կրկնավոր ձև՝ առաջին եզրում  $r > \eta$  փոփոխություն՝ որ ունի Մանհիսան (կողկորդալ) և  $r > \delta > \Delta$ ,  $r > l$  փոփոխություն, որ ունի Խարբերդը (գ'օձգ'լղալ): Երեք խմբերից այս վերջինը դժվար է կապել նախորդների հետ. գ'օձգ'լղալ ծագում է ործկալ-ից, կողկորդալ անորոշ է մնում: Նախորդ երկու խմբերի բոլոր ձևերը բխում են կեր արմատից: Իմաստի համար համեմատելի է ործկալ բառը, որի հնդեվրոպական նախածնը ծագում է, ըստ Վալդերի, \*reu- բնածայնից (II, 357):

### 55. ԿԻՐ, ԿՐԵԼ, ԿԱՐ (ԿԱՐԱՒՏ, ԿԱՐԻՔ)

Կենսունակ արմատ է, որ տվել է բազմաթիվ ածանցավոր ձևեր, բարդություններ, ինչպես և՛ իմաստի ընդարձակ ճյուղավորում: Նախնական իմաստը, ինչպես ցույց է տալիս Աճառյանը (Արմ., Գ, 1207—8), եղել է «բեռնելով տանել»: Ծագում է հնիս. *g<sup>u</sup>rer* արմատից, որի իմաստն է «ծանր». այս իմաստից բխել են մի կողմից՝ ծանրություն բնորոշվող առարկաների անուններ (աղորիք, աղացաքար, երկան, բեռ ևն), մյուս կողմից՝ ուժ, սաստկություն, բռնություն, նեղություն իմաստով բառեր: Հայերենում առաջին խմբի բառերից առնենք երկան (<*g<sup>u</sup>rānā*> րկան> երկան), երկրորդ խմբից՝ կարչն «ուժ» (*g<sup>u</sup>rsnu*) և կիր (*g<sup>u</sup>er*), կրել բառերը: Այդ բառի ղուգահեռներից են. հին հնդկ. *guruh* «ծանր, ծանրակշիռ, կարևոր», ավեստ. *gouru* «ծանր», պրսկ. *gīran* «ծանր», հուն. *βαρύς* «ծանր», *βαρύον* «ծանրացնել, բեռնավորել, հոգնեցնել», *βαρύς* «ծանրություն», *βαρύς*:

«կշիռ, ծանրություն, բեռ», 𐎧𐎠𐎼𐎫𐎡𐎴: «կարևոր, ծանրակշիռ», հին իռլ. brig «ուժ, կարողություն», կիմր. bri «ծանրություն, արժեքավորություն, արժանավորություն» և այլն:

Այս արմատից ենք կարծում նաև կար «հարկավորություն, պետք» (կարիք, կարոտ, կար-ևոր) բառը: «Ուժ, ճշնշում, ծանրություն» → «պետք, կարիք, կարևորություն» իմաստի անցման համար հմմտ. հայ. աղց «պետք, կարիք» <ասոր. elas, որ նշանակել է «ձնշել, հարկադրել, բռնադատել»<sup>17</sup>:

### 56. Կ Ի Ց / Կ Ո Ւ Ց

Բառիս իմաստն է՝ 1. Մի բանի մոտ, կողքին, մոտը, իրար մոտ. 2. միասին. 3. հոգն. կիցք ձևով՝ «անասունի ետևի մասը», որից էլ՝ «աքացի նշանակությունը, կուց ձևով՝ «բուռ» (երկու ամիսներ իրար միացնելով ձևացրած): Հին մատենագրության մեջ զործածվել է նաև «զույգ» իմաստով. այդ նշանակությամբ զործածվում է նաև բարբառներում (իրար կպած զույգ հայցի համար). արմատից կազմված բայը (կցել) նշանակում է «միացնել, միավորել, հավելել», բարբառներում՝ նաև «զուգավորել» (շների): Մագում է հնիս. ger արմատից՝ -sko մասնիկով (\*ger-sko > \*gē-sko > կից): Արմատի ընդհանուր նշանակությունն է «միավորել, ի մի բերել, կցել, ամփոփել, հավաքել»: Յեղակից լիզոնների զուգահեռներից առանձնապես հիշելի են. հուն. ἀγείω (αγέρω, ἄγειω) «հավաքում եմ», ἀγείρα. ἀγύρις «հավաքույթ, ժողով», ἄγύριος «ձևաքի ափ, ձևաք», լատ. grex «երամ, հոտ», լիտ. gurgulyš «խտացում», gūrguole «բազմություն, զանգված», լատիշ. gūrste «վուշի կապ», հին հիկեղեցաուլմոնական gr̥stē, սուս. горсть «բուռ, կուց», լիտ. gretà «իրար մոտ, կողք-կողք»

<sup>17</sup> Ընդունելի շենք համարում կար-իք, կար-աա բառերի կար արմատը լատ. carus «թանկագին, սիրելի», լատիշ. kānuōt «տենշալ» և այլ բառերի հետ հնիս. \*ka-ro < \*ka-«ցանկանալ, տենշալ» արմատից բխեցնելը. որովհետև հնիս. k(q) հայերենում տալիս է ր և ոչ կ:



քի, կից», լատ. gremium «գիրկ, խախ», հուն. γυμνός «գիւ-  
կած բուս, բուսնոցք» և այլն: Հայերենի հետ ըստ ձևի համե-  
մատելի են հուն. ἄγροτος «ձևաք, ափ», լատ. grex «հոտ,  
երամ», լատիշ. gürste «վոշի կապ», սլավոնական ցрѣсти  
«բուս» ձևերը, որոնք ստացվել են -sti ածանցով ձևից  
(\*gurtsti >gursti). հայերենի համար պետք է կանխադրել  
-sko ածանցը: կից/կուց ձևերի ի/ու ձայնավորները ձայն-  
դարձի հետ են կապվում, ըստ որում հնխ. արմատի համար  
Պոկոսնին կանխադրում է ger-, gor-, gur և grem հիմնա-  
ձևերը (Պոկ. 382—383):

### 57. Կ Ո Ղ Կ Ո Ղ Ի Մ, Կ Ա Ղ Կ Ա Ն Ձ

Կողկողիմ բառն ըստ ՆՀԲ նշանակում է «ողորմ և ցա-  
վազին աշօք նայել, լալ, հեծել, պաղատիլ. հալիլ, մաշիլ».  
Աճառյանն էլ «Արմատականում» (Ձ, 1291) անփոփոխ կեր-  
պով բերում է այդ բացատրությունը՝ ավելացնելով «օղիկ  
օղիկ գալ» և դուրս գցելով «պաղատիլ, հալիլ, մաշիլ» բա-  
ռերը: Բառի նախնական իմաստն է «ողբալ, բարձրաձայն  
լալ», որ պարզ կերպով երևում է ՆՀԲ-ի բերած օրինակներից,  
ինչպես և կողկողաձայն, կողկողագին, կողկողալի բառերի  
իմաստից: Կողկողագին նշանակում է «բարձրաձայն ողբա-  
լով, աղաղակելով». կողկողանք՝ «ողբ, բարձրաձայն լաց».  
այս են վկայում «ձայն կողկողանաց», «հառաչանք կողկո-  
ղանաց հեծուրեանք» և նման կապակցությունները: Ըստ  
Աճառյանի, պարզ արմատից կազմված բայը՝ գողալ ձևով  
պահպանված է Ձեյթունի բարբառում և նշանակում է «վրան  
լալ, ողբալ»: Ըստ կազմության բառս կրկնավոր է, պարզ  
արմատը՝ կող, ծագում է հնխ. gal- «կոչել, գոչել, բղավել»  
արմատից, որից են նաև կիմբ. galw- «կոչել, կանչել»,  
բրետոն. galu «կանչ, գոչյուն», հին հյուսիսային klaka  
«շաղակրատել, ճովողել», հին հնդկերեն garhati «տրտնջալ,  
բողոքել», garha «տրտունջ», «բողոք», ցրհու «մուրացկան,  
աղերսող», ավեստերեն gərəzaiti «տրտնջում է, ողբում է,

կոծում է», օսերեն vārzuŋ «հառաչել, հեծել, ողբալ, վայնասուն բարձրացնել», միջին իռլ. gíam «գոչյուն, անեծք», հին բարձր գերմաներեն klingen «հնչել», ռուսերեն голос «ձայն» և այլն: Հայերեն կող- ենթադրում է արմատի gol- ձևը:

Քերեւս նույն արմատից է նաև կաղկանձել բայի առաջին բաղադրիչը. այս բառն Աճառյանը համարում է կրկնաձևը (\*կանձ-կանձ > կաղկանձ), սակայն, մեր կարծիքով, ճիշտ կլիներ համարել համաբարդ բառ՝ նույնիմաստ կաղ և կանձ արմատներով կազմված: Այս դեպքում ունենք հնխ. արմատի gal ստորին ձայնդարձով ձևը (Պոկ., 350):

Նախկինում մենք հնդեվրոպական այս արմատի հետ ենք կապել Գոլթն տեղանունը, որ սակայն պետք է մերժել ինչպես իմաստային բացատրության անհավանականության, այնպես էլ հնչյունական անհամապատասխանության պատճառով, ըստ որում հնխ. g-ին համապատասխանում է հայերեն կ և ոչ՝ գ:

## 58. Կ Ո Ս Տ Ղ

Այս բառը գործածվում է միայն բարբառներում և նշանակում է «ճյուղը կտրելուց հետո ծառի վրա մնացած մասը, ծառի կամ տախտակի վրայի հանգույց կամ երակ, այդ հանգույցը ընկնելուց հետո մնացած ծակը» (Արմ., Գ, 1344): Հայագիտության մեջ այն ենթադրությունն է ընդունվել, որ այս բառը առաջացել է ոստ բառից՝ սկզբից կ և վերջից ղ հնչյունների հավելումով: Անշուշտ, լեզվաբանությանը հայտնի են հնչյունների զանազան հավելումներ բառերի մեջ, բայց տվյալ դեպքում շփազանց տարօրինակ է մեկ բառում երկու հնչյունների տարապայման հավելումը, որը հնչյունաբանական հաստատուն բացատրություն չունի: Եվ թեև իր ժամանակին մենք էլ ենք ընդունել այդ ենթադրությունը՝ առ ի չգոյ է լաւագունին, սակայն այժմ գտնում ենք, որ ոստղ և կոստղ առանձին բառեր են, իրարից անկախ, բայց նույն (կամ մոտավորապես նույն) իմաստներով: Կոստղ բառը ծա-

գում է հնիւ. gues-/guos-/gus արմատի guoz-do աճած ձևից (Պոկ. 480), որ նշանակում է «ոտ, ճյուղ, շիվ. ճյուղավորում, սաղարթ» (Gezveig, Laubverk). ցեղակից լեզուների զուգահեռներ են՝ տոսկան. gjethe «սաղարթ. ճյուղեր, ստեր (հվ.ք. նշանակաթյամբ)», հին բարձր գերմ. questa, միջին բարձր գերմ. queste, koste, kaste, quast «պտակ, ավել. ցողիչ, ջրցանիչ. ճյուղերի փունջ՝ արցակ», նորվեգ., գան. ku-as «փոքրիկ կտրած ճյուղ», ալբան. ghehi «տերև», հին շվեդ. kvaster, kaster, շվեդ. quast, նորվեգ., գան. kost «շվեդերի՝ ստերի փունջ», հին սերբ. gvozđ «անտառ», հան. ᄒᆞᆫᆯᆫᆯᆫᆯᆫᆯᆫᆯ «մազափունջ, խոպոպ», հին հնդկ. guspita «շյուսեղ (ճյուղերով)», լատ. vespices «խիտ մացաս», միջին հեղեղանդերեն quispel, quespel, միջին գերմաներեն quispel «փունջ, հովհար» և այլն: Հայերենը ծագում է guozd-ի 10-ով աճած ձևից և օրինաչափորեն տալիս է կոստը, ինչպես որ ozdo արմատն էլ տվել է ոստ (zd > հայ. ստ):

Բառի այս ստուգաբանությունը հնարավորություն է տալիս բացատրելու նաև ղ հնչյունի հավելումը ոստ բառի վերջում: Հայտնի է, որ իմաստով իրար հետ կապված (հոմանիշ, մերձանիշ, հականիշ) կամ իրար հետ հաճախ գործածվող բառերը համաբանությամբ ձևով էլ նմանվում են միմյանց, պահպանելով սակայն տարբերակիչ ձևական որևէ հատկանիշ. օրինակ՝ ցած բառը բարձր բառի համաբանությամբ դարձել է ցածր, նախնական ծալ բառը տայգր-ի համաբանությամբ դարձել է տալ «ամուսնու քույր», անգատ «չքավոր, աղքատ, կարոտ» բառը աղբատ բառի համաբանությամբ դարձել է անխատ (գ > ֆ), բարբառներում եղ (եղ) բառն ըստացել է եղր ձևը՝ եղր-մեղր կամ եղր ու մեղր հարադրության մեջ և այլն: Նույն եղանակով էլ կոստը բառի համաբանությամբ ոստ-ը դարձել է ոստը:

## 59. Կ ՈՒՏ

է. Լիդենը, որին հետևելով՝ նաև Վալդեն և Պոկոտնին, հնիւ. gēu արմատից են բխեցնում հայերեն կուռն (կոճակ).

կոր, կրուկ/կրուկն, կուր «տաշտ, տաշտակ. նաւակ, մակուկ», կրայ/կրեայ/կրիա, կորի «ակոս», կորիզ բառերը: Հր. Աճառյանը մերժում է այդ բոլոր բառերի կապը միմյանց հետ և հնխ. ցԵՍ արմատի հետ. դրա պատճառն այն է, որ այն ժամանակ, երբ նա կազմում էր իր «Արմատական բառարանը», հնդեվրոպական այդ արմատի առաջին հնչյունը համարվում էր ց', իսկ դա հայերենում դառնում է ծ: Աճառյանն այդ արմատից բխած էր համարում միայն հայ. ծուռ բառը, որի ստուգաբանությունը առաջարկել էր Մեյեն: Լիդենն էլ, որ առաջարկել էլ վերոհիշյալ բառերի ստուգաբանությունը, դրանք բոլորը կապում էր ծուռ բառի հետ: Հետագայում, սակայն, հնխ. ցԵՍ արմատը վերածվեց երկուսի՝ ց'ers-, որից է հայերեն ծուռ և ցԵՍ, որից Պոկոնին բխեցնում է հիշյալ բառերը: Այդ բառերից, սակայն, ինչպես մենք ցույց ենք տրվել (տե՛ս ստորև, § 67), կուռն, կոճակ, կրուկ/կրուկ, ինչպես և կոր, կեռ, կոռ, ծագում են ոչ թե հնխ. ցԵՍ, այլ ger- արմատից (Պոկ., 385—389):

Այսպիսով, մնում են կուր «տաշտ, նաւակ», կրայ/կրեայ/կրիա, կորի «ակոս» և կորիզ բառերը: Այս շորսից առաջին երկուսը մենք միանգամայն ընդունելի ենք համարում, ըստ որում ցեղակից լեզուների մեջ ցԵՍ արմատից ծագած և մեր կուր «տաշտ. նաւակ» բառի իմաստը հաստատող բազմաթիվ զուգահեռներ կան. արդեն վերն էլ ասացինք, որ արմատի իմաստներից մեկն է «աման, անոթ», ուստի և հարկ չենք համարում այստեղ հիշել ցեղակից լեզուների բազմաթիվ բառերը: Կրայ/կրեայ/կրիա բառի կազմությունը հայտնի է՝ այ/եայ ածանց է, ուստի և արմատն է կուր. իմաստային տեսակետից Աճառյանը ճիշտ է համարում Լիդենի այն բացատրությունը, թե նախնական կոր, կլոր իմաստից է ծագում այդ կենդանու անունը. իբրև դրա ապացույց նա հիշում է իսպաներեն ու պորտուգալ tortuga, Ֆրանս. tortue, իտալ., պորտուգալ. tartaruga «կրիա» բառերը, որոնք ծագում են լատիներեն turtus «ծուռ» բառից (Արմ., Գ. 1468): Հնդունելով այդ բացատրությունը, կավելացնեինք հետևյալը.



Մեղրու բարբառում, ինչպես և ամբողջ Մեղրու շրջանում, կրիային կոչում են տաշտակ (այժմ գործածում են կրիա բառը)<sup>18</sup>. սա նույնպես նշանակում է, որ կրիա բառն իր իմաստով անմիջականորեն կապվում է կուր «տաշտ» բառի հետ: Ինչ վերաբերում է կորիզ և կորի բառերին, ապա հիմք շենք գտնում մերժելու լիդենի առաջարկած և Վալդեի ու Պոկոռնու կողմից ընդունված ստուգաբանությունը, քանի որ Աճառյանի առարկությունն ինքնին վերանում է արմատի առաջին հնչյունի արդի բնորոշումով (ց և ոչ թե ց'):

Սակայն, եթե ճիշտ է, որ կորիզ բառը ծագում է ցս արմատից, ապա անառարկելի է դառնում նաև կուտ «սերմ, հունդ, թռչուններին որպես կեր ծառայող հատիկ» բառի ծագումը նույն արմատի ցս- տարբերակից: Այդ տարբերակը բերվում է Պոկոռնու բառարանում (էջ 393), որի տակ, սակայն, ցեղակից լեզուների բաղմամբիվ բառերի շարքում չկա հայերեն կուտ-ը: Մեր ստուգաբանությունն այդ բաղմամբիվ բառերին ավելացնում է նաև հայերեն կուտ բառը<sup>19</sup>: Մնում է մի երկու խոսք ասել այդ արմատից Պոկոռնու բառարանում

18 Հմմտ. Կարճեան՝ կուրաշտակ (Չ. Մուրադյան, Կարճեանի բարբառը, 218), որ մեր կարծիքով համաբարդ բառ է՝ կուր+տաշտակ>կրտաշտակ>կրտաշտակ (հմմտ. Քանթեհ՝ կոտկիրա, որ նույնպես համաբարդ է՝ կոտ և կուր բառերից), Կարավարերդ՝ տաշտակ, կուրաշտակ, տրմբլտաշտակ (Վ. Մուրադյան, Կարավարերդի բարբառը, 186), Շամխուիում՝ կուրա, կոի (Ռ. Բաղրամյան, Շամխուիի բարբառը, 208), Գուգարքում՝ տաշտէ կոնակ (ըստ Չ. Կոստանյանի բանավոր հաղորդման) և այլն: «Արմատականի» է հատորում կրեայ բառի մասին չը. Աճառյանը գրում է հետևյալ լրացումը. «Մտադրում է կուր «մակույկ, նավակ» (այսինքրն՝ տաշտ) բառից և նշանակում է բուն «տաշտավոր»: Ճիշտ նույն ձևով են կազմված պրս. 𐭪𐭯 iāk «տաշտ. 2. կրիա», որ և لاک پشت lakpušt «կրիա» (բառացի «տաշտակոնակ»), լտ. testudo «կրիա»՝ ծագած lestu «պտուկ» բառից, զվռ. տաշտիկոնակ, կրիանկոտ «կրիա» (էջ 155):

19 Կազմելով ՊԲՀ-ում (1958—1972) հրապարակված բոլոր ստուգաբանությունների ցանկը, պարզեցինք, որ մեզանից առաջ կուտ<ցս-ստուգաբանությունն առաջարկել է Գ. Զահուկյանը (ՊԲՀ), զրան միադնենով նաև կախո. կոն. կոնդ, կոնակ բառերը:

բխեցվող հայերեն կոռն, կոնակ, կրուկն բառերի մասին հնխ. երկու արմատներ՝ *ger* և *geu* որոնք ունեն միևնույն «ճկել, կորացնել, կամարի ձև տալ, կոր» իմաստները, բազմաթիվ աճած ձևերով ու ձայնդարձներով ցեղակից լեզուներում տվել են բազմազան բառեր՝ ամենատարբեր իմաստներով, որոնք կապվում են նախնական «կոր, ծուռ, ճկել, կորացնել» նշանակության հետ: Հայերենն էլ այդ երկու արմատներից ստացել է բազմաթիվ բառեր. մեր քննությունների համաձայն, *ger* արմատից ստացվել են «կոր, կեռ» նշանակությամբ ածականներ և այդ հատկանիշի հետ կապվող մարմնի մասերի անվանումներ, իսկ *geu* արմատից՝ կոր հատկանիշով բնորոշվող (ուռուցիկ, գոգավոր, փոս ընկած և այլն) առարկաների անվանումներ: Այս նկատառումներով մենք *geu* արմատից հանում ենք կոռն/կոնակ, կրուկրն/կրունկ բառերը, և հատկացնում *ger* արմատին:

## 60. Հ Ա Կ

Այս արմատն իր նախնական իմաստով առանձին քիչ է գործածվել. Դավիթ Անհաղթի մոտ հանդիպում է «հակառակ, ընդդեմ» նշանակությամբ. սակայն հակել «միտել, դեպի մի կողմ թեքվել», հակամէտ «մի բանի միտված» (և ոչ թե միտելուն հակառակ), տրամադիր մի բանի, հոժար», և նման բառերը ցույց են տալիս, որ նաև «թեքվելով դեպի մի կողմ ծովել, դեպի մի կողմ ուղղվել» իմաստն է նախնական: Հետագայում այս երկու իմաստները զարգացել են դեպի ինքնուրույնություն, և այժմ հակ- «հակառակ, ընդդեմ» (իբրև նախածանց) և հակ- (հակել, հակում) «միտելը, թեքվելը» առանձին արմատներ են դարձել: Ծագում է հնխ. *sag-* «հետամտել, (հոտտտելով) հետապնդել» արմատից:

Նախալեզվի այս բառը համարվում է հին որսորդական բառ, որից ստացվել են «քննել, հետախուզել, գուշակել», բայց և՛ «հակառակել, կովել» և նման իմաստներով բառեր, ինչպես՝ հուն. ἄγχι (աչի, գոր. ἄγχι (աչի. «առջևից դը-

նալ, առաջնորդել», լատ. sagio, - ĩre «զգալ, կռահել», հին իռլ. saigin «մի գործի գնալ, որոնել», կիմբ. haeddu «վաստակել», հին իռլ. sar «վիրավորանք, անպատվություն, անիրավություն», միջին կիմբ. sayrhaed, նոր կիմբ. sarhad «վիրավորանք, անպատվություն», գոթ. sōkjan «որոնել, քննել, վիճել», sōkns «որոնելը, քննելը, քննություն, վիճելի հարց», անգսք. sōcn «քննություն, հարձակում, գրոհ, արդարադատություն», գոթ. sakan, sok «հակառակել, կրուվել», հոգ. sahha «կռիվ, վիճ, դատական գործ», հին իռլ. saka «բողոքել, վհասել», sattr «հաշտեցում», լսիթ. šak(k)-, šek(k) «գիտենալ, իմանալ», և այլն:

Հայերենն իր իմաստով ավելի մոտ է գերմանական և կելտական լեզուների բառերին, որոնց մեջ գերիշխում է «հակառակություն-թշնամություն—վեճ-կռիվ» նշանակությունը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց է տալիս հակ «միտում, թեքվելը դեպի մի կողմ» նշանակությունը, հայերենի համար պետք է կանխադրել նախնական ընդհանուր «մի բանի ուղղված շարժում, ընթացք, գործողություն» իմաստը:

## 61. Հ Ա Յ Ե Լ, Ն Ա Յ Ե Լ

Հայել բառի արմատն առանձին չի գործածվել, բայց պահպանված է բազմաթիվ բարդ ու ածանցավոր բառերի մեջ, ինչպես՝ հայելի, հայեացք, հայաբան «աչք», երկնահայեաց, դժնահայեաց, լաահայեաց, յառաջահայեաց, ընդվայրահայեաց և այլն, որոնք բոլորն էլ գործածված են հայ հին մատենագրության մեջ. աշխարհաբարում՝ նորակազմ բարդությունների ու ածանցավոր բառերի մեջ, հանդես է գալիս հայաց, հայեց (<հայեաց) ձևերով, ինչպես՝ հայեցում, հայեցակետ, բարձրահայաց, գեղահայաց և այլն: Հ. Աճառյանը հայել բառի արմատն է համարում հայ—, սակայն ավելի ճիշտ է հա—, որի վրա ավելացել է յ-ն, համաձայն այն կանոնի, ըստ որի հայերենում ա-ի և հաջորդող ձայնավորի միջև մտնում է յ: Ծագում է հնդեվրոպական \*pa—

նախաձևից, որ ցեղակից լեզուների մեջ պահպանվել է երկու հիմնական իմաստով՝ «պահել, պահպանել» և «հսկել, նայել, դիտել»: Այսպես՝ 1. լատիներեն *pacso*, *ere* «արածեցնել», *pastor* «հովիտ», սանսկրիտ՝ *pāti* «պահել, պահպանել», *paçu-pa* «նախրապան» և այլն: 2. սլավ. *pásty očy'ma* «հաստատուն նայել, ակնկառույց լինել», ռուս. *опасаться, запасать* և այլն: Առաջին իմաստով հայերենում ունենք *hog-*ան «այծի, ուլի, ինչպես և՛ ոչխարի հոտ», որ ծագում է նույն արմատի \**patro* ածանցավոր ձևից. նույն արմատի բարդությամբ ունենք և հովիւ <*ovi-pa* «ոչխար պահող» բնիմաստով: Երկրորդ իմաստի հետ կապվում է հայել բառը, որ գրաբարում նշանակում էր. «նայել, դիտել, ակնկառույց լինել, սպասել, ակնկալել», որոնք բոլորն էլ իհարկե, նայել հիմնական իմաստի փոխաբերությունները կամ առումներն են:

Նույն արմատից է ծագում նաև նայել բառը, որ կազմված է, ըստ այդմ, հայել բառից՝ նի- մասնիկով. *նի-հայել* > *նհայել* > *նայել*, և սկզբնապես նշանակել է «դեպի ցած նայել», ինչպես որ հայել նշանակել է «դեպի վեր նայել». Հայկազեան բառարանը հայել բառի առումներից մեկն է համարում «վերակնել, ամբառնալ զաչս, վեր նայել»: Հայել և նայել բառերի իմաստային այս տարբերությունը գիտակցել է նաև Տաթևացին, որ «Գիրք հարցմանց», էջ 407-ում բացատրում է՝ հայել «ցածրից վերև նայել», նայել՝ «վերևից ներքև նայել»:

## 62. Հ Ա Ր Ե Ի Ր / Հ Ա Ր Ի Ի Ր

Հայերենի թվականների համակարգում հարեւր/հարիւր բառը յուրօրինակ բացառություն է ներկայացնում. այն դեպքում, երբ հայերենի թվականները՝ 1-ից մինչև 10-ը և այնուհետև բոլոր տասնավորները հնդեվրոպական ծագում ունեն և ճշտորեն ներկայացնում են հնդեվրոպական հաշվական դրությունը, հարյուր բառը մինչև այժմ էլ ստուգաբանված չէ և մնում է որպես առեղծված. ավելի մեծ թվերը (հա-



զար, միլիոն, բյուր) փոխառութիւնն են: Հայտնի է, որ հնդեվրոպական միասնութեան ժամանակ հնդեվրոպացիներին մեծագույն թիվը հարյուրն էր՝ kṛto, որ կազմված էր dek'ni «տասը» բառից՝ -to մասնիկով (dkṛto > kṛto). հազարի համար թեև Բրուգմանը կանխադրում է նախալեզվյան gheslo (սանս. sa hasra) և g'zhli (լատ. mille) ձևերը, բայց այդ ենթադրութեանն ընդհանուր ճանաչում չի գտել և կասկածելի է:

Մենք գտնում ենք, որ հայերենի հաւեր/հաւիր բառը ծագել է հնիս. ar- արմատից -uro մասնիկով՝ \*areuro > հաւեր/հաւիր. նախահունչ հ-ի հավելումը սովորական երևույթ է հայերենի համար, ինչպես հնիս. od > հայ. հոս, հնիս. omo > հայ. հում և այլն (հնդեվրոպաբաններից շատերը այդ հավելում չեն համարում, այլ «կոկորդայինների» արտացոլում): Հնդեվրոպական ar արմատը ունի «1. միացնել, կապել, կազմել, հարմարեցնել» նշանակութիւնները, որից ծագել են «1. անել, կատարել, կազմել, 2. հարդարել, 3. կուռ, թե, ձեռք, 4. հաշվել, համրել» ընդհանուր իմաստները: Հայերենի հաւրուր թվականը կապվում է «հաշիվ, թիվ» իմաստի հետ: Հայտնի է, որ լեզուների մեջ շատ հաճախ տասնյակ-ը, հաւրուր-ը և այլ թվականները կապվում են «շատ. հաշիվ, կտր հաշիվ, ամբողջ թիվ» և նման բառերի հետ: Այսպես՝ «ուզրոֆիննական լեզուների մեջ տասը բառը նշանակում է «թիվ» ...աֆրիկյան սեսուտո լեզվով 100-ը կոչվում է lepkoio, որ նշանակում է «խոշոր թիվ»... աֆրիկյան ոտնգա լեզվով 100 կոչվում է grama, բայց կան բարբառներ, որ ասում են kulu, որ նշանակում է «մեծ»<sup>20</sup>: Հայերենում էլ, ուրեմն, հնդեվրոպական հարյուր նշանակող բառի կորստից հետո այդ թիվն անվանել են հաշիվ, թիվ բառով, որ ստացել է հարյուր իմաստը: Մեր բառի համար լավագույն վկայութիւնն է գերմանական լեզուների հաւրուր-ը.

20 Հ. Ա Տ ա յ ա ն, Կիակատար բերականութիւնն հայոց լեզվի, 1, 1953, էջ 238—239:

որ կազմված է այս նույն *ar-* արմատից ստացված *rad* «հաշիվ» բառի բարդությամբ (*հին հյուսիս. hund-rad, գերմ. hundert, անգլ. hundred* և այլն). այս լեզուներում էլ նախապես *hundert* նշանակել է բառացիորեն «հարյուր հաշիվ», որ տրամաբանորեն կարելի է բացատրել իբր «հաշիվը հասավ հարյուրի, հարյուրը լրացավ» ձևով:

Հետաքրքիր հարց է, թե ինչպես է եղել, որ հայերենը կորցրել է հնդեվրոպական 100 նշանակող բառը. մեր կարծիքով այդ առթիվ կարելի է տալ հետևյալ բացատրությունը. հնդեվրոպական *k'ntō* բառը հայերենում պետք է տար սան (սուն), որը, սակայն, նույնն է տասնավորների սան/սուն բաղադրիչի հետ և նշանակում է տասն (հմմտ. երեսուն «երեք տասն», քառասուն «չորս տասն», ինչպես և՛ քսան և այլն). ահա այս նույնացումն է եղել պատճառը, որ այդ բառը չի պահպանվել և փոխարինվել է «թիվ, հաշիվ» նշանակող բառով:

Հնդեվրոպական *ar-* արմատից են նաև հայերեն առնել (արմատը՝ *ar*), արդ (զարդ, հարգարել), արդար, յարմար բառերը:

### 63. ՀԱԻՏ(ՀՕՏ)/ՅԱԻՏ(ՅՕՏ), ՀԱՏ, ՀԱՏԱՆԵԼ/ՅԱՏԱՆԵԼ, ՉԱՏ,- ԱՆԵԼ, ՀՈՒՆԴ, ՀՈՒՆՉ

Հաւտ(հօտ), յաւտ(յօտ), հատ-, (հատանել) արմատը հայերենի ձևական, բառակազմական, իմաստային և գործառական շատ մեծ զարգացում ապրած արմատներից է: Իբրև առանձին բառ այժմ էլ գործածվում է՝ հատ «1. կորիզ, կուտ, 2. որևէ բանի (հաշվվող առարկայի) մեկ միավոր, 3. հյուսվածքի՝ գործվածքի յուրաքանչյուր հանգույցը» նշանակությամբ. զրաբարում գործածվել է «1. կտրելը, 2. կտոր, հատված, 3. սերմ, հունդ, առանձնապես ցորենի և այլ հացաբույսերի հատիկ, 4. կորիզ, կուտ, 5. վերջ, ծայր» նշանակություներով: Արմատական այդ ձևը երևան է զալիս հատանել «կտրել, կրճատել, ճեղքել, առանձնացնել, որոշել, սահմա-

նել, մետաղ հանել, հանք փորել՝ հատել, դրամ կտրել, լույսը ցոլալ և այլն» բայի անց. կտր. գ ղեմքում (հատ կամ եհատ). հրամ. եղակիրում (հատ), ինչպես և բազմաթիվ բարդությունների և ածանցումների մեջ՝ 1. կտրող, կտրված, 2. հատիկ և այլ նշանակություններով (վիմահատ, գանձահատ, թաթահատ, գարեհատ, ղեղահատ և այլն): Անհոդակալ բարդությունների մեջ կորցնելով հ կոկորդաչինը, վերածվել է -ա ածանցի (հմտ. հերատ, ականջատ... և բացատ, խրբամատ և այլն): Իմաստային տեսակետից հետաքրքրական է գրաբարյան հատանալ բայը, որ նշանակում է «մանր հատերի վերածվել, փշրվել»: Նախդիրներով և նախածանցներով ունենք զառ «առանձին, մեկուսի, անջատված, հեռու», նհատ «սպկաս, թերի», «ընդհատ, որ գրաբարում նշանակել է «տարբեր», իսկ այժմ՝ «ընդմիջված»:

Արմատի երկրորդ ձևն է յատ, որ ըստ իս կազմվել է յ նախդիրով (ինչպես ունենք զ-առ հ-ի անկումով, այնպես էլ՝ ի հատ > յհատ > յ-ատ), որին իբրև ապացույց կարող է ծառայել յատակ\* բառը, որ ունի նաև առակ (հայց. հոլ. զատակ, նախդիրվ տրական՝ յատակ) ձևը: Հնարավոր է բացատրել նաև հ-յ լծորդությամբ, ինչպիսին ունենք, օրինակ, հիւնգ և յիսուն բառերում (Հ և Յ հնիս. ք-ի դիմաց): Արմատի այս ձևից է յատանել «կտրել, ծառի և հատկապես՝ խաղողի վազի մատները էտել», յատոց «էտելու դանակ»: Արմատի այս երկու ձևերին ղուգահեռ ունենք՝ հատ (հոտ) և յատ (յոտ) «խաղողի վազի կտրած ճյուղ», հատել (հոտել)/յատել (յոտել) «էտել» հոտոց/յոտոց «հատոց, էտելու դանակ» և այլն: Ձևերի և իմաստների այսպիսի բազմազանությունը (մանավանդ յատել և յատակ բառերի կարծես թե իրար հետ ոչ մի կապ չունեցող իմաստները) զարմանալի չէ, որովհետև բոլորի հիմքում ընկած է նախնական «կտրել, հարվածելով կտրել, հարվածել՝ խփել կտրելու համար» իմաստը: Ծագում

\* Հ. Աճառյանը հատակ բառը կապում է ոտն/հետք բառերի հետ՝ հանելով միևնույն արմատից:

է հնիս. *peu-* «հարվածել, հատու կերպով հարվածել, հարվածելով կտրել» արմատի *pəu-* ձևից՝ ներկայի *d-*ով հիմքից՝ *pəud* > *հատ*, *հատ*:

Ցեղակից լեզուների համապատասխանություններն են. *լատ.* *pavio, ire* «հարվածել, խփել, գոփել, տոփել», *pavimentum* «տոփանած գետին, հատակ», *puget, ere* ամաչել «(իրբև՝ ամոթահար լինել, ամոթի խփվել)». *հմմտ.* *գրաբար՝* ընդ ամօր հարկանել, զամօրի հարկանել, յամօթ հարկանել), *հրգ.* *urfur, arfūrian, անգսք.* *a-furan* «կտրատել, կտրահել», *լիտվ.* *pjauju* «կտրել, քաղել, հնձել, մորթել, ըսպանել» (*հմմտ.* *հայ.* խփել «հարվածել» և «սպանել»), *բյւկլաս* «սոդոց», *բյւտիս* «հնձի ժամանակ, օգոստոս», *լատվ.* *plāūt* «հնձել, քաղել», *plava* «մարգագետին», *հին պրուս.* *piucian* «մանգաղ», հավանական է նաև հուն. *παιω* «խփել»: Հայերենն իր բաղմիմաստությունամբ ներկայացնում է գրեթե բոլոր ցեղակից լեզուներում հնիս. արմատի ստացած իմաստները և զրանով իսկ հաստատում մեր ստուգաբանությունից իսկությունը:

Սակայն հայերենն ունի ևս երկու բառարմատ, որոնք է՛լ ավելի ամրապնդում են այս ստուգաբանությունը և, մյուս կողմից, միավորում ցեղակից լեզուների երևան բերած բոլոր իմաստները. զրանք են՝ հունդ, որ ունի նաև ունդ (հնում ավելի գործածական) և հունձ (հնում՝ սովորաբար հունձֆ հոգնակիով) բառերը: Հունդ ծագում է արմատի ստորին ձայնդարձով *pu-n-* ձևից — *to* ածանցով (*punto* > հունդ), իսկ հունձ՝ *pun-gho* ձևից. հունդ և հունձ (դ-ձ) բառերի միջև ունենք նույն հարաբերությունը, ինչ որ՝ խանդ և խանձ: Վ. Պիզանին մեր հունձք բառը հանում է հնիս. *enek'* «հասնել» բառի նմանությունը *on-k'os* ձևից, որ հիշում է նաև Պոկոռնին (էջ 316), առանց իր հավանությունը տալու («ըստ Պիզանիի, Armen. 5), այստեղ է և հայ. հունձֆ, հնձոց (\**onk'os*)»: Այս ստուգաբանությունը ճիշտ չէ. հնիս. *k'* հայերենում բոլոր դեպքերում տալիս է ս. տվյալ դեպքում, հենց այդ արմատից ունենք հայերեն հաս-անել, հաս-ի (արմատի *քk* ձևից՝ հանս-, ոնդայինի



անկումով՝ հաս-անել): Եվ այսպես՝ ձևի և իմաստի ճշգրիտ համապատասխանությունը ու տարբեր կազմություններով իրար հետ միավորվում են և հնխ. *peu-*, *pau-*, *pu-* արմատի հետ կապվում հայերեն հատ/հատ, յատ/յատ, -ատ, զատ, յատուկ, հատիկ, յատակ/ատակ («հմմտ. լատ. *pavimentum*, տափանած գետին, հատակ»), հունդ (հմմտ. հայ. հատ-իկ), հունձ(f) «հնձելը, հնձելու ժամանակը, ամառ, հնձած հացաբույսը» (հմմտ. լիտվ. և լատ. բառերը), ինչպես և այժմյան գրական լեզվում գործածվող և տերմինի արժեք ստացած էտ, էտել, էտոց բառերը, որոնք յտ, յտել, յտոց բառերից՝ պատմական հնչյունափոխությունը ծագած բարբառային տարբերակներ են:

#### 64. Հ Ե Ի Ս / Հ Ի Ի Ս

Թե՛ գրաբարում և թե՛ ժամանակակից լեզվում ու բարբառներում շատ կենսունակ բառ է, որից բազմաթիվ բարդություններ ու ածանցումներ ունենք՝ իմաստային տարբեր անցումներով (հմմտ. հյուսիս, հյուսել «մազերը հյուս անել, գործել, հորինել» և այլն): Ծագում է հնխ. \*pek- «բուրդը կամ մազերը քաշել՝ փետել, բուրդ, գլխի մազ» արմատից, որ տվել է բազմաթիվ բառեր՝ «բուրդ, մազ, սանրել, գզել, բըրդոտ (սրանից նաև կենդանիների, մասնավորապես՝ ոչխարի, անվանումներ) և այլն: Մեր արմատն ունի հետ- (հետուկ, հետսել «հյուսել»), հետ/հիս «գլխի մազի հյուսվածք, ծամ», (հիսել, հիսուկ, հիսաճել «ծամ սարքել, մազերը հյուսել, գործել, հորինել»), \*հույս- (հուսել, հուսուկ, հուսաճել նույն նշ.) յաւ- < \*յ-հաւ- (յոսել, յոսուկ, յոսնուկ նույն նշ.) և վերջապես, \*հէս- (հիսուկ նույն նշ.): Այս նույն արմատից է նաև հետս «1. առագաստի պարան. 2. խտիբ կամ նման նյութ՝ ոտքին փաթաթելու համար», որից հետսիկ «ոտքի զանգապան, սունապան». սրանց հետ համեմատելի է (կ' մասնիկի համար) հուսկուկ «հյուսել»: Մեր բառի զանազան իմաստները զարգացել են «մազերը սանրել, հարդարել՝ պատրաստել, հյուսք գործել, ծամ անել» նախնական իմաստից:

Այս իմաստի համար մեր բառի հետ համեմատելի են. հուն. πῆκω, πῆκω, πῆκῶ «սանրել, խոզել», πῆκος «սար-  
 գեղմ», κτενω «սանր», լատ. pecto «սանրել», pecten «սա-  
 նրք», ալբ. pilē «վառ գզելու գործիք», հին բարձր գերմ.  
 fahs, մնգաք. feax «հեր, վարս», հին իսլ. fax «հյուս, վարս,  
 ձիու բաշ», անգաք. feht «գեղմ» և այլն, ինչպես և՛ հայերեն  
 աւար (արմատի \*pok'u-r ձևից): Ստանալով «մազերը հյուսել.  
 հյուս անել» (իբրև գոյ. հյուսված մազ, ծամ) իմաստը, այ-  
 նուհետև ընդհանրացումով նշանակել է առհասարակ հյուսել,  
 իսկ իբրև գոյական՝ ընդհանրապես գործվածք, գործված բան՝  
 մինչև պարանը, խսիրն ու սոնապանը: Հնխ. արմատն ունի  
 ձայնդարձի բոլոր աստիճաններն ու բազմաթիվ ածած ձևեր.  
 սակայն հայերեն արմատը բացի աւար և հես- (հեսուլ, հեսկուլ,  
 հեսկ) ձևերից, երևան է բերում եւ/իւ, ոյ, այ երկբարբառները,  
 որոնք պետք է վերագրու նախահայերենի ձայնավորական ու  
 երկբարբառային հերթագայությունների համակարգին: Հր. Ա-  
 ճառյանը հիւս արմատի հետ է կապում նաև հիւսն, հյուսնել  
 բառերը (հմմտ. լատ. texo «հյուսել—հյուսնել»), որ միան-  
 ցամայն ընդունելի է:

### 65. ՀՐՐԸՄՕՇՏ < \*ՀՐԱՄՈՒՇՏ «ՄՈՌԱՑՈՒՄ»

Տարիներ առաջ, երբ ուսումնասիրում էինք մեր հայ-  
 րենի՝ Մեղրու բարբառը և այդ բանի համար առաջին հեր-  
 թին հավաքում էինք բարբառի բառերը, առաջին անգամը  
 լինելով՝ լսեցինք հրրըմօշտ բառը՝ խոսակցության մի-  
 ջոցին: Այդ բառը գործածեց այն ժամանակվա ամենածեր  
 մեղրեցիներից մեկը՝ 83-ամյա Սամսոն Գաբրիելյանը (այժմ  
 վախճանված), որ բարբառի ուսումնասիրության ժամանակ  
 մեր ամենավատահալի աղբյուրն էր, հետևյալ նախադասու-  
 թյան մեջ. Հրրդիդէց ջնհիլնէն հրրըմօշտ ըն արած մըղրէ-  
 ցոց լւիգուն «այժմյան երիտասարդները մոռացել են մեղ-  
 րեցիների լեզուն»: Մենք անմիջապես գրի առանք այդ բա-  
 ւը և հարցրինք նրանից դրա իմաստը. նրա ասելով նշանա-

կում էր «մոռացում, անգիտացում» և գործ էր անվում հրբրմօջտ արիլ «մոռանալ, չգիտենալ» հարադրություն մեջ: Հարցրինք նաև ուրիշներին, որոնք լավ գիտակ էին Մեղրու բարբառին և մշտապես խոսում էին այդ բարբառով, բայց ոչ ոք չգիտեր այդ բառը: 1942 թվին Երևանում հանդիպելով հին մեղրեցիներից մեկին՝ տիկին Շ. Հովակիմյանին (այն ժամանակ արդեն 70 տարեկանից անց)՝ նրանից խոսակցության միջոցին լսեցինք նույն բառը, որ նա գործածեց հետևյալ նախադասության մեջ. Իկանձ քվ Ռէվան, Մեղրա հրբրմօջտ քվ արած «եկել եք Երևան, Մեղրին մոռացել եք»: Այլևս չկասկածելով այդ բառի գոյությունը՝ վստահորեն այն մտքրի բառարանիս մեջ այս երկու վկայություննեով, առանց այլևս մտածելու նրա ստուգաբանության մասին, մինչև որ վերջերս առիթն ինքնին ստիպեց կատարել այդ վերջերս Նիզամիի «խոսքով ու Շիրին» վիպերգը կարգալիս հանդիպեցի հետևյալ նախադասության. zabān-aš kard pasux-rā farāmušt «Նրա լեզուն մոռացավ պատասխանը»: Այնքան ակնբախ էր պարսկերեն այդ բառի և Մեղրու բարբառի հիշյալ հրբրմօջտ բառի նմանությունը թե՛ ձևի և թե՛ իմաստի կողմից, մանավանդ վերը բերված նախադասությունների մեջ, որ անկարելի էր չկապել նրանք իրար հետ: Մնում էր պարզել, թե պարսկերեն farāmuš «մոռացում» բառը Նիզամիի մոտ գործածված ձևով իրոք գոյություն ունեցել է, թե այդ ձևը (farāmušt) գրչագրական սխալի արդյունք է:

Դիմելով բառարաններին, գտանք, որ այդ ձևը farāmuš ձևի հետ գոյություն է ունեցել նաև պահլավերենում. այսպես՝ Nyberg, Hilfsbuch des Pehlevi; II, S. 72 framōš «մոռանալ» բալարմատը հիշելով՝ ցույց է տալիս, որ բառի վերջին -mōš բաղադրիչը ծագում է \*-muršta<-mušt ձևից, ուր ւ-ն առկա է: Նույնպես և Horn, Grundriss der neupersischen Etymologie § 812 ferāmōš «մոռացալ, մոռացում» բառի տակ հիշում է ferāmuš, ferāmušt, պահլավերեն framōš, farmōš, framōšt ձևերը: Նշանակում է farāmušt, framōšt ձևերը ավանդված են հնից, և Նիզամիի գործածած ձևը որևէ կասկածի ենթակա չէ:

Եթե պարսկերենում այդ բառաձևը կասկածելի չէ, ապա տարակույս չկա նաև, որ Մեղրու բարբառի հրբրմօջա բառը իրանական փոխառություն է: Իմաստի բացարձակ նույնությունը դրա առաջին ապացույցն է: Ինչ վերաբերում է հընչյունական օրենքներին, ապա դրանք ևս անխախտ կերպով պահպանված են: Ինչպես ցույց է տրված մեր «Քննություն Մեղրու բարբառի» աշխատության մեջ (Պետ. Համալսարանի գիտ. աշխատություններ, № 19, էջ 296, § 99), շեշտյալ վանկից առաջ գտնվող ձայնավորների դիմաց Մեղրու բարբառն ունի ր. տրեմն, եթե վերականգնելու լինենք այդ ձայնավորները, Մեղրու բարբառի հրբրմօջա բառի դիմաց կստանանք \*հրամօջա, հարամօջա (անշուշտ ա ձայնավորի փոխարեն ազատորեն կարող ենք ենթադրել նաև հայերեն մյուս ձայնավորներից յուրաքանչյուրը, քանի որ շեշտից առաջ ր ունենք բոլոր ձայնավորների դիմաց, բայց տվյալ դեպքում պարսկերեն ձևը մեզ օգնության է գալիս՝ թեև զորելով միայն ա): Համաձայն մեր նույն աշխատության § 92 սահմանված օրենքի, Մեղրու բարբառում նախնական ու-ի դիմաց շեշտյալ վանկում ունենք օ. ինչպես՝ գլովս < գրլօխ, տուն < տօն և այլն: Նշանակում է, այդ բառի մեջ ևս օ ստացվել է ուից, որով և վերականգնվող նախաձևը կդառնա \*հրամուշա կամ \*հարամուշա: Հայտնի է նաև, որ իրանական իր հընչյունախմբի դիմաց հայերենը փոխառյալ բառերում ունի հր, ինչպես՝ freštak > հրեշտակ, frahang > հրահանգ, framan > հրաման և այլն: Նշանակում է, հիշյալ երկու նախաձևերից ձիշտն է հրամուշա, որ լիովին համապատասխան է պարսկերենից փոխառյալ հայերեն բառերի հընչյունափոխական օրենքներին և ուղղակի հանգում է պահլավերեն iramōšt ձևին: Այսպիսով՝ Մեղրու բարբառի հրբրմօջա < \*հրամուշա «մոռացում» բառը իրանյան փոխառություն է և ունի պատկանելի հնություն: Նա փոխառված է պահլավական շրջանից և ո՛չ նոր պարսկերենից, որ առաջին վանկում ավելացրել է a ձայնավորը (farāmuš, farāmušt):



## 66. Հ Ի Ա Ն Ա Լ

Արմատն է հի-, որ բացի հիանալ և դրանից կազմված բառերից (հիացում, հիացմունք և այլն), պահպանված է նաև հիաստանչ, հիազարհուր, հիազոր, հիահրաշ, հիանշմար, հիաշհնաղ, հիապատում, հիասքավիլել և այլ բառերում: Հիանալ բառի բուն նշանակությունն է «զարմանքից ապշած մնալ, սքանչանալ»: Արմատը, սակայն, ունի ընդհանրապես հոգեկան բարձր զգացման, հուզմունքի իմաստ: Ծագում է հնդեվրոպական pi- արմատից, որի զուգաբանություններն են. գոթ. Infeinan «հուզվել, խղճահարվել», լատ. pius «երկյուղած, աստվածավախ, սիրալիր՝ ծնողների, հայրենիքի, հարազատների նկատմամբ», անգլոս. foële «հավատարիմ», միջին գերմ. velich, veilich «ապահով, անհոգ, ուրախ»:

## 67. Հ Ո Ի Ս Կ

Հաճախական գործածություն ունի գրաբարում, բայց առավելապես՝ հուսկ յետին, հուսկ յետոյ, հուսկ վերջին և նման կապակցությունների մեջ. նշանակում է «հետին, վերջին, ամենավերջին», որից և ստացվել է նաև «բոլորովին, ծայրագույն, ամենա-» նշանակությունը (հմմտ. հուսկ կրրոսերն, հուսկ յեզր մագաղաթին և այլն): Ծագում է հնիս. post- արմատից՝ -wo ածանցով: Հնդեվրոպական արմատի պարզ ձևն է pos, որից՝ հին հնդեվրոպական po, ալթ. pas, հին պրսկ. pasā բոլորն էլ՝ «հետո» նշանակությամբ: Յեղակից լեզուների մեջ ավելի շատ առկա է t, r, ko և այլ աճականներով ո. ածանցներով, ինչպես՝ լատ. post «հետո», հուն. դոր. πῶστε «հետո», թոխ. B postam «հետո», հին հնդկ. pasca «հետը, հետո», ավիստ. pašca «ապա, հետո», լիտվ. paskui «հետո», հայ. քսա (<post): Հայերեն հուսկ ստացվել է pōstwo ածանցալոր ձևից, ըստ որում հնիս. stw տալիս է հայերեն սկ (հմմտ. istwo > իսկ, ostwer > ոսկր):

## 68. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ \*Ger ԱՐՄԱՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական այս արմատը, որի նախնական իմաստն է «դարձնել, գալարել, ոլորել», բազմազան ձևերով և իմաստի զանազան փոխանցումներով բազմաթիվ բառեր է տվել

հնդեվրոպական լեզվաընտանիքի բոլոր ճյուղերում: Այս արմատից է հայերեն կարթ բառը, որի ծագումը հանգամանորեն լուսաբանում ու հիմնավորում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 3-րդ, էջ 1069—1071)՝ հենվելով է. կիդնի ստուգաբանության վրա:

Մեր քննությունները, սակայն, երևան են բերում այդ արմատի ուրիշ ժառանգներ, որոնք և ցույց են տալիս, որ հայերենում էլ հնիս. \*ger արմատը մի մեծ բառախումբ է տվել՝ բազմազան իմաստային փոխանցումներով և զանազան ձևափոխություններով, ավելի ճիշտ՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով ու ածանցումներով: Մեր նոր ստուգաբանությունների համաձայն հնիս. \*ger արմատից են ծագել, բացի կարթ բառից, նաև հետևյալ հայերեն բառերը:

1. Կրուկ, կրուկն > կրունկ. — Այս բառը է. կիդներ կապում է հնիս. \*gʷu-ru «ծուռ» բառին, որ ընդունում են նաև վալդեն և Պոկոունին, մինչդեռ Հր. Աճառյանը ճիշտ կերպով մերժում է, որովհետև հնիս. gʷ հայերենում դառնում է ծ և ոչ՝ կ:

Մենք ծագած ենք համարում հնիս. \*ger արմատի ծ ձայնդարձից՝ \*gōr > հայ. կուր. որ ուկ, ուկն մասնիկի հավելումով դարձել է \*կուրուկ(ն) > կրուկն: Հնդեվրոպական արմատի սկզբնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են «կորություն, կեռ, գունդ, մագիլ, սապատ» և այլ իմաստներ: Հայերեն կրուկն բառն իր իմաստով կապվում է հին հյուսիսային kraki «խարիսխի նման կեռով ձող, Stange mit Haken am Ende, Art Anker», հին բարձր գերմ. kracho (<\*krēkan), kraco (<kraggan) «ծնկաձև իր», հին հյուսիս. krakr, krokr «ճկվածք, կորություն, կեռ, անկյուն» (որից փոխառված է սուս. крюк «կեռ»), անգլ. crook «ծըռություն, կորություն, հովվական գավազան, կեռ», նորվեգ. krykkia «անթացուպ, հենակ», krykia «կոր փայտ», kryla «կորամեջք լինել», krylit «սապատավոր մարդ», հին բարձր գերմ. kragō «կեռ», սուս. ropō «սապատ, կուզ», հին բարձր գերմ. krampe «կեռ», գերմ. krampe «ճանկ, կորակտուց եր-

կաթ, դասն կես», միջին ցածր գերմ. krappe «կես, մագիլ», հին բարձր գերմ. kräpfo «կես, ճանկ», միջին բարձր գերմ. krape «կես», շվեդ. krabbe «կարթ», հին իտալոնոգերեն gairr «սրաւնքի ոսկորը» և այլն (WP, I, 593—598): Ձևի համար. (օ ձայնավոր) հայերենի հետ համեմատելի են հին հնդկե-րեն gala<\*goro «կեղեզն. պարան», հին հյուսիս. karmr<\*gor-mo-s «թամբ, պատնեշ», շվեդ. karm «կողով, քթոց» և այլն:

Հայերենի կր-ուկ(ն) կազմութեան համար համեմատե-լի է արմ-ուկն բառի հետ, որ ունի նույն ուկ(ն) մասնիկը: Հին հայերենում, ինչպես և բարբառներում և արդի գրականում կրունկ նշանակում էր ոչ միայն ոտքի գարշապարը, այլև՝ «ծխնիի ստք, դռան կրունկ», որի զուգահեռները կան բերված օրինակներում:

Կեղունքի մեջ սովորական է ուտ, սրունք, կրունկ, ուտի քաք իմաստների զարգացումը «կոր, ծուռ» իմաստից, ինչ-պես, օրինակ, լատիներեն calx «կրունկ» ծագում է հնիս. \*skel «ծռել, ճկել, ծուռ, կոր» արմատից, որից են հայերեն շեղ և խեղ: Այդպես է նաև հայերեն կրունկ բառը, որ ստացվել է նախնական «ծուռ» իմաստից, որի համար, սակայն, լավագույն վկայությունը տալիս է հենց հայերենը: Ասացինք, որ հնիս. նույն արմատից է ծագում նաև կարք բառը, իսկ այդ բառի գրաբարյան իմաստներն են. 1. «ճանկաւոր կամ ժանկուր գործի երկաթի առ որսալոյ խայծիւ զձկունս և որ ինչ նման է նմա», 2. «կարթաձև կամ ճանկաձև մասն կրնկանց ոտից թռչնոց և այլոց կենդանեաց. և ընդհանրապես կրուկն. սըրունք, գարշապարք, ջիլք ոտից. ոլոգ. ոտք. յօղք» (ՆՃԲ): Ահա «կրունկ» իմաստի համար մի քանի վկայություններ, որոնք քաղում ենք ՆՃԲ-ից, «Կարքի նորա սին կճեայ»: «Եթէ զթիկունս իմ դարձուցանիցեմ, զկարքս հարկանիցեն՝ ոյք իմք իցեն» (Եփր. Աւետարան): «Հարցուկ նստէր ի վերայ երեքոտանույն, և զատուցեալ զկարքսն» (Ոսկ. Ա. Կորնթ.): «Նորին կարթիցն գել արկեալ, նաև զծունկան յօշոտեալ»

(Շնորհալի): Այսպիսով, կրունկ և կարք նույնանում են թե՛ ըստ ծագման և թե՛ ըստ իմաստի:

2. Կոր, կեռ, կոռ.— Այս երեք բառերը Հր. Աճառյանը ձիշտ կերպով միացնում է իրար և երեքի կապող ողակն է համարում կոռ: Այս բառը, որ պահված է միայն բարբառներում, կապող ողակ է նաև մեր բառերի և հնխ. արմատի տարբեր իմաստների միջև: Այսպես՝ կոռ (Մոկք, Սալմաստ, Վան) «կոր, ծայրը ծռած, կեռ, կոր գլխով», Մոկք և Վան նաև՝ «կորացրած ծայրով հովվական գավազան», Մուշ և Վան՝ «ծայրը կեռ ցուպ», կոռ-մոռ գալ (Վան) «ծոմովել», կոռագլուխ (Վան) «խարդախ, խաբեբա», կոռակոտոշ (Վան) «ծուռ եղջյուրներով», կոռացնել (Երև.) «ծռել», կոռել (Մոկք, Վան) «որևէ բանի ծայրը կեռ շինել», կոռվել (Վան) «ծըռվել, կորանալ, կզվել», կոռաբար (Վան) «գուրս ցցված մեծ ժայռ», կոռկոր (Ղարաբաղ) «կորաբամակ պառավ» (Արմ., Գ, 1359—1361): Այս բառի զանազան նշանակությունները միմյանց են կապում մի կողմից կոր և կեռ, մյուս կողմից՝ դրանց և կարք բառի նախնական իմաստները: Սրանից էլ արգեն հետևում է, որ կեռ, կոր և կոռ ծագում են հնխ. \*ger արմատից, որի ցեղակից ձևերից մի քանիսը բերեցինք վերը՝ կրուկն բառի տակ: Կեռ և կոր բառերի ո հնչյունը, կոր բառի ր-ի դիմաց, ստացվել է հնխ. rs կապակցությունից (\*gers > կեռ, gors > կոռ, որի համար ցեղակից ձևերից կարելի է հիշել հին բարձր գերմ. kresan (հնխ. (\*gres ձևից) «գետնին գալարվելով քարշ գալ, սողալ», krasen «թուլլ», միջին բարձր գերմ. krīsen, kres «սողալ, քարշ գալ» և ավլն (WP, I, 597; Pok., I, 358—390): Կոր, կեռ իմաստների համար հատկապես պետք է հիշել հին հյուսիսային kringr «օղ, շրջանակ», նոր բարձր գերմ. kring, հին հյուսիսային kringla «շրջանակ, բոլորակ», միջին բարձր գերմ. krank, -ges «շրջանակ, բոլորակ», նոր բարձր գերմ. crangel «կորուխյուն», հոլանդերեն kronkel «ճկվածք, կորուխյուն», անգլ. crook «ծուլություն, կորուխյուն, կեռագլուխ հովվական գավազան» (հմմտ. Մուշի և Վանի՝ կոռ «ծայրը կեռ ցուպ»),



նորվեգ. krykia «կոր փալա», հոլանդ. krinkelen «ճկվել. կորանալ, ծավել», նոր բարձր գերմ. krauch «ճանապարհի ոլորան», հուն. γροπός «կոր. կորաքիթ», γροπώ «կորացնում եմ, ճկում եմ, ծռում եմ», անգլ. սաքս. crippan «ճկել, ծռել, կորացնել», նորվեգ. krypa «ծռել, կորացնել», kryla «կորամեջք լինել» և այլն:

3. Կոտն.— Այս բառը ժամանակակից հայերենում և բարբառներում ունի «բազուկ» հիմնական իմաստը, բայց հնում նշանակել է «կոնակ, թիկունք, թևի և ուսի միացման տեղը»: Հնիս. նույն \*ger արմատն է: Իմաստի տեսակետից մեր բառի զուգահեռն են կազմում. նորվեգ. kryla «կորամեջք լինել», krūk «կորամեջք. մեջքի վերին մասը, թիկունք», հին սուս. горбъ, гърбъ «մեջք, բլուր», սուս. горб «1. սապատ, կազ, 2. (զվռ.) կոնակ, մեջք», հին սլավ. грѣбъ «մեջք», սլավեն. грб, грбав, բալղար. грѣбъ, грѣбець «գորբի թիկունք, աշխատանք, ճիգ. ծախս», грѣбастъ «տոսցիկ», грѣбина «մեջք», սերբ-խորվաթական gr'bara, gr'bina «մեջք», gr'batise «ճկվել, կոտնալ, խոտարձվել» և այլն (WP, I, 594—596; Pok., I, 385—390, Преображенский, I, 146): Այս բառերի և վերին բարբառային կոտն կոտն բառերի իմաստային կապի համար առանձնապես կարևոր է Ղարաբաղի բարբառի կոակոո բառը, որ նշանակում է «կորաքամակ պառավ» (հմմտ. նորվեգ. kryla «կորամեջք լինել», krylt «սապատավոր մարդ», krūk «կորամեջք»). բառի նշանակությունը ցույց է տալիս, որ կոակոո պետք է համարել ոչ թե կոո «ծուռ, կոր» բառի կրկնությունը, այլ կոր և կոո բառերից կազմված բարդություն (=կորամեջք): Արդ նույն կոակոո բառը ցույց է տալիս, որ հայերեն կոտն բառի ուն ստացվել է rs-ից, ինչպես վերի կոո բառը. դա ապացուցվում է նաև կոտն բառի կոան գրաբարյան սեռականով, որի մեջ ո հնչյունը ն-ից հեռանալով՝ r չի դառնում: Նշանակում է, այդ բառի մեջ ն վերջահանգ հնչյունը հայկական հավելում է: Սրա հետ է կապվում նաև \*կոորքն արմատը, որ գործածվել է միայն հոգն. կորունք «կոնակ,

մեջը» ձևով բայց ունենք կորսնել «հենվել» բայը. ծագում է gōrptə ձևից (հմմտ. կարթ <\*gʷbti/gʷpti):

4. Կոռ.— Այս բառը հիշում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (Գ, 1340) հետևյալ բացատրությամբ. «Վեզի նման մի ոսկոր». ունի միայն ՀՀԲ, առանց վկայություն. գտնվում է գավառականներում. ինչպես՝ Մկ. կոռ, Երև. կոռան, Շիր. կոռա «եզան, կովի, ցուլի, արջառի և հորթի վեզ»: Իմաստը և ձևը ցույց են տալիս, որ ծագում է հնիս. \*ger արմատի \*gors ձևից: Իմաստի համար համեմատելի են նույն արմատից ծագած՝ հայերեն կրուկ, կրուկն և հին իսլանդերեն gairr «սրունքի ոսկորը. ոլոք, վեզ»: Վերջահանգ n հնչյունը կարող է դիտվել որպես \*gor-s ածած ձևի r > n օրինաչափ փոփոխություն, բայց կարելի է նաև ենթադրել հնագույն կոռն ձևը, որ թելադրում է Երևանի կոռան բառը, և այդ դեպքում կունենանք r > n սովորական փոփոխությունը ն-ից առաջ:

5. Կոռ.— Հիշում է դարձյալ Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 3, 1340), որ մենք մեկնել ենք և ստուգաբանել՝ կապելով հնիս. նույն \*ger արմատի հետ<sup>21</sup>:

6. Կոռ, կոռնալ, կոել.— Հ. Աճառյանն այս բառերը դիտում է որպես կեռ բառի ածանցավոր ձևեր և «Արմատական բառարանում» դնում է դրա գավառական ձևերի շարքում: Մատենագրության մեջ գործածվել է 10-րդ դարից: Այժմ գործածական է բարբառների մեծագույն մասում, ժողովրդական-խոսակցական լեզվում, ինչպես և՛ գրականում: Կեռ բառի ածանցավոր ձևեր լինելու դեմ է խոսում ե ձայնավորի սղումը բոլոր բարբառներում: Ղարաբաղի, Ազուլիսի, Մեղրու, Զանգեզուրի և մի քանի այլ բարբառներում դա սովորական է, ըստ որում շեշտից առաջ ընկնելով՝ բոլոր ձայնավորներն էլ սղվում են կամ դառնում ը: Այդպես չէ, սակայն, Արարատյան, Թբիլիսիի և այլ բարբառներում. ո-

21 է. Բ. Աղայան, Բառաբանություն, ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Լրաբեր», 1965, № 12 (տե՛ս ստորև՝ § 71):

րոնց մեջ է > է ձայնավորը շեշտից առաջ էլ մնում է, ինչպես՝ մեծ — մէծա՛նալ, մէձանալ, մէնձանալ, տեղ — տէղավօրեկ (հմմտ. Մեղրի՛ տրղըվուրիլ) և այլն: Սրանից պետք է եզրակացնել, որ հայերենում ունեցել ենք կեռ բառի ու ձայնավորով ձևը՝ կուռ: Այս բանը հաստատվում է նաև այն բարդ բառերով, որոնք ավանդված են մատենագրության մեջ. դրանցից են՝ կռածագ «կոր ծայրով» (վկայված 10-րդ դարից), կռակաուց «կոր կտուցով» (վկայված 14-րդ դարից), կռաշուրքն «կոր շրթունքներով» (վկայված 8-րդ դարից), կռապոզ (կոր՝ կեռ եղջուրներով» (վկայված 10-րդ դարից): Այս բարդությունների առաջին բաղադրիչի սղված ձայնավորը է չի կարող լինել, ուստի պետք է կանխադրել կուռ կամ կիռ. առաջինը նախընտրելի է, որովհետև հաստատվում է կուռն բառով, որ նույնպես ունի ու ձայնավորը:

Այսպիսով, հնիս. \*ger արմատից հայերենն ունի. կարք, կրուկ. (կրուկն > կրունկ), կոբ, կեռ, կոռ, կուռ (կռել, կռանալ). կուռն (կունակ), \*կուրքն (կորունք, կորնել): Այստեղ է նաև կոբ «կարիճ» բառը, որ ըստ Հր. Աճառյանի նույնն է կոբ «կլոր» բառի հետ (Արմ., 2, 154):

## 69. Չ Ե Ղ Ո Ի Ն

Այս բառը Պոկոռնին կապում է հուն. γελόνος «շրթունք, ծնոտ», հին իսլ. gǫlunnr «ծնոտ», շվեդ. gäl, դան. gjoelle «ծնոտ, խոփկ» բառերի հետ և ծագած համարում հնիս. gheluna «ծնոտ» բառից, ըստ որում հայերեն ձեղուն բառի իմաստն էլ դնում է «քիմք»: Այս ստուգաբանությունն ընդունելի չէ իմաստային անհամապատասխանության պատճառով: Հայերեն ձեղուն նշանակում է «ծածկ, առաստաղ, առիք». «քիմք» նշանակությամբ գործածվել է վերին ձեղունք բերանոյ կապակցությամբ, որի մեջ նշանակում է «բերանի վերին առաստաղ», այսինքն՝ քիմք. և որովհետև ամբողջ բառակապակցության մեջ միայն ստացել է այդ փոխաբերական իմաստը, հասկանալի է, որ չի կարելի վերագրել «քիմք» ուղ-

դակի նշանակությունը: Այդ ստուգաբանությունն ընդունելի չէ նաև այն պատճառով, որ ձեզումն բառի ձևը, ձևը և նաև հոլովածների ծագման բացատրությունը չի տալիս:

Ձեզումն բառի մասին գրել է Հր Աճառյանը<sup>22</sup>, բացատրելով բառի կազմությունը, և կապել վրաց. jeli «գերան» բառի հետ: Աճառյանը միանգամայն ճիշտ կերպով ցույց է տալիս, որ բառը կազմվել է -ումն ածանցով. նա համեմատում է անումն, սրումն և այլ բառերի հետ, որոնք նույնպես ունեն անումն, սրումն ձևով սեռական: Նշելով հայերեն ձևը և վրաց. jeli բառերի կապը, Աճառյանը գտնում է, որ հարցը վճռականորեն լուծել հնարավոր չէ, ըստ որում հայերեն ձևը բառի ձևը «արմատը գտնվում է միայն վրացերենում և չկա ցեղակից լեզուների մեջ: Լրիվ պատկեր կկազմվի կովկասյան լեզուների համեմատական քերականությունը ունենալով»<sup>23</sup>:

Առաջին անգամ այս ձևը արմատը կապեց հայերեն ձևը բառի հետ Պ. Բեդիրյանը<sup>24</sup>, որը, հիմք ընդունելով ձևը բառի ստուգաբանությունը, ձևը բառն էլ կապեց հնիս. g'hel արմատի հետ: Բեդիրյանի հողվածում, սակայն, նկատի չեն առնվում կովկասյան լեզուներում եղած բառերը (գոն է վրաց. jeli), ինչպես և ճիշտ չի բացատրվում բառի կազմությունը. նրա կարծիքով «ձևը բառը ներկայացնում է ձև արմատի հոգն. ուղղական ձևը»<sup>25</sup>:

Ի նպաստ բառի կազմության Հր. Աճառյանի բացատրության կարելի է հիշել, բացի վերն ասվածներից, նաև հետևյալը. ձևը բառի գործիականի ձևում սովորական ձևի հետ ունենք նաև ձևում ձևը Անանիա Սանահնեցու մոտ. այդ ձևը ցույց է տալիս -ումն ածանցը, ճիշտ ինչպես որ ու-

22 Հր. Աճառյան, Հայկական. է. ՉՍՁ ԳԱ, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, 12, էջ 87—88:

23 Նույն տեղում, էջ 88:

24 Պ. Բեդիրյան, Հայերենի մի քանի բառերի ստուգաբանության շուրջը, ՉՍՁ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 9, էջ 103:

25 Պ. Բեդիրյան, նույն տեղում, էջ 103:



նենք պաշտաւն՝ կազմված ուն ածանցով (պաշտաւն > պաշտաւն), սեռ. պաշտաման, գործ. պաշտամբ՝ -ուն > մն ածանցով:

Ի նպաստ ձեղ- և ձող արմատների կապի, կարելի է հիշել ձողունք «առաստաղ, կտուր» բառը, որ Հր. Աճառյանը համարում է նույն ձեղուն բառը՝ բերելով նաև «Վարք (վկայաբանութիւն) Ս. Գեորգայ զօրավարին» գրքի ձեռագրական ձեղուն և ձողուն տարբերակները, ինչպես և՛ Ակնի բառի ձողունք, Տր. ցխինք բառերը՝ նույն նշ.:

Այսպիսով, Պ. Բեդիրյանի ստուգաբանությունը հաստատվում է, և ձեղուն բառը հայերեն ձող բառի հետ կապվում է հնիս. g'hel արմատին:

Ինչ վերաբերվում է վրաց. jeli բառին, ապա դա լայնորեն տարածված է կովկասյան լեզուներում, և կովասագետները համարում են բուն կովկասյան բառ: Վ. Ի. Աբանը օտերին æenjalɪm/æenjalæ «ձողան (жерлы), գերան (брус)» բառն ստուգաբանօրին կապում է վրաց. jeli «գերան (брус)», մեզր. jalī «ծառ», ճան. ja:jalepe, nia:njalepe նույն. նշ., չեչեն. jolum «գետին ընկած ծառ՝ ճյուղեր՝ խոխլ (валежник)», բալկ. žəlmə, zəlmə «ծածկի գերանների վրա փովող ճյուղեր՝ խոխլ» բառերի հետ և համարում կովկասյան փոխառություն:

Թվում է, թե հնիս. g'hel արմատի ձայնդարձի արտացոլումը ձող և ձեղ արմատների ո/և ձայնավորներով, ինչպես և ձեղուն բառի հայերենով միայն բացատրվող հոլովումը, բավականաչափ հիմք են տալիս ձեղուն բառը բնիկ հայկական համարելու: Ինչ վերաբերում է այդ բառի և հիշված կովկասյան բառերի կապին, ապա դա կա՛մ պետք է համարել փոխառություն հայերենից, կամ էլ պետք է դիտել որպես պատահական զուգահեռություն: Անշուշտ, այդ հարցը վճռելը կովկասագետներին է պատկանում, սակայն մեր կողմից կուզեինք հիշել հետևյալը. ինչպես հայտնի է, հնափոյն շրջանում վրացերենի ձ, ծ, ց բաղաձայններին մեղրել են և ճաներենում համապատասխանել են ջ, ց, չ բա-

ղաձայնները. օր. վրաց. jeri ձերի «արմատ», մեզը. Ինձի նույն նշ., վրաց. ceri ձերի «ձանձ», լազ. mčaji մնաշի նույն նշ., վրաց. ča ցա «երկինք», լազ. ča շա նույն նշ.: եթե վրացերենում և կովկասյան լեզուներում ձելի և համապատասխան բառերի մեջ վրաց. ձ և մյուս լեզուների ձ համապատասխանությունը որևէ այլ հնչյունաբանական բացատրություն ու հիմնավորում չունի, ապա հայերենից փոխառություն համարելը վերացնում է այդ հարցը: Այնուամենայնիվ, այս մասին մենք որոշակի շենք կարող ոչինչ ասել և խնդրի լուծումը թողնում ենք կովկասագետներին:

## 70. Ճ Ա Ր Տ Ա Ր

Ճարտար բառը հին հայերենի շատ գործածական բառերից է. հիմնական իմաստներն են 1. վարպետ, արվեստագետ, հմուտ, 2. քերթող, իմաստասեր, 3. լավ, հմտորեն: Առանձնապես կենսունակ է բարդ և ածանցավոր բառեր կազմելու տեսակետից, ինչպես՝ նարտարաբան, նարտարասան, նարտասան, նարտաբազոյն, նարտաբազործ, նարտարախոս, նարտաբապետ և այլն, և այլն: Բառի ձևը ցույց է տալիս, հատկապես իր նարտ մասով, որ իրանական ծագում ունի. այդ են նկատի ունեցել շատ հայագետներ, որոնք փորձել են կապել իրանական այս կամ այն բառի հետ: Այսպես, օրինակ, Պոլ դը Լազարդը կապում է պահլ. čarətar «քայլող, առաջ ընթացող» բառի հետ, որ Հյուբշմանը մերժում է իմաստի անհամապատասխանության պատճառով: Մյուսները կապում է պահլ. čarəlutārā «գործունեություն» բառի հետ, որ Բարթոլոմեեն մերժում է, ուղղելով հիշյալ պահլավերեն բառը kartartum, և ինքը կապում է հայերեն նարտար-ը չավանդված\* čartara բառի հետ, որ կցում է սանսկրիտի čatura «ճարտար, ճարպիկ» բառին: Հր. Աճառյանը, թվելով այդ բառի շատ ուրիշ անճիշտ ըստուգաբանություններ էլ, Բարթոլոմեեի ստուգաբանությունը ևս մերժում է, հավանաբար իրանական \*čartara բառի գոյությունը չընդունելով: Այս մերժված ստուգաբանություն-

ների համար նշանակալից է այն, որ բոլորն էլ կասկածից վեր են համարում նաև բառի իրանական ծագումը: Մենք նույնպես ընդունում ենք այդ, ըստ որում հայերենի նաև-ով սկսվող բոլոր ստուգաբանված բառերը իրանական փոխառություններ են (ճար, ճարակ, ճարտուկ և այլն):

Դրանից էլ ներով՝ մենք հայերենի նաև բառը կապում ենք նույն արմատի հետ, որից ծագում է նաև պիկ. այս բառը Հ. Աճառյանը ստուգաբանում է այսպես. ծագում է պհլ. čarpik ձևից, որ թեև ավանդված չէ, բայց հիմն. պրսկ. čarb-dast «աջողակաձեռն և երագաշարժ», čarb zaban «ճարտարալիզու», որ և j̄arb «հաջողակ, ճարտար», j̄arb-dast «հաջողաձեռն», j̄arb-zaban «ճարտասան» ևն (Արմ. Դ, 622): Մենք գտնում ենք, որ ճարտար բառն ստացվել է պհլ.\* čarp արմատի\* čarp-tar ձևից, որը նույնի համեմատական աստիճանն է և պետք է նշանակեր ավելի հաջողակ, ավելի հմուտ, որ թեև պահլավական աղբյուրներով ավանդված չէ, բայց գտնում ենք Ֆիրդուսու Շահնամեում چربتر čarbtar ձևով: Պարսկերեն čarb-tar ձևն օրինաչափորեն ստացվել է պահլ. čarptar-ից, որ հայերենում պետք է տար նաև պարսկ. ինչպես ունենք պահլ. čartuk > հայ. նարտուկ «ճանճկեն, բծավոր սպիտակ»: Որ բաղդատական աստիճանի ձևը կարող էր անցնել հայերենին և գործածվել որպես անկախ ձև, հաստատվում է պահլ. vattar > հայ. վառար<sup>26</sup> բառի փոխառությամբ: Այստեղ čarptar > նաև բառ ձևի մեջ կասկած կարող է հարուցել պ-ի անկումը, բայց հայտնի է, որ հայերենը բաղաձայնների խճողում չի թույլատրում և սովորաբար կամ իրար հաջորդող բաղաձայնների մեջ ավելացնում է ը, կամ էլ նրանցից մեկը կորցնում է. նաև բառ բառի հետ հատկապես համեմատելի են վարդապետ > վարդպետ > վարպետ և կրտսեր > կրսեր, որոնց մեջ ունենք միջին պայթականի անկում, ըզպ, ըտս կապակցությունների մեջ:

<sup>26</sup> Պհլ. vattar > հայ. վառար բառի մեջ ունենք ր՝ տարևանություն հետևանքով:

## 71. ՃԻԻՂ, ՃԵՂ, ՃԻՂ, ՃՈՂ, ՃԵՂՔ, ՃՈՂՔ, ՃՈՒՂ(Ն)

Այս վեց բառերը կապելով իրար հետ, Հ. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունը. ճիւղ, ո հլ. «ծառի ոստ. փխբ. ուրիշ բաների ճյուղավորված մասը», որից երկայնաճիւղ, բազմաճիւղ... երկճիւղ, ... Այս արմատի հետ նույնն են նեղ..., որից ճեղեալ «ճյուղ-ճյուղ բաժանված», ... նեղան «ճիւղեր», նեղել «ճեղքել», հազարանեղ..., երկնեղ..., եռանեղ... (հմմտ. Ղրբ. նեղ «պատռվածք», որ տարբեր է նեղնր «ճյուղ» բառից): — Ճիւղ, ո, ի, հլ. «ոստ»..., որից ճղել «մասերի բաժանել»... նղնղկեն «բազմաճյուղ»... ճիղատր «ճյուղ-ճյուղ»... նող, նեղֆ և նղֆ...: Այս վեց ձևերը պատկանում են միևնույն արմատին, հիմնական գաղափարն է «պատռելով իրարից բաժանել». վեց ձևերից շորսը իրար հետ ձայնդարձ են (հմմտ. լիւղ, լող, լեղ), իսկ վերջին երկուսը կազմված են — ֆ աժանցականով՝ նեղ, նող պարզական արմատներից» (Արմ., 656): Այս ձևերին պետք է ավելացնել նաև նուղ, որ լայնորեն գործածվում է բարբառներում և ժողովրդական լեզվում: Բարբառների մի մասում նուղ ձևը կարող էր ստացվել ճիւղ-ից, ինչպես ունենք ձուն, արուն, սուն ձևերը հին ձիւն, արիւն, սիւն ձևերից: Բայց ունենք բարբառներ, որոնց մեջ ու-ի դիմաց ունենք օ, ինչպես՝ Ղարբաղ նօղնր (և նեղնր), Գորիս նօղնր, Կարճեան նօղուֆ և այլն: Այս բարբառների մեջ օ չէր կարող ստացվել ոչ ե-ից (ճեղ), ոչ ի-ից (ճիւղ), ոչ էլ իւ-ից (ճիւղ) կամ ո-ից (ճող), այլ միայն ու-ից, ինչպես՝ սուր > սօր, գլուխ > գլօխ, իւղ > յուղ > յօղ, ֆուղ > ֆօղ և այլն: Ուշադրության արժանի է նաև վերջահանգն հնչյունը, որ եղել է ըստ երևույթին բոլոր բարբառներում և որը պահպանվել է ժողովրդական (որից և գրական) նղներ հոգնակիում, ինչպես և սեռականի ժողովրդական նղան ձեվում: Այսպիսով, հիշյալ վեց ձևերին զուգահեռ կարող ենք կանխադրել նաև նուղն ձևը:

Այս բառերից ոչ մեկն էլ ստուգաբանված չէ, ըստ որում մեկի ստուգաբանությունն արդեն բավական կլիներ բոլորի համար: Ստուգաբանական հաջող փորձ պետք է համարել



միայն Պեղերսընինը, որից վերցնում են նաև Վալդեն և Պոկոնին, բայց այդ փորձն էլ մերժվել է հետևյալ պատճառով: Պեղերսընը առանձին բառեր է համարում ճիւղ և ճեղք. դրանցից առաջինը դիտում է իբրև հնդեվրոպական բառ և կապում է հուն. βῆλον, βῆλον «սլաք», լիտվաներեն gelūnis «խալվոց» բառերին: Մեյեն այդ շի ընդունում իմաստների անհամապատասխանությունից պատճառով (Արմ., գ, 657): Երկրորդը՝ ճեղք, բխեցնում է հնիս. sqel արմատից համեմատելով հին սլավոն. skolika, լատ. siliqua «կեղև, պատյան», silex «կայծքար», հուն. σίλιξ «փորել» ևն բառերի հետ, որ ընդունում են Վալդեն, Բուսսակը և Պոկոնին. բայց մերժում է Աճառյանը՝ առանց բացատրելու, թե ինչու, թեև կարելի է կարծել, որ մի կողմից նկատի ունի համեմատվող բառերի իմաստների տարբերությունը, մյուս կողմից՝ ճեղք և ճյուղ բառերի տարբեր ստուգաբանությունները, երրորդ կողմից՝ հնչյունական համապատասխանությունից դժվարությունը:

Հիշյալ վեց ձևերի միասնությունն այնքան լավ է հիմնավորում Հ. Աճառյանը, որ ամեն կասկած վերանում է: Դրան ավելացնելով նաև նույն ձևը՝ ունենում ենք յոթ ձև, որոնցից կարևոր են հինգը՝ ճեղ, ճիղ, ճիւղ, նող, նույն, ըստ որում ճեղք և նողք նոր ձևեր չեն, այլ միայն ածանցավոր կազմություններ: Արդ ձայնավորների այդ տարբերությունները կարող են բացատրվել միայն հնդեվրոպական ձայնդարձով, որը կաար օ-ծ, իսկ սրանցից էլ՝ օ>ի, օ>և, օ>ո, օ>ու: Չայնդարձի գոյությունն արդեն բավական է ընդունելու համար, որ դրանք հնդեվրոպական ծագում ունեն: Մեր կարծիքով ճիշտ է Պեղերսընի երկրորդ ստուգաբանությունը, բայց հարմար չեն համեմատության առնված ցեղակից ձևերը: Հնիս. \*sqel «ճեղքել, պատռել, կտրել» արմատը բազմաթիվ բառեր է տվել ցեղակից լեզուների մեջ, որոնցից մեր ճեղ (ճեղք), ճիւղ և ճեղքել, ճիւղ, նույն, նող բառերի համար պետք է համեմատել հին իսլանդ. slíta «պատռել, ճեղքել», անգլ. սաքս. slitan «պատռել», հին սաքսոն. slitan «ճեղքել, պատռել», հին

բարձր գերմ. slitan «ճեղքել», հին իսլանդ. slit «բաժանում, ճեղքում», միջին իսլանդ. scalp «ճեղքվածք, ճեղք, խոռոչ», ռուս. щель «ճեղք», պրուս. schalm «անտառամիջի ուղի՝ անցում» և այլն (Pok., I, 923—927): Բոլորի ընդհանուր իմաստն է «ճեղքել, ճեղքելով բաժանել, մասերի բաժանել», որի լավագույն օրինակներն են հին հնդկերենն kalpáyati «բաժանել, մաս մաս անել», բայց նաև՝ մազերը հարդարել (հյուսքերի բաժանելով) և հայերեն խեղելի «մի ամբողջի կեսը» և «մազերի երկուսի բաժանված հյուսքերից ամեն մեկը»: Հայերեն ցեղ, ցիղ(ք), ցիղ, ցող, ցուղն, ցողք բառերն էլ, ինչպես ճիշտ կերպով բացատրում է Հ. Աճառյանը, ունեն մի հիմնական դադափար՝ «պատռելով՝ իրարից բաժանել»:

Այսպիսով, իմաստի կողմից ոչ մի կասկածի տեղ չի մնում: Կասկած չեն հարուցում նաև ձայնավորները, ըստ որում հնիս. արմատն ունի ձայնդարձի բոլոր աստիճանները՝ երկար և կարճ ձևերով: Անբացատրելի է մնում, սակայն բառակազմի և բաղաձայնը. հնիս. sq սովորաբար տալիս է սլս, կամ, sk դառնալով՝ ց, s-ի կորուստով՝ ք, մի քանի բառերում՝ շ կամ kh > ք: Առհասարակ հայերեն և-ի ծագումը հայտնի չէ. բնիկ բառերի մեջ հանդիպում է շատ սակավ դեպքերում, այն էլ կապված հատուկ պայմանների հետ: Արդյոք այստեղ էլ ունենք ինչ-որ առանձին հանգամանք, թե ոչ, դժվար է ասել: Եվ, սակայն, համապատասխանությունն այնքան ակնբախ է, որ պետք է ընդունել:

## 72. ՄԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂԻ ԿՈՌ ԲԱՌԸ

Բերելով այս բառը «Արմատական բառարանում», Հ. Աճառյանը գրում է «Անստույգ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածված Մամբր. բ տպ., էջ 31. «Հրեշտակն զԱմբակում մարգարէ հացիւքն եփելովք և թանիրքն հասելովք զբոլոր կերակուրն տարաւ հասոյց կոռին յերկիրն Բաբելացոց»։ Ակնարկում է Դան. Ժդ, 32—37. հրատարակիչը համարում է «նշանակիչ զբոյն» և դնում է զլիսատառ. մյուս խմբագրու-

թխան մեջ, էջ 56, խնդրական բառը պակասում է և ասվում է պարզապես «տարավ ի Բաբելոն» (Արմ. բառ., Գ, 1340): Դանիելի մարգարեության համապատասխան հատվածը հետևյալն է. «Եւ իբրև ետես թագաւորն՝ եթէ կարի տազնապեն զնա, հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիէլ: Եվ արկին զնա ի Գուբն առիւծուց. և անդ էր զվեց օր: Եւ էին ի գբին և թն առնեծք. և տային նոցա հանապազ երկուս մարդս և երկուս պատրուճակս. բայց յայնժամ ոչ ինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիէլ: Եւ էր Ամբակում մարգարէ ի Հրէաստանի, և եփեաց թան, և բրդեաց հաց ի կուր. և երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց: Եւ ասէ հրեշտակ տեառն ցԱմբակում. տար զճաշդ զոր ունիս՝ ի Բաբելոն Դանիէլի՝ ի գուբն առիւծուց: Եւ ասէ Ամբակում. Տէ՛ր, զԲաբելոն՝ իմ չիբ տեսեալ, և զգուբն ոչ զիտեմ ուր իցէ: Եւ բունն եհար հրեշտակն զգագաթանէ նորա, և կալաւ զվարսից զլսոյ նորա, և եղ զնա ի Բաբելոն ի վերայ գբոյն սաստկութեամբ հոգոյ իւրոյ: Եւ աղաղակեաց Ամբակում և ասէ. Դանիէլ, Դանիէլ՝ արի՛, ա՛ն զճաշդ զոր առաքեաց քեզ Աստուած: Եւ ասլ Դանիէլ. յիշեցեր զիս Աստուած և ոչ ընդ վայր հարեր զսիրելիս բո: Եւ յարեաւ Դանիէլ և եկեր»: Այսպես, ուրեմն, վեց օր Դանիելն ընկած էր Գբի մեջ. ոչինչ չէր կերել և ոչինչ չէր խմել: Բնականաբար նա քաղցից բուլացել, տկարացել, ուժից ընկել էր:

Հետևաբար Մամբրեի «հասոյց կոռին յերկիրն Բաբելացուց» պետք է հասկանալ՝ «հասցրեց տկարին (թուլին, ուժից ընկածին)՝ բաբելացիների երկիրը»: Ուրեմն կոռ նշանակում է «թուլ, տկար, ուժից ընկած»: Այս իմաստով նա կապվում է հնիս. \*ger- արմատի հետ, որ նշանակում է «ծռել, գալարել, ոլորել» և որ ցեղակից լեզուներում ստացել է, այլ իմաստների հետ, նաև «թուլ, տկար, թմրած, անզգա» նշանակությունը, ինչպես՝ հին իւլանդերեն gerbach «խորշոմած, թառամած», հին սլավոներեն грѣбъ «մեջք, կոնակ. ջղաձգություն», грѣбъ «ապուշ, զռհիկ, անկիրթ», նոր բարձր գերմ. (բավարական) krapf «աննշան, աննկատելի», նորվեգերեն «թուլ՝ խեղճ մարդ», krasen «թուլ,

տկար, նկուն», հին բարձր գերմ. krankoioñ «թուլանալ-սալթաբել», գերմ. krank «հիվանդ, տկար» և այլն (Walde—Pokorny, 1, էջ 593—598): Այս մեկնությունն իբրև ապացույց ունենք հնիս. նույն արմատից ծագած գավառական կոռ «կոր, ծուռ» և կոռնալ (արմատը՝ կոռ) բառերը, որոնց մասին տե՛ս վերը § 67:

### 73. ՄԱՌՆ/ՄԱՌ, ՄԱՅՐ/ՄԱՐ, ՄԱՐԵԼ, ՄՌԱՅԼ

Այս բառերից առաջին երկուսը հին մատենագրությունն մեջ գործածվել են սովորաբար կայուն բառակապակցությունների կամ բաղադրյալ բառերի մեջ, ինչպես ի մառն մտանել, ի մառն դառնալ «մայր մտնել (արևի)», մառնամուտ «մառախուղով պատված, մառախուղի մեջ մտած»: Առանձին կա գործածված մառն Ստ. Լեհացու բառարանում (ըստ ՆՀԲ). «ծածկեցաւ մառամբ քաղաքն ամենայն»: Թե՛ ՆՀԲ և թե՛ Աճառյանի «Արմատականում» բառս բացատրված է «մեզ, մշուշ» իմաստներով, ըստ որում երկուսի համար էլ որպես ելակետ են ծառայում մառախուղ/մառախուլ, մառախլապատ և նման բառերը: Բերված կապակցությունները, ինչպես և Լեհացու վկայությունը, ցույց են տալիս, որ բառի իմաստն է «մութ, մթություն». միայն այդ իմաստի վրա կարող էին առաջանալ ի մառն դառնալ՝ մտանել կապակցությունները, որոնք, բնականաբար, չեն նշանակում «մեզի՛ մշուշի մեջ մտնել», այլ «մայր մտնել»:

Ժամանակակից հայերենում էլ մառ բառը գործածվում է «մութ, մթագույն, մթամած» և փոխաբերաբար՝ «մռայլ, խոժոռ» նշանակություններով: Այդ «մութ, մթություն» իմաստը հաստատվում է նաև մայր նույնանիշ և նույնարմատ բառով, որով ունենք նույնիմաստ կապակցություններ ի մայր մտանել, ի մայր դառնալ «արևի մայր մտնել», ի մայր դարձուցանել «հանգցնել, մարել», այլև բաղադրյալ բառեր, ինչպես՝ մայր արևու, արևամայր և արևմար՝ «արևի մայր մտնելը, մայրամուտ, արևամուտ», մարիլ («աստղի) մայր մտնել» և մարել «հանգցնել, հանգչել», անմար «անշեջ»,



հատկապես՝ մայրամած «մթամած, խաւարամած» և այլն և այլն: Այս երկրորդ շարքի բառերի մեջ հանդես են գալիս արմատի երկու տարբերակները՝ մայր և մար, որոնց նույնությունը կասկածի տեղիք չի տալիս (հմմտ. այլ/աղ-աւ-ալ, նշոյլ/նշող, թոյլ/թող, այր/ար և այլն): Այս բառերի հետ է նույնանում նաև մոայլ բառի արմատը, որ է մուռ կամ միռ, իսկ -այլ-ը ածանց է:

Այսպիսով, մառն/մառ, մայր/մար և մուռ կամ միռ (մոայլ) արմատները միանում են իրար թե՛ ձևով և թե՛ «մթություն, մթամած, մթագույն» ընդհանուր իմաստով: Այս բառերի կապը նշել է դեռևս Ս. Տերվիշյանը, դրանց միացնելով նաև մուռ, մուր բառերը, բխեցնելով դրանք հնիս-*mar* «մարել, սեանալ» արմատից և համեմատելով սանս-*mal-ina* «մութ», հուն. *μελας* «սև» բառերի հետ: Հր. Աճառյանը բացատում է վերջին երկուսը (մուր, մուր) և իրար հետ կապում միայն առաջինները, բայց մերժելով ինչպես Տերվիշյանի, այնպես էլ մառն և մոայլ բառերի այն ստուգաբանությունը, որ առաջարկում է Պետերսոնը, և ընդունում են վալդեն և Պոկոռնին: Այս բառերին անդրադառնում է Պոկոռնին իր նոր բառարանում, որ նախկինում ընդունված հնիս. մեկ (*mer-*), *mor-* արմատը տարբերակելով վերածում է երեքի և երրորդ՝ (*mer*), *mor-(u)* արմատից բխեցնում հայերեն մառ (մառախուղ) և մոայլ բառերը:

Քննությունն առնելով այս բառերը (ՊՀԲ, 1965, 1, էջ 258—259) և միավորելով դրանք իրար հետ, Գ. Զահուկյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Եթե հայերեն այս բոլոր արմատներն ու բառերն իրոք կապված են, ապա կարելի է երկու ենթադրություն անել: 1) Հնարավոր է, որ արդի մարել, մարմրել բայերը պահպանում են հնագույն «առկայծելով հանգչել» իմաստը, և բոլոր մնացած ձևերն ու իմաստներն ածանցական են. այդ դեպքում կարելի է որպես աղբյուր նշել \**mer* «առկայծել» արմատը, որտեղից հուն. *μαρμαριω*, *μαρμαριξω* «փայլել», *ἀμαρῖσσω*, *μαρμαρῖσσω* «փայլել, առկայծել», *μαρσγός* «մթին, մթագույն», ռուս. բրբռ. *мара*

«պատրանք, մեզ, մառախուղ, մշուշ», *marebo* «միրած, պատրանք, մեզ, մառախուղ», *меркнутъ* «աղոտանալ, մարել», *мерцать* «առկայծել» և այլն: 2) Հնարավոր է, սակայն, որ մենք -գործ ունենք երկու հնդեվրոպական արմատների խառնվելու (կոնտամինացիայի) հետ, եթե միայն այդ հնդեվրոպական արմատները միևնույնը չեն և ճիշտ են առանձնացված: Կարծում ենք, որ մեր այդ բառերը, որոնց կապը կասկածի տեղիք չի թողնում, չեն կապվում «առկայծել» բառի հետ: Մարմել թեև նշանակում է «առկայծելով հանգչել», բայց դա չի ենթադրում մարել «հանգցնել, հանգչել» բառի «առկայծել, առկայծելով հանգչել» նախնական իմաստը, այլ բխում է կրկնության տրամաբանական իմաստից. մարմել-ը կրկնավորն է մարել-ի և պետք է նշանակեր «տեականորեն կամ պարբերաբար մարել», որ է «առկայծել». սրան իբրև ապացույց կարելի էր հիշել բարբառային հանգհընգէլ, հնգընգէլ (հանգչել-ի կրկնավորը), որ նշանակում է «առկայծել, վառվել ու հանգչել»:

Մեր կարծիքով բոլոր այդ արմատները ծագում են միևնույն (*mer-*), *mor-* u «սևացնել, սև՝ մուխ գույն, կեղտի բիծ» արմատից: Դրանից են ծագում հուն. *μερῶδες* «մթին, անթափանց», *μερῶδες/μεῖον* «ծխագույն սևացած», լիտվ. *morai* «փառ, բորբոս», ռուս. *марать* «կեղտոտել», *марашка* «մրարիծ, կեղտի բիծ», չեխ. *maraty* «սևացրած, սևացած», հուն. *μερῶδες* «կեղտագույն», *μερῶδες* «սև», և այլն: Իրար հետ կապելով հիշյալ հալերեն արմատները հնարավոր է դատարար հաստատել Պեակրոնի և Պոկոնու ստուգաբանությունը, ըստ որում մառ/մառն ծագում է արմատի *morso* ձևից. մար-ը՝ *mor-* o ձևից. մայր-ը՝ *meiro* աճած ձևից և մառ կամ միռ-ը (մաալլ)՝ *mōrso* կամ *mērso* ձևից:

#### 74. ՄԵՅ (ՄէՅ), ՄՈՅԵԼ

Բոլորն էլ ավանդված են դասական շրջանից. մեց (գրված նաև մէց) նշանակում է «փտություն, ցեց, ապականություն», որից՝ մեցոտիլ «ցեցոտվել, փտել, ապականվել», մեցամեց

«ցեցակեր», մեցամես նույն նշ. (Արմ., դ, 998—999): Ա-  
ծանցավոր և կրկնավոր ձևերը ցույց են տալիս, որ սկզբնա-  
պես նշանակել է «ցեց», ապա՝ «ցեցի կերած, որդնակեր»,  
և հետո՝ «փտած»: Ծագում է հնիս. \*mu-, \*mus- «մժեղ,  
ճանճ» արմատից (Pok., I, 752), որի ցեղակիցներն են  
հուն. μῦζ, լատ. muska, լիտվաներեն mušė, լատիշերեն mū-  
sa, mūscha, հին. պրուս. muso, հին սլավ. muscha = սուս.  
муха, բալղար. мýха «ճանճ», սուս. мушца, мошка «ճան-  
ճիկ, մժողակ, ման», լեհ. mszyca «ծառի ոջիլ», հին սլավ.  
mušica «մոծակ», հին իսլ. mý, անգլ. սաքս. mucg, հին  
սաքս. muggia, անգլ. midge, հին բարձր գերմ. mucca «ճան-  
ճիկ», գերմ. Mücke, հոլանդ. mug, շվեդ. mygg, mygga,  
ալբան. mize «մոծակ»: Հնիս. \*mu, \*mus- արմատը բնաձայն  
է համարվում. ցեղակից լեզուներում մեծ մասամբ կազ-  
մըվել են ածանցավոր ձևեր. հայերենի մեց բառը ծագում է  
mes-ko ածանցավոր ձևից, որի զագահեանն են ներկայաց-  
նում լատ. musca «ճանճ», լեհ. mszyca «ծառի ոջիլ», գերմ.  
Mücke «մոծակ», սուս. мушка «մոծակ», և այլն: Հայերենի  
համար դժվարություն է հարուցում հնիս. արմատի u ձայ-  
նավորը, որ է կամ է չի դառնում: Սակայն ցեղակից լեզու-  
ներում տեսնելով ալբաներեն mize, որի մեջ ի ձայնավորը  
կարող է ստացված լինել հնիս. i, ĭ, ē ձայնավորներից կամ  
ei երկբարբառից, բայց ոչ՝ u-ից կամ o-ից: Այսպիսով, հնա-  
բավոր է դառնում կանխադրել հնիս. արմատի \*mes, ինչպես  
և \*mos (սուս. мушка) ձևերը. հնարավոր է, որ արմատն  
ունեցած լինի նաև \*meis ձևը, որի հետ կիսապղկեր հայերեն  
մեց-ը, եթե սխալ գրություն չէ:

Նույն արմատի -no ածանցավոր \*mus-no ձևից է ծագել  
հայերեն մուռն (Արմ., Դ, 1158—1159):

Վերջապես նույն արմատից է ծագել նաև մոցեյլ, որ  
նշանակում է «վանել, հեռացնել, մի սովորությունից հրա-  
ժարեցնել». իմաստի համար կարելի է համեմատել սերբա-  
կան-խորվաթական мухати се, мухатице «վանել, քը-

չեղ» (ճանճերի մասին), որը ծագում է նույն արմատից<sup>27</sup>:

## 75. Մ Է Տ, Մ Ե Տ

Մեա-ը կշեռքի լծակի միջին կետն է, ապա՝ «կշեռքի նժար՝ թաթ», որից ծագել են միանել «հակել, թեքել, ծռել», միախլ «հակվել, թեքվել, հավանություն գալ», միառում «հակում, ձգտում, պիտավորություն» և այլն: Ծագում է հնխ. mēd- «չափել, կշռել» արմատից. ցեղակից ձևերն են. հին հնդկ. masti «կշռելը, չափելը», հուն. μέτρον «պիտավորություն տեսնալ, մտածել, ձգտել», μέτρον «սորուն նյութերի չափի միավոր», լատ. meditor «մտածել», modus «չափ, ձև, կերպ, կղանակ», գոթ. mitan, անգլ. metan, հին բարձր. գերմ. mezzan «չափել, կշռել», հին իսլ. meta «գնահատել», met «կշիռ, ծանրություն», անգլ. ge-met «չափելը, կըշռելը», հին բարձր. գերմ. mer «չափ, գավաթ, անոթ», անգլ. mitta «հացահատիկի չափ» և այլն: Այս նույն արմատից է ծագում հալ. միա «միտք» բառը, ինչպես և՛ մեա «մեջտեղը», մեաակալ «միջին, միջակ» (գործածվել է բալի մասին՝ «հասարակ բայ» նշանակությամբ): Հայերենի միա ծագում է արմատի mēd ձևից, մեա-ը mēd-ից, իսկ մեա-ը ենթադրում է meid- կրկնաբարձրով ձև:

## 76. Մ ՈՒՂ, ՄՂԵԼ

Առանձին գործածված մուլ արմատը ունի «վարժ, գործի մեջ մտած, ջանացող» (կենդանիների մասին), ինչպես և բարդությունների երկրորդ եզրում՝ առմուլ «անվարժ», քառմուլ «վարժ». բայն ունի «1. հրել, վարել, քշել, 2. վարժեցնել, գործի սովորեցնել (կենդանուն), 3. պատերազմ վարել, կռվել» իմաստները: Ծագում է հնխ. mō- «ջանալ, ջանք՝ ճիգ թափել» արմատի -lo ածանցով աճած molo

<sup>27</sup> Преображенский. Этимологический словарь русского языка. М., 1914, стр. 572.



ձևից. հմմտ. հուն. μῶλις «ջանք, ճիգ, աշխատանք, հոգս, լարում, հոգնություն», լատ. moles «բեռ, զանգված, կույտ». molestus «դժվարին, տհաճ, ձանձրալից», գոթ. af-mauþs «հոգնեցնել», հրգ. muoan, միջին գերմ. müen, müejen «անհանգստացնել, դժվարություն պատճառել», նիդեռլ. moeijen «բեռնել, ծանրաբեռնել, անհանգստացնել», հրգ. muodi, հին սաքս. modi «հոգնած», լիտ. pri-si-muoletis «ջանալ, աշխատել, ջանք թափել», ռուս. маять «տառապառ անել, ջարջարել» և այլն: Ըստ այսմ, հայերին մուռ արմատի նախնական իմաստն է կղել «ջանացող, ջարջարվող», որից և գարգացել են մյուս նշանակությունները:

### 77. Յ Ո Ր Ո Շ Տ Ո Ն Դ (?)

Այսպիսի մի բառ գտնում ենք Անանիա Շիրակացու «Յաղագս ամպոց և նշանաց» գործում, հետևյալ նախադասության մեջ. «Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում զմիմեամբք՝ հողմ նշանակէ. նման է որպէս որ յորոշտոնդ (?) ելանէ»<sup>28</sup>: Հրատարակիչը, ճիշտ կերպով կասկածելով բառի իսկությունը, հարցական է դրել: Կասկած չկա, որ գրչագրական սխալով առաջացած ձև է, որ մենք բացատրում ենք հետևյալ կերպ. Ընդօրինակվող նախնական օրինակում կամ բուն բնագրում կղել է

### նՄԱՆԷՈՐՊԷՍՈՐԻՈՐՈՇՏՅԱԼԵԼԱՆԷ.

Ընդօրինակողները կարդացել են և բառերն անջատել՝ նման է որպէս որ. այս որ-ը առանձնացնելով իբրև հարաբերական, այնուհետև հաջորդող ի-ն հատկացրել են հաջորդ բառին և ստացվել է ԻՈՐՈՇՏՅԱԼ, բայց որովհետև ի-ն էլ ձայնավորից առաջ դառնում է Յ, ուստի և գրել են ՅՈՐՈՇՏՅԱԼ. այնուհետև այս ստացվածն էլ աղավաղվելով դարձել է

28 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, 1944, էջ 308:

ՅՈՐՈՇՏՈՒՄԻ բոլորովին աղճատված գրությունը: Քառերի անջատման մեր նշած սխալի համար պետք է նկատի ունենալ, որ գրաբարում, ներառյալ և 7-րդ դարի գրաբարը, ու հարաբերականի գործածությունը վերը բերված ձևով (նման է որպէս որ), անսովոր է: Ամբողջ հատվածը պետք է սրբագրել հետևյալ կերպով. «Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում զմիմեամբք՝ հողմ նշանակէ. նման է որպէս որի որոշտեալ ելանէ», այլ կերպ ասած, մենք նՄԱՆէՆՐՊէՍՈՐԻՆՈՐՈՇՏԵԱԼԵԼԱՆէ տառաշարքը անջատում ենք նՄԱՆ է ՈՐՊէՍ ՈՐԻ ՈՐՈՇՏԵԱԼ ԵԼԱՆէ ձևով, վերականգնելով Ի-ն (յ-ի փոխարեն) և այն հատկացնելով ՈՐ-ին, որով ստացվում է ՈՐԻ (թռչնանուն): Նախադասության միտքը այն է, թե երբ շատ ՊԱՊԻԻ (?)-ներ ծովից բարձրանում են իրար հետ, հողմի նշան է. նման է (այն բանին), երբ որին առանձնացած (մեռակ) է ելնում: Որոշտե՛լ բառը հայտնի է բոլորին, ուստի և ոչինչ չի մնում ասելու: Նույն հատվածը պապիւք բառը նույնպես կասկածելի է. Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» բերում է այդ բառը հենց միայն այս հատվածը նկատի ունենալով՝ իբր նորագյուտ բառ և բացատրում է. «մի տեսակ ձուկ կամ ծովային թռչուն». հարմար չէ ձրկնանուն համարել (ձկները ինչո՞ւ պետք է ծովից ելնեն). անշուշտ ծովային թռչունի անվանում է, որ Գ. Աբգարյանը կապում է հուն. πᾶππος բառի հետ:

## 78. Ն Կ Ո Ւ Ղ

Նկուղ բառը, որ ավանդված է հին մատենագրությամբ՝ մեսրոպյան շրջանից, նշանակել է «խորք, գետնափոր վայր», այլև՝ «բարավանի իջեան». հնագույն գործածությունն ունենք Աստվածաշնչում, հետևյալ նախադասության մեջ. «Եղից զիննուէ յապականութիւն, ոգնիք ի յարկս բնակեացն. և գազանք գոչեսցեն ի նկուղս նորա» (Սոփոն., Բ., 14):

Նոր Հայկազյան բառարանը, նրան հետևելով նաև Հ. Աճառյանը («Արմատական բառարան», հ. Ե, էջ 139) տա-

լիս են «վաճառանոց, մթերանոց, զանձատուն» իմաստը ևս, որ քաղում են «Հին բառարանից», բայց որի համար մատենագրությունից վկայություն չեն բերում: Ժամանակակից լեզվում նշանակում է «գետնափոր տուն, տան գետնահարկ»:

Հին իմաստով հոմանիշ է գրաբարյան կաղաղ բառին, որ նշանակում է «որջ, թաքստոց, զազանների դադարի վայր, ծակ, բուն»։ Երկու բառերի իմաստային տարբերությունն այն է, որ մինչդեռ երկրորդը չի նշում որջի կամ դադարման վայրի ցածր լինելը, առաջինն ուղղակի ցույց է տալիս ցածր տեղ, գետնափոր տեղ: Կաղաղ բառը կրկնավոր է և ծագում է հնիս. \*gol «կացարան, որջ, բուն» բառի ստորին ձայնդարձով ձևից, այն է \*gļ: Նկուղ բառը ներկայացնում է պարզական արմատը՝ նի- նախամասնիկով, որ նշանակում է «ցած, ներքև» (հմմտ. նզով, նայել > \*նիհայել և այլն): Հետևաբար՝ նախնական կուղ արմատը, որ առանձին չի պահպանվել, ծագում է հնիս. \*gol արմատից, օրինական հնչյունական փոփոխություններով: Յեղակից լեզուներում ավանդված ձևերից կարելի է համեմատել լիտվաներեն guõlis «մարդկանց և զազանների կացարան, դադարի վայր, որջ», լեթթերեն guõl'a «կացարան, բուն», լիտվաներեն guliu, gulti «պառկել», լեթթերեն gult «պառկել քնելու», gul'a «քնարան, կացարան» և այլն: Հայերեն երկու բառերը՝ նկուղ և կաղաղ ժամանակի ընթացքում, բացի նի- մասնիկով ստեղծված տարբերությունից, ստացել են նաև իմաստի այլ տարբերակում. նկուղ նշանակել է ընդհանրապես «ցածր գտնվող վայր, գետնափոր տեղ» թե՛ մարդկանց և թե՛ կենդանիների համար, իսկ երկրորդը՝ «տեղ, որջ» կենդանիների, այն էլ մեծ մասամբ սողունների համար: Այդ տարբերակումով է, որ նկուղ վերջապես ստացել է այժմյան իմաստը, որ արտահայտում է տեղի ցածր, գետնափոր լինելը և վերաբերում է մարդկանց կացարաններին, բայց մյուս կողմից էլ՝ հենց «գետնահարկ» իմաստի զարգացմամբ ստացել է նաև «մառան, մթերանոց» իմաստը:

Գործածված է մեսրոպյան շրջանի գրաբարում (Ս. գիրք, Բուզանդ ևն) «արհամարհել, անարգել, մերժել, ապստամբել» իմաստով: Ա. Մեյնն բառս համարում էր (REA<sup>2</sup>, 2. 234) իրանյան և կապում niš/kaf- ձևի հետ (արմատը՝ kai-): Հ. Վ. Բեյլին (REA, NS, № 2, 2) գտնում է, որ նշկանն (ինքը գրում է՝ նիշկանն) ազգակից է խոթանյան սակերենն naškasta-, naškhasta «ելավ, բարձրացավ» բառին, որի արմատն է kah-, khah-: Նա հիշում է նաև հին հնդկերեն kas-, պրակրիտ kas- և nikas- հիմքերը: Այս բոլոր տվյալները ի մի բերելով՝ գտնում ենք, որ հայերեն նշկանել բառը փոխառություն է իրանականից (հին պարսկական). իրանականի համար պետք է ենթադրել \*ni-škaī-tan բայը՝ «ցած նետել, վայր ձգել» իմաստով (ni- նախածանցն ունի «ի վայր, դեպի ցած» իմաստը): Հայերենում, ըստ այդմ, նշկանել բառի նախնական իմաստն է «վայր նետել՝ ձգել», որից «անարգել, արհամարհել», ապա «չանսալ, բանի տեղ չդնել, մերժել» և վերջապես՝ «ապստամբել»: Հ. Վ. Բեյլին իբրև ելակետ է ընդունում «ելնել, բարձրանալ» իմաստը, որից դժվար է բխեցնել մեր բառի «արհամարհել, անարգել» իմաստները: Բացի դրանից, kah-, khah- արմատի «խփել, հարվածել» իմաստը միանգամայն հարմար է և՛ շկան, և՛ նշկանել բառերին, որոնք նույն ծագումն ունեն: Նախածանցավոր \*ni-škaī- ձևի համար լավ-զուգահեռ է պրակրիտի ni-kas ձևը: Այսպիսով, բառի բաղադրիչներն են դառնում (իրանականում) ոչ թե niš kaf, ինչպես առաջարկում է Մեյնն, այլ՝ ni-škaī:

## 80. Ն Ո Ւ Ա. Ճ Ե Լ

Իրանական փոխառություն է, որ ծագում է vačāh բառից՝ ni- «ցած, ստոր, ընդ, ենթ» մասնիկով: Իրանական այդ բառը, որ ծագում է vak «ասել, խոսել» արմատից, ունի «1.



խոսք, ճառ, բառ. 2. արտահայտություն, դատողություն. 3. խոստում, ապահովություն, բանավոր երաշխիք» նշանակությունն են բերը<sup>29</sup>: Ըստ այսմ, \*ni-vačah պետք է նշանակած լինի «խոսքի տակ գցել, իր խոսքին ենթարկել, ապահովություն՝ երաշխիք անել», որից ինքնին արդեն բխում է «հնազանդեցնել, հաղթել, տիրել»: Ձևի համար (ni-vačah > նուաճ-ել) համեմատելի են՝ իրանական (պահլավ.) ni-vedak > նիվէ-րակ > նիւրակ > նուիրակ, ավեստ. nivaeday > նիվէր > նուէր > նուէր բառերը, որոնց մեջ իրանական nive գարձել է հայերենում նուէ:

## 81. Շ Ե Ղ Բ

Գրասական շրջանից ավանդված չէ. մատենագրություն մեջ պատահում է միայն միջին դարերում, որի պատճառով էլ ն. Բյուզանդացին և Ն. Աճառյանը համարում են միջին հայերեն բառ: Գործածական է բազմաթիվ բարբառներում, որոնցից և անցել է արդի գրականին «դանակի՝ սրի ևն բերան» իմաստով: Բարբառներում ունենք շեղբ, շեղբիկ, շղբիկ, շղբլինկ, շղբինկ «դանակի բերան», շեղբ «անկոթ դանակ կամ կոտրած դանակ» (Ձեյթուն), խղբիգ «դանակի երկաթե մասը» (Հաճրն), շուղուփ «անկոթ դանակ» (Ղարաբաղ, Մեղրի, Զանգեզուր) և այլն: Ն. Աճառյանը (Արմ., Ե, 319—320) համարում է ասորական փոխառություն. «ասոր. šelpā, šəlfā «դանակ», šelpūnā «փոքր դանակ», հբր. šōlēf «դանակ, թուր», šalaf «սուրը պատյանից հանել», Լիբանանի արաբերեն գվռ. šalfūne «դանակի փոքր բերան», «...արմատը ասոր. šəlap «extraxit, evellit, քաշել, հանել, խլել»: Մեզ թվում է, որ այստեղ գործ ունենք պատահական նմանություն հետ: Հնչյունական օրենքները թույլ չեն տալիս մեր բառը ասորերենից փոխառված համարելու: Այսպես, այն հանգամանքը, որ բառը ավանդված է միջին դարերից և գործածվում է բարբառներում, ենթադրել է տալիս, որ փոխառությունն էլ միջին դարերում է տեղի ունեցել, խոսակցական-ժողովրդական լեզվի միջո-

<sup>29</sup> Ch. Bartholomae, Altiranisches Wörterbuch, էջ 1340—1342:

ցով. բայց այդ դեպքում ասոր. Լ-ի դիմաց պետք է ունենալինք հայերեն Լ, որովհետև դ-ն արդեն այսօրվա արտասանությունն ուներ: Այնուհետև, ասորական փոխառությունների մեջ ասոր. ք-ն ոչ մի դեպքում հայերեն ք չի տալիս, այլ միայն՝ պ կամ փ, նույնիսկ ձայնորդներից հետո, ինչպես՝ šappuša > հայ. շամփուր:

Մենք գտնում ենք, որ հայերեն շեղք բառը ծագում է հնիս. \*(s)qel «կտրել, ճեղքել» արմատից, որ ցեղակից լեզուներում ստացել է նաև «կտրող գործիք, սուր, գեղարդ» իմաստը, ինչպես՝ թրակ. skalmē «սուր, թուր», հին հնդկերեն kutharah «կացին», հուն. πικρὸς «սեպ, երիթ», լատ. cultur «դանակ», հին իսլանդերեն skalm «կարձ թուր, դանակ», լեթթերեն škilis «հերձոց, պատվաստի դանակ», հին իռլանդերեն colg «սուր», լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», ռուս. чЕЛНОК «1. մաքուր, 2. մակույկ, նավակ» (իրբև՝ «մեջը փորած») և այլն (WP, II, 590—596, Pok., I, 926): Հայերենը ծագում է արմատի \*sqel(ep) > \*sqelp ձևից՝ ք > ք օրինաչափ փոփոխությունը՝ ձայնորդից հետո (հմմտ. \*penk<sup>w</sup>e > քիկ, \*ant > (գր)անգ) և այլն): \*Sqel(e)ք ձևի համար ցեղակիցներից կարելի է հիշել. լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», scalprum, skalper «կտրելու սուր գործիք», skalpeilum «վիրահատական սուր գանակ, հերձակ, սկալպն», անգլոսաքս. hiefl «կոթ, բռնակ», անգլո. helve «կացնի կոթ», գոթ. halbs, հ. իսլանդ. hálfr, անգլոսաքս. healf, գերմ. haib «իկս» (=մաս, բաժին) և այլն (WP, II, 595):

Հայերենի համար կարող է կասկած հարուցել միայն բառասկզբի sq > շ հնչյունափոխությունը, բայց այդ կասկածն էլ վերանում է, երբ համեմատության ենք առնում հնիս. \*sqel «ձկել, ծռել, կորացնել» > հայ. շեղ և խեղ բառերը: Մեր նշած արմատից հայերենն ունի ցելուկ, որ ծագում է sk'el ձևից. շեղք-ի համար պետք է կանխադրել արմատի \*qel(e)ք առանց s-ի ձևը, որից ծագում են նաև լատ. cultur «դանակ», հուն. κελαις «կացին» և այլն:

Այս բառի բաղմամբիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուբերմանի և Աճառյանի կողմից: Հյուբերմանը (Arm. Grammatik) հիշելով շերտ բառի համեմատությունները ցեղակից լեզուների ձևով և իմաստով նման բառերի հետ, գրտնում է, որ գրանցից ոչ մեկն էլ ընդունելի չէ, թեև նշանակության տեսակետից հարմար է համարում հունարենն յաւո «ճեղքել», յաւո «փայտի կտոր», յաւոճճ «ճեղքված փայտ», գերմաներեն scheid «փայտի մեծ կտոր» և այլն բառերը, որոնք, սակայն, ծագում են հնիս. \*sk'eid- արմատից, որ տվել է հայերեն ցտել:

Աճառյանը (Արմ. բառարան, հ. 5, էջ 332) հիշելով Հյուբերմանի մատնանշած լիտվաներեն skēdra' բառը, որ Հյուբերմանն իսկ մերժել է հնչյունական օրենքների խախտում նկատելով, գրում է. «Այս բոլոր ձևերից ամենահարմարն է Հյուբերմանի մատնանշած լիթ. skēdra «տաշեղ», որ թեև պիտի տար. հյ. \*շերտ, բայց այս էլ համաձայն հայերենի ներքին ձայնական օրենքներին՝ իսկույն պիտի դառնար շերտ: Անպատեհ է միայն այն հանգամանքը, որ լիթ. skēdra գրվում է հնիս. \*sqeid արմատի տակ, որ տալիս է հայերեն ցտել: Ներկա ենք թերևս ձայնաբանական մի առանձին օրենքի, որի պայմանները անծանոթ են մեզ»: Պատրուբանին (Sprachwissenschaftliche Abhandlungen, հ. I, էջ 195) կցում է լիտվաներեն kerfu «կտրել», հունարեն յաւոճճ, լատիներեն curtus և այլ բառերի, որոնք, սակայն, մերժում է Աճառյանը (անդ, էջ 331), որովհետև դրանց հետ կցվում է հայերեն ֆեբել բառը:

Պատրուբանին ճիշտ է կռահում համեմատվող բառերի ընդհանրությունը, բայց չի կարողանում գտնել հայերենի հիմքում ընկած նախաձևը և ցեղակից ձևերը: Հնդեվրոպական այն արմատը, որից ստացվել են հիշյալ լատիներեն, հունարեն և այլ բառերը, ունի s-ով և առանց s-ի ձևեր. առանց s-ի ձևերից ստացվել են հայերեն ֆեբել, ֆոբել < \*qer

(հմմտ. սանսկրիտ *kr̥ṣāti* «սպանել, վիրավորել, ոչնչացնել», հունարեն *κρίω* «կտրել, ձևել, մկրատել, խուզել», հին բարձր գերմաներեն *sceran* կտրել և այլն), քերթել, քերծել <\**qeret* (հմմտ. լիտվաներեն *kertú* «կտրատել», սանսկրիտ *kr̥ntati* «կտրել», ալբաներեն *kéḿ* «ածիլել» և այլն), քարք «արքայիկ օձ» <\**gerep* (հմմտ. հունարեն *καρχαρις* «կարիճ» բառերը: *S*-ով արմատից է ստացվել հայերեն շերա բառը, որի նախածին է \**sqerd*. ցեղակից լեզուներում այս ձևից անհնք միջին բարձր գերմաներեն *scherze, scherzel* «կտոր», հին սաքսոներեն *kurt*, հին բարձր գերմաներեն *kurz*, իսլանդերեն *kotr* «կարճ» (վերջին երկքը առանց *S*-ի ձևից), միջին բարձր գերմաներեն *schranz* «պատառ, շերտ, կտոր» և այլն: Այսպիսով՝ շերա բառը կապվում է քերել, քերթել, քերծել, քարք բառերի հետ և ծագում հնդեվրոպական \**sqer, qer* արմատի *S*-ով ձևից, մինչդեռ մյուսները ստաջանում են առանց *S*-ի ձևից՝ տարբեր աճականներով

### 83. Շ Կ Ա Ա

Այս արմատն առանձին, իբրև բառ, գործածված է, ըստ նշԲ-ի, *Խորենացու «Յաղագս պիտոյից»* գրքում՝ «նետի սուր ծայրը, սլաք» իմաստով: Դրանից են կազմվել՝ ա) շկահել. ունի մի քանի գործածություններ. նշԲ բառը բացատրում է՝ «շառաչել կամ ձգել շաչմամբ, ձգել, նշառակ ձեռամբ նշանակել կամ վարել զիմն»: բ) Շկահիւն «աղեղների հանած ձայնը, աղեղի շառաչումն՝ նետ արձակելուց». գործածված է Աստվածաշնչում (Բ. Մակ.) և «Ս. Եփրեմի մատենագրութեանց» մեջ (Բ. հատ., էջ 318):

Ծագում է իրանական *Šikāften* «ճեղքել» բառից. հիմքըն է *Šikaf*, որ ըստ մեր շկահ <\*շիկահ բառի «սլաք, նետի սուր ծայր» իմաստի պետք է նշանակած լինի «ճեղքող, պատուող» (գործիք): Ը. Բեյլին, ստուգաբանելով նշկահեմ <\*նիշկահեմ բառը, հիշում է խոթանյան սակերենի *naškasta*,



naškhasta- «ելավ, բարձրացավ» բառը, որի արմատն է kah-, khah-, վկայված եզ. 3-րդ դեմքի kaittä «խփում է, հարվածում է» ձևով:

#### 84. ՊԱՂ, ՊԱՂՊԱՋ, ԳՎՌ. ԲՈՒՂ, ՊՈՒՂ (<ԲՈՂ)

Մեղրու բարբառում գործածվում է բուղ<sup>30</sup> բառը, որ նշանակում է «1. կայծ, 2. փայլ, ցուրք»: Նկատի ունենալով, որ այդ բարբառում միավանկ բառերի մեջ ու ձայնավորը ըստացվում է հին հայերենի ու-ից (ինչպես՝ խուտ <խոտ, թուր <թոք են), ըստ որում հին հայերենի ու-ն էլ դառնում է օ (ինչպես՝ սոր <սուր, ծոռ <ծուռ են), պետք է հիշյալ բառի հնագույն ձևը համարել բաղ: Այս բառը ծագում է հնիս. \*bhel- (\*bhal-, \*bhəl, \*bhol) արմատից, որի ցեղակից ձևերից կարելի է հիշել սանս. bhāla «1. փայլ, 2. ճակատ», հն. 𐎧𐎠𐎢𐎡𐎴 «փայլուն, շողշողուն, սպիտակ», 𐎧𐎠𐎢𐎡𐎴 «լուսավոր, սպիտակ», լատ. fullo «հագուստ մաքրող», սոս. белый «սպիտակ», белым «աչքի փառ, լսան», անգլ.-սուաբ. baël «բուց, կրակ, փայտակոչյա» և ալլն (Wp, II, 174—176, Pok. I, 118—120). Նույն հնդեվրոպական արմատից է ծագում նաև հայերեն բաղ «մշուշ, մեղ» բառը, որի մասին մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, Ա., էջ 884—885:

Մեղրու բարբառի բուղ բառի զուգահեռն է Ղարաբաղի բարբառի պող «կարմիր կրակ կտրած ածուխ»<sup>31</sup>, որի մեջ հին ձայնեղ բ-ն օրինաչափորեն դարձել է պ:

Բարբառային այս բառերը անկասկած զուգահեռ բող ձևն են ներկայացնում հին գրաբարյան պաղ արմատի, որ առանձին չի գործածվել, բայց որից ունենք պաղապանձ, պաղապանձական «պանծափայլ, սառնատեսակ, վճիտ, հստակ, պսպղուն» և կրկնությամբ՝ պաղպաջ «1. փայլիւն, փայլ,

<sup>30</sup> Չպետք է շփոթել թուրքերենից փոխառված և ինչպես Մեղրու, այնպես էլ շատ ուրիշ բարբառներում գործածվող բուղ/բող «գոլորշի» բառի հետ:

<sup>31</sup> Հ. Աճառյան, Գավառական բառարան, էջ 919:

ցուք. 2. փայլուն», պաղպաջել «փայլել, փողփողալ, շողշողալ», պաղպաջումն, պաղպաջուն, պաղպաջունք «զարդարուն գահավորակ, դեփսպակ»: Կրկնավոր կազմությամբ այս բառերը ավանդած են մեսրոպյան շրջանից<sup>32</sup>. ՆՃԲ տալիս է պաղպաջել բառի նաև բաղրաջել ձևը, որ անշուշտ կարելի է համարել բարբառային ձև՝ պ > բ փոփոխությամբ. տվյալ դեպքում մեզ համար ստուգաբանական տեսակետից ավելի հարմար կլիներ դա համարել հնում գոյություն ունեցած զուգահեռ ձև, բայց հաստատուն կովան շունենալով, դիտում ենք որպես հետին՝ ուշ շրջանի բարբառային ձև:

Իմաստով պաղ արմատը և կրկնավոր պաղպաջ բառը միանգամայն համընկնում են Մեղրու և Ղարաբաղի բարբառների բոլ. պօղ բառերին: Ըստ այսմ, գրաբարյան պաղ արմատը ծագում է Հնիս. նույն \*bhel- արմատի \*bəl ձևից, որոնց նախնական արմատն է \*bu, \*bhu (WP, II, 115). սրա \*bhu, \*bho ձևից են հայերեն բուք, բով, բովել: Այսպիսով, հայերենում ունենք բող և պաղ ձևերը, որոնք նույնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին ունեն պալ-ար, բող, բողկ, բոլ-որ ևն: Վերջապես, նույն արմատի ք և քի նախահնչյուններով ձևերից ունենք հայերենում՝ փու-ք, փչել, փայլ, փաղ-փիմ, փաղ-փաղիմ, փողփողիմ ևն: Այս բոլոր տարբերակները հնդեվրոպական նախալեզվում ծագած են համարվում նախնական \*bu, \*bhu արմատից (WP, II, 115), որի սկզբնական իմաստն է եղել. «փչել, փչելու ձայն հանել», ապա՝ «փչելով բորբոքել, արծարծել» և հետո՝ «վառել, փայլել» և այլն: Հր. Աճառյանը, ստուգաբանելով բուք բառը, գրում է, թե «հայերենի մեջ զանազանվում են \*pu-, \*peu- > քալ, \*phu- > փուք, փչել և bhu- > բուք, միայն \*bu- ձևը շունի իր ներկայացուցիչը»<sup>33</sup>. Մեր այս ստուգաբանությունը գրաբարյան պաղ, պաղպաջել և գվ. բող, պօղ < բող բառերի, երևան է հանում մի կողմից դարձյալ \*bhu-, \*bho-, մյուս կողմից՝ \*bu-, \*ba- ձևի օրինական ներկայացուցիչը:

<sup>32</sup> Տե՛ս ՆՃԲ, II, էջ 590:

<sup>33</sup> «Լրմատական բառարան», է, էջ 109:

Այս բառը համարելով իրանական փոխառություն՝ Հր. Աճառյանը գրում է «հայկ. "paragaud- հոմանիշից, որ թեև գործածված չէ իրանյան գրականության մեջ, բայց նույնն է ավանդում Հեսիթիոս՝ քաջալոյճ (քաջալոտճ?) ձևով. քաջալոյճ չլւտօն քարձ քարձուզ վերարկու ըստ պարթևացի)». նույնը հունական վերջավորությունումը՝ քաջալոտճու: Իրանյանից են փոխառյալ նաև լատ. paragauda, paragaudis, paragaudius «զգեստի վրա մետաքսի կամ ոսկի բանվածք. 2 ոսկեհուս զգեստ», ասոր. մանդ. և թալմ. paragōd? «վերարկա, վարագույր», արաբ. بروجيد burjud «հաստ կապերտ, թանձր ա սուրխ», վրաց. პარაგავჯლოტი պարագավլատի «руза. հանդերձ, հրկար զգեստ»: Այնուհետև ստուգաբանությունների պատմության մեջ գրում է. Lag, Arm. Stud § 1863 մեկնում է գօտի բառով, իբր «շուրջը գոտիով», իսկ էջ 182 լտ. և թալմ. բառերի հետ: Տերվ. Altarm, 80 և նախալ. 92, 107, պար «շուրջը» մասնիկով գօտի բառից: ...Հիւրջ. տալիս է վերի մեկնությունը, բայց առանց հակառակելու հիշում է նաև պար-գօտի մեկնությունը, ինչ որ չի կարող ուղիղ լինել, որովհետև նախ առանց բացատրության է մնում գօտի բառի վերջաձայնի անկումը և երկրորդ՝ պար մասնիկի այսպիսի գործածությունը հետին է» (Արմ., 5, 969—971):

Հր. Աճառյանի վերջին երկու փաստարկները ընդունելի չեն. ինչպես գիտենք, նա գօտի բառի մեջ տեսնում էր -տի բաղադրիչը (գաւ-տի), այդ պատճառով էլ ստիպված է ենթադրել ի վերջաձայնի անբացատրելի անկում. սակայն ինչպես մենք ցույց ենք տվել, գաւտի բարդ բառ չէ, այլ ածանցավոր (գաւտ-ի), որ ծագում է հնիս. gha-g' > հայ. գած և հնիս. ghaud- > հայ. գաւտ արմատից և նախապես նշանակել է «պատող, պարուրող, ծածկող»: Ըստ այսմ, պարեգօտ նշանակել է «շուրջը պատող, շորս կողմից պատող», ինչպես որ ունենք շուրջառ բառը: Սրա համաձայն պետք է ամենից առաջ վերանայել պարեգօտ բառի իմաստի բացատրու-

թյունը: նձԲ և մյուս բառարանները, կապելով գօտի բառի հետ, բացատրել են իբր «գօտի ունեցող, գօտիով կապվող վերարկու»: Սակայն բառս նշանակել է պարզապես վերարկու, որ ցույց է տալիս նաև Հեսիբիոսի վկայությունը (վերարկու ըստ պարթևաց): Ինչ վերաբերում է այն փաստարկին, թե պար-մասնիկի այսպիսի գործածությունը հետին է, ապա դա էլ հիմնավոր չէ. պարեգօտ նախածանցավոր (պար-գօտի) բառ չէ, որովհետև այդ դեպքում պետք է ունենար պարագօտ (հմմտ. պարագիծ, պարագօտել «մեջքին գօտի կապել») կամ էլ՝ պարգօտ (առանց հոգակապի, ինչպես՝ պարբեկություն, պարբերել և այլն), այլ բարդ բառ (պարե-գօտ), ըստ որում ենթադրում է պար բառի հնագույն բնավոր ձևը՝ պարե (հմմտ. հնգե-տասան) կամ պարի (հմմտ. երկի-հարեր > երկիրարեր > երկերեր), որով բարդության՝ նախաձևը կարող էր լինել կամ ուղղակի պարեգօտ, կամ էլ՝ պարի-ագօտ > պարեգօտ:

Իրանական փոխառություն համարելը երևան է հանում մի քանի դժվարություններ. ամենից առաջ՝ պահլավերենը հին պարսկերենի երկբարբառները վերածել էր պարզ ձայնավորների, ուստի և՛ պահլավերենում չպետք է լիներ paragaud-, au երկբարբառով ձև. իսկ եթե այդ ձևը վերագրենք հին պարսկերենին, ապա au երկբարբառի դիմաց հայերենը պետք է ունենար ոյ և ոչ աւ (հմմտ. հին պրսկ. gauša (gaōša) > հայ. գոյշ (գգոյշ), պհլ. goš, հին պրսկ. auja (aoja) > հայ. ոյժ, պհլ. օշ, հին պրսկ. paiti-rauka (raoka) > հայ. պատռոյգ, պհլ. patrok և այլն, իսկ d(δ)-ի դիմաց էլ՝ ր (հմմտ. frapaðak- > հրապարակ, nivaeda > նուէր ևն): Ըստ այսմ իրանական paragaud ձևը պետք է տար հայերեն պարագոյր, ինչպես որ ունենք վարագոյր բառը: Լյս բառն առանձնակի նշանակություն ունի մեր կողմից քննարկվող խնդրի համար: Ստուգաբանելով հայերենի վարագոյր բառը, է. Բենվենիստը գրում է. «Հայ. վարագոյր-ը մենք հանգեցնում ենք \*varagōd-ին՝ ստացված մի հին բարդությունից՝ \*varagauda. երկրորդ բաղադրիչը՝ -gauda ծանոթ



է պարսկա-լատին paragauda բառի մեջ, արամ. Թալմ. paragaða «վարագոյր» և միջին իրանական բաղմամբիվ ձևերով. սոգդ. γ'wδ, plγ'wδ «ծածկոց», հմմտ. օս. агуd «լզգեստ»: Բենվենիստի այս ստուգաբանությունը, ամենից առաջ, հաստատվում է մեր այն պնդումը, որ իրանական paragauda-ի դիմաց հայերենը պետք է ունենար պարագոյր. այնուհետև, այդ ստուգաբանության համաձայն, gaud բառը հին իրանական լեզուներից այլուստ չի վկայվում, բացի paragauda բառից: Մա մեզ հիմք է տալիս ընդունելու, որ ինչպես paragauda բառն ամբողջությամբ, այնպես էլ նրա gauda բաղադրիչն իբրև առանձին բառ հին իրանականը վերցրել է հայերենից: Մեր ասածը հաստատող մի փաստարկ էլ կա. մեր պարեգոս-ը իրանական paragauda-ից ենթադրելու դեպքում անբացատրելի է մնում մեջին և ձայնավորը իրանական ա-ի փոխարեն (հմմտ. \*varagauda > վարագոյր), մինչդեռ հայերենի Ե-ի դիմաց իրանական a-ն բացատրվում է իրանական հին լեզուներին հատուկ e > a հնչյունափոխությամբ, իսկ հայերենի Ե-ն բացատրվում է հենց հայերենով: Պարեգոս բառը բուն հայկական բարդություն է՝ պարե-գոս կամ պարի-ա-գոս, ինչպես բացատրվեց վերը: Հեսիքիոսի վկայությունը չի հակասում մեր բացատրությանը, այլ, ընդհակառակը, հաստատում է. այդ վկայության մեջ ասվում է՝ «վերարկու ըստ պարթևաց», այսինքն՝ այդ վկայությունը վերաբերում է պարթևական շրջանին, իսկ փոխառությունը հայերենից կատարվել է շատ վաղ ժամանակներում, այն դարաշրջանում, երբ իրանական լեզուների մեջ գործում էր e > a հնչյունափոխությունը, և երբ նախահայկական դ-ն դեռևս ա չէր դարձել, որի պատճառով էլ իրանականն ունի gaud (և ոչ gaut):

Այսպիսով, ինչպես paragauda բառը, այնպես էլ նրա gauda բաղադրիչը իրանական փոխառություն է հայերենից. այդ փոխառյալ բառից իրանականում կազմվել է varagauda բառը, որից է հայկական վարագոյր-ը: Այստեղ էլ ունենր այնպիսի երևույթ, ինչպես որ, առնելով իրանական զով

«գովասանք» բառը, հայերենը կազմել է գովասան և տվել իրանականին, որ պահլավերենում դառնալով *gōsan*, կրկին վերադարձել է մեզ՝ զուսան ձևով: Հունական, լատինական և մյուս լեզուների *paragaud-* բառի համար դժվար է որոշակի բան ասել՝ հայերենի՞ց է փոխառվել ուղղակի, թե իրանականից՝ միջնորդաբար. վրացերենը ենթադրում է իրանականը՝ իր ա ձայնավորով (պարագավլատի). թերևս նույն հատկանիշով էլ կարելի լինի ասել, թե հույն և լատին բառերը ևս իրանականից են: Այսպիսով՝ *պարեգոս* բառը դուրս է գալիս իրանական փոխառությունների շարքից, դառնում բնիկ հայկական բառ՝ իբրև հնագույն հայկական բարդություն, իսկ *gauða* և *paragauða* բառերը՝ իրանական փոխառություններ հայերենից:

## 86. Ս Տ Ա Ն Ա Կ

Այս բառն «Արմատական բառարանում» ենթադրաբար իրանական փոխառություն է համարվել՝ կապվելով պհլ-*vistaxv*. Ավեստ, *vistaka* (>հայ. վստահ) բառերի հետ, որոնք կազմված են *stak* «ղեմ կանգնել» արմատից: Այս ենթադրությունը հիմք են ծառայել —ակ վերջահար կապակցությունը, որ իրանական փոխառություններին է հատուկ, բառի ըստահակ ավանդական ընթերցանությունը, և տարբեր նշանակություններից նախնականն ու հիմնականը «ըմբոստ, հանդուզն» իմաստը համարելը: Հայկազյան բառարանում բերված են «անսաստ, ստամբակ, անկարգ, անխրատ, անառակ, խռովարար, խեռ, ըմբոստ, հանդուզն, խիստ» նշանակությունները: Օրինակների մեծագույն մասին ավելի հարմար է «անկարգ, մոլար, անխրատ» իմաստը, ինչպես՝ «խրատեցէք զստահակս» (ա Թես, է, 14), «Ստահակք են, որք արտաքոյ կամաց աստուծոյ և առաջնորդաց գործս գարծեն» (Ոսկ., ա Թես.), «Անուամունքս և անխրատքս և ստահակք» (Փիլ., ել., բ, 34) և այլն: Բառի նախնական իմաստը պետք է համարել «մոլար, մոլի, ստամետ», ըստ այսմ, կհանվի արմատական բառերի շարքից և կդասվի բարդությունների շար-

քում, կազմված սուտ-հակ արմատներից, որ նախապես պետք է նշանակեր ստույցյան հակված, ստույցյան հակում ունեցող, մոլար: Համապատասխանաբար ավանդական ընթերցանությունը պետք է փոխարինել սրտահուկ ընթերցանությամբ:

## 87. Ս Տ Ի / Ս Տ Ո Ի

Հին մատենագրության մեջ ստի բառը, ըստ Հր. Աճառյանի, դործածվել է միայն մեկ անգամ՝ «կարգ, պատշաճություն» իմաստներով: Դրանից է աճստի «անկարգ, անհնազանդ, ստահակ». ստու ձևը առանձին չի ավանդվել. դործածվել է միայն մեկ անգամ՝ աճստու «անկարգ, անպատշաճ, անճոռնի» իմաստով՝ Բարսեղի վեցօրեից արաչություն ճառերի թարգմանության մեջ (տպագիրն ունի անյօղ, էջաստորի ծանոթության մեջ՝ աճօտու, որ Հ. Ա. վարդանյանը ուղղում է աճստու, և Աճառյանն էլ ընդունում է): Երկու ձևերն էլ համապատասխանորեն ծագում են հնիս. stā-/ste- «կանգնել, դնել» արմատի stī (<stāi) և stū (<stāu) աճած ձևերից: Հնդեվրոպական այս արմատը մեծ զարգացում է կրել թե՛ ձևական և թե՛ իմաստային տեսակետից. այդ արմատից է հայերեն ստանալ, որի մասին մանրամասնորեն տե՛ս Արմ. 6, 421: Մեր ստի/ստու բառի իմաստի համար համեմատելի են ռուս. при-стойный, «պատշաճ, վայելուկ. կարգին», հուն. σέλια «կարգի կանոնի դնել, ոտքի վրա կանգնեցնել, պատրաստել, հանդերձել, հագցնել», ռումին.-իտալ. assetare «կարգի բերել», հուն. ἰξίω: «իրավունք, օրենք», գոթ. staua, í «ատյան, դատ, դատաստան, օրենք» և այլն:

## 88. Վ Ա Հ Ր

Այս բառը, որ Հ. Աճառյանը բերում է «Արմատական բառարանում», առնելով Ներսեսովիչի լատին-հայ բառարանից, լայնորեն տարածված է բարբառներում «թարախ» ի-

մաստով: Ծագում է հնիւ. \*(s) uer «թարախոտել, թարախ բռնել» արմատից, որի ժառանգներն են. Ավեստայի xvara «վերք», հին բարձր գերմ. sweran «ցավ զգալ, ուռչել, թարախոտել», swero «մարմնական ցավ, այտուց, ուռուցք» և ալլն (WP, II, 329, Pok., I, 1050): Հայերեն բառը ծագում է նույն արմատի առանց s-ի՝ yarah ձևից, որի զուգահեռն է հին բարձր գերմ. warah «թարախ»: Հայերենի նախածեր պետք է լինի վարհ, որ հետո անդամորոշյամբ գարծել է վահր, ինչպես՝ բիրհ > բիրք և բիրել (հմմտ. գվռ. բիրք > բիրք): Կասկած է հարուցում, սակայն, բառակազմի w > հալ. վ (օրինաչափն է գ):

### 89. Տ Ա Ղ, Տ Ո Ղ

Տաղ բառը ավանդված է հետմերոպյան շրջանի մատենագրությամբ (Փիլոն, Պղատոնի տրամախօսութիւնք, Թրակացու «Արուեստ քերականին» և այլն) և նշանակում է «երգ, քերթված, ոտանավոր». սակայն նախապես նշանակել է նաև «խոսք, բան», որ պահպանված է ստատաղ «ստախոս» բառի մեջ (գործածել է Լամբրոնացին «Գովեստ ներբողական յաղագս վարուց... ներսիսի Կլայեցոյ» գործում, տպված Շնորհալու «Թուղթ ընդհանրականում», էջմիածին, 1865, էջ 461—497) և որ նարեկացու բառերի մեկնիչը բացատրում է «բան» (Տաղն՝ բան ասի):

Առաջարկված ստուգաբանությունները մերժված են Հյուբշմանի և Աճառյանի կողմից. Շեֆտելովիցը միացնում է պարսկերենից փոխառված տաղ «խարան» բառին և երկուսն էլ համարելով բնիկ՝ համեմատում լատիներեն dolāre «շինել, կերտել», հունարեն δαιδάλλω «ճարտարությամբ շինել, ὀδῆτος «գրատախտակ» բառերին ու հանգեցնում հնիւ. \*del- «ճեղքել, կտրել, արվեստով շինել» արմատին. այս ստուգաբանությունն ընդունում է Պոկոռնին (I, էջ 194), որ, սակայն, իրավացիորեն մերժում է Աճառյանը՝ իմաստի անհամապատասխանության պատճառով: Թե՛ նախնական իմաստով («բան, խոսք»), և թե՛ նրա հետագա զարգացմամբ



կապվում է հին հյուսիսային tal չ. «հաշվում, համրանք, խոսք», անգլոսաքսոններեն tael չ., «թվարկում, շարք», հին բարձր գերմաներեն zala «թիվ, թվարկում, լեզու», անգլոսաքսոններեն tellan (=անգլ. tell) «պատմել», հունարեններեն taal «լեզու, խոսք», հունարեն  $\tau\epsilon\lambda\lambda\omicron\varsigma$  «խորամանկություն», լատիներեն dolus, օսկերեն dolom, dolud (հյգ. և գործ. հոլովներ) «խորամանկություն, խաբեբայություն», լատիներեն dolōsus «խորամանկ», հունարեն  $\delta\omicron\lambda\omicron\varsigma$  «խորամանկել, խաբել» և այլ բառերի հետ և ծագում է հնիւ. \*del «նկատի ունենալ, նպատակ դնել, վնասել, հաշվել, պատմել» (Պոլ. I, 193) արմատից: Որ հաշվել իմաստից կարող են ածանցվել խոսել, պատմել, երգել իմաստները, հաստատվում է բազմաթիվ տվյալներով, որոնցից կարելի է հիշել հունարեն  $\lambda\acute{\epsilon}\gamma\omega$  «ասել, պատմել», բայց և՛ «թվել, համրել», լատիներեն computare «թվել, հաշվել» և «ծանր արտասանել», ֆրանսերեն compter «թվել, համրել» և conter «պատմել», compte «հաշիվ» և conte «վեպ» և, վերջապես, լավագույնը այս առիթով՝ նույն \*del արմատից՝ գերմաներեն zahl «թիվ» և erzählen «պատմել», անգլերեն to tell «թվել, հաշվել, ասել, պատմել»: Ըստ այսմ՝ հայերենում տաղ նախապես նշանակել է «խոսք, պատմություն», հետո միայն՝ ստացել «երգ, ոտանավոր» իմաստը:

Նույն արմատի հետ է կապվում նաև հայերեն տող բառը: Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 6, էջ 941—942) համեմատելով վրացերեն Երևո tolo «հավասար, նրման, հասակակից», Երևո toloba «հասակակցություն», Երևո toleba «բաղդատել, Երևո tolaoba «ձկների կամ օձերի գագավորություն», Երևո toltoli «հավասար, հասակակցից», Երևո utolo «անհավասար» բառերի հետ, գտնում է, որ իմաստների «այսպիսի երանգները թույլ չեն տալիս ընդունելու, թե մին մյուսից (հայերեն և վրացերեն— է. Ա.) փոխառյալ է, այլ երկուսն էլ փոխառյալ են միևնույն աղբյուրից» («Արմատական բառարան», հ. 6, էջ 942) և դրանից էլ ենթադրում է, որ տող բառը «խաղչյան շրջանի

